Վարդգես Պետրոսյան

# ՎԵՐՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Սկիզբ

Գարնանային սովորական առավոտ էր: Երկինքը մաքուր էր, բաց կապույտ մանուշակների գույնի: Կարելի էր հուսալ արևոտ, զնգուն ևս մի օր. . .

Բայց երկնքի այն փոքրիկ հատվածում (երևի մի հազար, երկու հազար քառակուսի մետր), որի տակ Մովսես Խորենացու անվան դպրոցն էր, ահա այդ հատվածում՝ նույն առավոտյան մուգ թանաքագույն ամպեր կատակվեցին, կայծակ ճայթեց և, իհարկե, տեղաց կարկուտ: Այս ամենն, իհարկե, փոխաբերական առումով, իրականում դպրոցի օրն էլ սկսկվեց սովորականի պես, բայց երկրորդ, մանավանդ երրորդ դասամիջոցին միջանցքներում, դասասենյակներում միջանցիկ քամու պես սկսեցին վզվզալ զանազան պատմություններ՝ դրանց հավաքական անունը դպրոցական բանահյուսություն է: Այդ բանահյուսության ժանրերից են՝ երգը, սրամտությունը, անեկդոտը և, իհարկե, առասպելը:

Ըստ առասպելի հիմնական տարբերակի՝ նախորդ օրը, դասերից հետո, 10րդ «բ» դասարանում տղաների մի խումբ կատաղի «կայֆ» է արել, որի գագաթնակետը եղել է Մարի Մելիքյանի պարը սեղանի վրա: Պարելու հետ միասին, ինչպես հաստատում է առասպելը, Մարին աստիճանաբար ազատվել է իր բոլոր, հասկանու՞մ եք, բոլոր զգեստներից: Եվ ահա այն ճգնաժամային պահին, երբ Մարին պարելիս է եղել իր նախամայր Եվայի հանդերձանքով, դասարանի դուռը անսպասելիորեն բացել է քիմիայի դասատու Սոնա Միքայելյանը:

Այստեղ առասպելը ճյուղավորվում է: Ըստ մի տարբերակի՝ քիմիայի ուսուցչուհուն տեսնելով, աղաները դուրս են փախել պատուհաններից (թեպետ 10-րդ «բ» դասարանը երկրորդ հարկում է), և Մարին մնացել է մերկ-մենակ՝ սեղանի վրա: Մագնիտաֆոնը, բանից անտեղյակ, շարունակել է իր կատաղի երգը, և Սոնա Միքայելյանը, չկարողանալով լռեցնել անամոթին, պարզապես վերցրել և հատակին է խփել անմեղ գործիքը, որն, ի դեպ, արժե երեք հարյուր հիսուն ռուբլի նոր դրամով: Ըստ երկրորդ տարբերակի՝ դասատուին տեսնելով, տղաները (նրանք հինգ, թե յոթ

հոգի են եղել) անմիջապես կենդանի վարագույր են դարձել, ծածկել Մարիին, որը, մի քանի վայրկյան չանցած, հայտնվել է համարյա լրիվ հագնված և քաղաքավարի դիմել է քիմիայի ուսուցչին. «Ձեզ, ինչ է, դուր չի՞ գալիս այս երաժշտությունը»: Եվ իր ձեռքով՝ հանգիստ, քաղաքավարի անջատել է մագնիտաֆոնը:

Շարունակությունը նույնպես ճյուղավորություններ ուներ: Ըստ առաջին տարբերակի՝ քիմիայի ուսուցչուհին սարսափելի զայրացել է, զանազան անդուրեկան խոսքեր ասել աշակերտների հասցեին: Տղաները վիրավորանքից քարացել են, մի՞թե չեն կարող երաժշտություն լսել, այն էլ դասերից հետո: Դասատուն նրանց ստախոս և վախկոտ է անվանել, ճչացել է, թե ինքը իր աչքերով տեսավ, որ Մարին բոլորովին մերկ էր. . .  Տղաները և Մարին այս անգամ քարացել են զարմանքից և վիրավորանքից, իսկ նրանցից մեկը՝ Արմեն Գարասեֆերյանը, ի միջի այլոց նկատել է, որ ինքը չամուսնացած մորաքույր ունի, որի աչքին, երբ նա նման ռիթմեր է լսում, անմիջապես երևում են մերկ, երիտասարդ և անպայման գեղեցիկ աղջիկներ: Այս կծու խոսքերից հետո քիմիայի դասատուն (որն, ի դեպ, ամուսնացած չէ՝ դա հանկարծ հիշեցին ամենքը) շրխկացնում է դուռը և գնում, ոչ, ուղղակի վազում դիրեկտորի առանձնասենյակի ուղղությամբ: Պատմում են նաև ուրիշ շարունակություն՝ դասատուն պնդում է, որ աշակերտները անմիջապես պետք է ներկայանան դիրեկտորին, այս պահանջին Մարին պատասխանում է, թե քիչ առաջ ընկեր Սահակ Վանունին մեքենա նստեց և գնաց, հավանորեն տուն և, միաժամանակ, տեղյակ է պահում, որ իրենց դասղեկը ոչ թե. . .  այլ Արամ Սանոյանն էր, որն, ինչպես ամենքը գիտեն, երկու շաբաթ առաջ հանկարծամահ եղավ:

Այնուհետև աշակերտները հանգիստ, անշտապ՝ իբր հավաքել են նստարանների վրա անփույթ թափթփված գրքերը, տետրերը և երգելով, այո, այո, երգելով գնացել են փողոց, իսկ քիմիայի դասատուն, որն, ի դեպ, 10րդ «բ» դասարանում դասեր չունի, շփոթված, զայրացած մտել է ուսուցչանոց, այնտեղից՝ դիրեկտորի առանձնասենյակը, հավանորեն, Սահակ Վանունուն զանգահարելու. . .

Քարտուղարուհի Սոֆիկ Լորեցյանը կամ՝ Սոֆի Լորենը, ինչպես վաղուց նրան կնքել են տասներորդցիները, այդ պահին, բնականաբար, նստած է եղել իր պտտվող բազկաթոռին: Բնականաբար, որովհետև՝ նախ նրա աշխատանքը ժամը 4֊ին է վերջանում և, բացի դրանից, շատ շուտով սկսվելու են ընդունելության քննությունները, և նա հինգերորդ անգամ մտադիր է բախտը վարձել համալսարանի բանասիրական, իրավաբանական, կենսաբանական կամ որևէ այլ ֆակուլտետում:

Քարտուղարուհու հեռախոսը, բնականաբար, դիրեկտորի հեռախոսի հետ զուգահեռ է, բայց ի տարբերություն ուրիշների, նրա հեռախոսը չի անջատվում, երբ խոսում են մյուս՝ գլխավոր հեռախոսով։ Այո, ի միջի այլոց։ Այսպես, ուրեմն, մի քանի րոպե անց, Սոֆի Լորենը տագնապած մտնում է դիրեկտորի առանձնասենյակը և քիմիայի դասատուին գտնում բազմոցի վրա, ուշագնաց վիճակում։ Սոֆի Լորենը, կեցցես աղջիկ, իրեն չի կորցնում, ջուր և վալիդոլ է առաջարկում դասատուին, որը սակայն մերժում է և մեկը, և մյուսը։ Բայց որովհետև դասատուի սրտի զարկերը դրանից հետո էլ չեն կարգավորվում, քարտուղարուհին ստիպված է լինում դուրս գալ և իր հեռախոսով զանգահարել (միամի՜տ աղջիկ) շտապ օգնություն, որը, հասկանալի է, չի գալիս։ Այս առիթով շատերը վերհիշեցին, որ անցյալ տարի, երբ դպրոցի պահակը՝ Սանասար քեռին, սրտի նոպա ունեցավ, շտապ օգնությունը հասավ երեք ժամ հետո, երբ Սանասար քեռին արդեն տուն էր հասել և հեռուստացույցով ֆուտբոլ էր նայում։

Եվ այլն, և այլն։

Ահա այսպիսի մռայլ նախերգանքով սկսվեց առավոտը Մովսես Խորենացու անվան դպրոցում, գարնանային սովորական մի օր։

Իրարանցում

— Ամեն բան տեղն էր, մեղ միայն ստրիպտիզն էր պակասում,— մռայլ ասաց Սահակ Վանունին,— ժողկրթբաժնի բերանին ծամոն ենք դառնալու։ Դու իսկապե՞ս տեսար, թե՞ աչքիդ է երևացել. . .

— Ցավոք սրտի, իսկապես,— սեղանին դեռ դրված էր Սոֆի Լորենի երեկ բերած ջուրը և, չգիտես ինչու, Սոնա Միքայելյանը վերցրեց բաժակը և սկսեց կում-կում խմել,— ցավոք սրտի, տեսա, ընկեր Վանունի։ Ես գիտեմ, որ դուք կգերադասեիք, որ տեսած չլինեի. . .

Դիրեկտորը հոգնած նայեց ուսուցչուհուն, նա միշտ բարձր էր գնահատում Սոնա Միքայելյանին, որ քիմիայի լավագույն ուսուցչուհին էր, դպրոցական երեկոների շունչն ու ոգին և, պլյո՛ւս՝ լուսավորության մինիստրի տեղակալներից մեկի հորաքրոջ աղջիկը։ Վանունին երկար տարիներ մաթեմատիկա էր դասավանդել (ցածր դասարաններում), և այդ տարիներից էր մնացել «պլյուս» բառը, դա ամենքը

գիտեին, թեպետ ութերորդ տարին է, ինչ նա չի դասավանդում․ դիրեկտորական բեռը գնալով ծանրանում էր նրա հոգնատանջ ուսերին։

— Շատ տհաճ դեպք է,— ասաց նա ի վերջո,— պլյուս՝ շուտով սկսվում են քննությունները։ Վեց հոգի միանգամից․․․ Ա՜յ քեզ սերունդ։

— Համարեք, որ ես ձեզ երեկ զանգ չեմ տվել։— Սառը ընդմիջեց քիմիայի ուսուցչուհին։— Ես կարո՞ղ եմ գնալ։

— Ինձ սխալ հասկացաք,— անմիջապես «դուք»֊ի անցավ Վանունին,— նախ արդեն շատերը գիտեն, թե ինչ է եղել, չգիտեմ որտեղից, և պլյուս,— Վանունին կուլ տվեց բարդ ստորադասական երկու նախադասություն․ «Պլյուս այն, որ մեկ է, ասելու ես քեռուդ տղային, որ մինիստրի տեղակալներից է։ Ճիշտ է, շինարարության գծով, բայց տեղակալը տեղակալ է, և նա էլ, պարզ է, որ կպատմի նրան, ում տեղակալն է»։ Դրա փոխարեն շարունակեց,— ․․․ պլյուս՝ դասարանը դասղեկ էլ չունի։ Երևի դրանց դարդից ինֆարկտ ստացավ խեղճ Սանոյանը։— Վանունին ձգվեց, ուղղեց փողկապը, ձեռքը տարավ հեռախոսին,— երևի պետք է մինիստրին տեղյակ պահել․․․ Սովորական դեպք չէ։

— Ի՞նչ կարիք կա,— ընդմիջեց Սոնա Միքայելյանը,— դա մեր ներքին գործն է,— դիրեկտորի ձեռքը մի քանի վայրկյան մնաց օդում, երևի ուսուցչուհուն դուր չեկավ, որ Վանունին ինքն առաջինն է ուզում հայտնել մինիստրինին,— գուցե կանչեք այդ․․․— ուսուցչուհին իր հերթին կուլ տվեց մի քանի դառը և կծու ածական,— անպիտաններին, հարկավոր է պարզել, թե ով է եղել նախաձեռնողը, մի խոսքով՝ մանկավարժական նուրբ խնդիր է։ Ես, բնականաբար, չեմ խառնվի, ոչ նրանց դասատուն եմ, ոչ դասղեկը։

Սահակ Վանունին՝ արտաքնապես դժգոհ, բայց ներքնապես հանգստացած, ձեռքը ետ քաշեց խոսափողից, մեկ է՝ եթե զանգահարելու էլ լիներ, միանգամից հո չէի՞ն միացնի, կարևորն էր ցույց տալ, որ ինքը նպատակ չունի, ինչպես ասում են, աղբը թողնել խրճիթում և չի վախենում ճշմարտությունից, որքան էլ դա դառը լինի՝ դա թող իմանան բոլորը և, մանավանդ, օրիորդ Սոնա Միքայելյանը։

— Ես հիմա կկանչեմ նրանց,— ասաց իր պաշտոնական ձայնով,– ձեզ խնդրում եմ մնալ, որովհետև, ի վերջո, դուք եք միակ ականատեսը։ Գուցե հարկ լինի հենց այսօր մանկխորհուրդ դումարել։

Վահան Մամյանն այդ օրը արթնացավ մի տեսակ հոգնած, գլխացավով։ Նա երկար սափրվում էր, հետո մանրմասն արդուկեց կապույտ վերնաշապիկը, բավական, կասկածանքով ընտրեց փողկապը, հետո սուրճ եփեց, որը շատ դառը ստացվեց։ Ուզեց նախաճաշել, բացեց սառնարանը, նայեց պարունակությանը, ամեն բան կա, բայց ծածկեց դուռը, մի բաժակ էլ սուրճ խմեց, ծխեց երկար։ Ի՞նչ է սպասում իրեն նոր դպրոցում, այն էլ՝ տարեվերջին։ Գուցե ավելի ճիշտ էր չշտապել, համբերել մի քանի ամիս և դպրոց մտնել սեպտեմբերի՞ն․․․ Քույրը, որ նույնպես մանկավարժ է, այդ խորհուրդն է պնդում, ինքն էլ հակված էր, բայց միայն տասն օր կարողացավ հարմարվել իր, այսպես ասած բացարձակ ազատությանը։ Առավոտյան միշտ վեր էր կենում ժամը յոթին, իրեն թվում էր՝ դպրոցական զանգի ձայնն է։ Արթնանում էր, իսկ զանգը շարունակում էր հնչել անասելի տխրությամբ, չգիտեր ինչ անել։ Կարդում էր, շախմատ էր խաղում՝ ինքն իր հետ, միացնում էր հեռուստացույցը, երբեմն զանգահարում էր ընկերներին․ «Գնացել է աշխատանքի»,— ասում էին տնից։ Աշխատանքի վայր չէր զանգահարում։

Մի խոսքով, գնաց ժողկրթբաժին, առաջարկեցին Խորենացու անվան դպրոցը, որտեղ սրտի կաթվածից հանկարծամահ էր եղել գրականության ուսուցիչը։ Ժամերը շատ չէին, միայն մեկ դասարանում, հանկարծամահ եղած ուսուցիչը թոշակի անցած մարդ էր, պարապում էր միայն դպրոցից չկտրվելու համար։ Առայժմ աշխատեք,— ասացին,— սեպտեմբերին երևի կկարգավորվի, Ժամեր կլինեն։

Ականջների մեջ ձայնագրվել-մնացել էր վերջին զրույցը իր՝ այսօր արդեն նախկին, դիրեկտորի հետ․

«Հասկացեք, գրականությանը առարկաներից մեկն է, ինչպես թվաբանությունը, քիմիան, ինչպես․․․ ֆիզկուլտուրան, այո, այո․․․»։

«Չէ՞ որ դուք նույնպես գրականության ուսուցիչ եք»։

«Եվ վատ ուսուցիչ չեմ․ ես գիտելիքներ եմ տալիս երեխաներին։ Ես ծրագրային նյութն եմ խորացնում, իմ սաները բուհ են ընդունվում։ Ես քանի անգամ եմ գլխի

ընկել, թե այս տարի ինչ թեմաներով շարադրություն կտան բուհերում, գլխի եմ ընկել և այդ հեղինակներն եմ խորացրել: Ես նրանց առարկա եմ սովորեցնում»:

«Գրականությունն առարկա չէ: Գրականություն անհնար է սովորեցնել: Ես դա չեմ համարում ուսուցչի խնդիրը»:

«Ես կխելագարվեմ, Մամյան»:

«Զգույշ, աննկատ՝ մենք պիտի օգնենք պատանուն, որ նա զգա բուն գրականությունը, ոչ թե սերտի գրողի կենսագրությունը, ոչ թե շարադրությունն արտագրի զանազան դասագրքերից, այլ կարողանա իր սեփական աչքերով հայտնաբերել գրողին, հասկանալ նրա գիրքը: Գրականությունը բոլորին է պետք և ոչ թե միայն նրան, ով բանասեր է դառնալու, բոլորին և ոչ թե միայն նրան, որը որևէ բուհ է ընդունվելու կամ, կներեք, խցկվելու»:

«Դու կասկածու՞մ ես մեր դրած թվանշաններին»:

«Ես գրականությունից թվանշան չէի դնի»:

«Դու ուզում ես քայքայե՞լ դպրոցը, Մամյան»:

«Այդ բանն անելու համար ես չափից դուրս շատ եմ սիրում դպրոցը: Դպրոցն իմ աշխատանքի վայրը չէ, իմ կյանքն է»:

«Մի խոսքով․ մեր դպրոցի Դոն Կիխոտն ես»:

«Դոստոևսկին «Դոն Կիխոտը»–ը համարում էր ամենակարևոր գիրքը, որ պիտի կարդա ամեն մի պատանի»:

«Ո՞վ»:

«Դոստոևսկին»:

««Դոն Կիխոտը» մենք էլ ենք կարդացել, ֆանտազյոր էր, հողմաղացների դեմ կռվող, մենք գործնական մարդիկ պիտի դաստիարակենք, գործ-նա-կան»:

«Ինչպես մեր դպրոցի նախկին ուսուցիչ Աղրինե Վարդանյա՞նը: Այս քանի օրը տեսա, երևի դուք էլ գիտեք, խանութում է աշխատում»:

«Գիտեմ, հետո ի՞նչ»:

«Ինձ ասաց՝ զարմանում եմ, թե տասներկու տարի դպրոցում ո՞նց աշխատեցի․․․»:

«Քո հրաշք սաներից քանի՞սն են բուհ ընդունվել, քանի՞սը․․․»:

«Չեմ հաշվել: Նրանցից եղել են, որ գրականությունը սիրել են իսկապես: Բոլորի մեջ այդ սերը բորբոքել ինձ չի հաջողվել: Երևի վատ ուսուցիչ եմ»:

«Երևի չէ, Մամյան, վատ ուսուցիչ ես»:

«Այո, լավ ուսուցիչը Աղրինե Վարդանյանն էր»:

«Ո՞վ այդպիսի բան ասաց»:

«Իսկ ի՞նչ ասացիք, հուզվեցի՞ք, զարմացա՞ք գոնե, որ ուսուցիչը գնում է ո՞ւր․․․ խանութ: Այնինչ, հարկավոր էր ահազանգ խփել, գոռալ Զենով Օհանի ձայնով: Հանգիստ ճամփա դրիք նրան, երևի հաջողություն էլ մաղթեցիք․․․ մթերային խանութում»:

«Նա թվաբանության ուսուցիչ էր»:

«Նա ուսուցիչ էր: Ուսուցիչ»:

․․․ Հարկավոր էր գնալ: Դուռը փակելուց առաջ նայեց մոր լուսանկարին, լսեց նրա ձայնը, Ժպտաց, որովհետև լուսանկարի մեջ մայրը ժպտում էր:

Մեծ դասամիջոցին ուսուցիչները սովորաբար դուրս են գալիս միջանցք, ոմանք իջնում են ճաշարան սուրճ կամ թեյ խմելու, եթե արևոտ օր է՝ բակ են դուրս գալիս, այսօր համարյա ամենքը մնացել էին ուսուցչանոցում: Նախ՝ շատերի ականջին

արդեն հասել էր տեղի ունեցած դեպքի որևէ տարբերակ կամ մի քանիսը միանգամից, և ապա, արդեն մեկ ժամից ավելի է Սահակ Վանունին փակված է դեպքի գլխավոր վկայի՝ Սոնա Միքայելյանի հետ։ Քարտուղարուհին ոչ մի հեռախոս չէր միացնում․ «Ընկեր Վանունին զբաղված է,— ասում էր,— հեռախոսով խոսում է մինիստրի հետ»։

— Ոչ թե սերունդ է, այլ տասն անհայտով հավասարում,— հերթական սիգարետը վառելով, մռայլ ասաց Մարտին Դանիելյանը՝ մաթեմատիկայի դասատուն,— անլուծելի խնդիր։ Ասենք, ես, գոնե ինձ համար, այդ հավասարումը վաղուց լուծել եմ– քանորդում՝ զրո։ Զրո։

— Ես քեզ հետ համաձայն չեմ, Մարտին,— Վարդան Անտոնյանն էր, որը 10րդ «ա» դասարանում էր գրականություն դասավանդում,— չորս-հինգ հոգու օրինակով կարելի՞ է սերունդ ընդհանրացնել։— Անտոնյանը նաև դպրոցի արհկոմի նախագահն էր և այդ պահին՝ փոքրինչ վիրավորված, որ Վանունին իրեն չի կանչում, չի խորհրդակցում։— Թեպետ ասածիդ մեջ ճշմարտություն, իհարկե, կա։

— Ճշմարտությունն ի՞նչ է, որ չլինի,— առանց Անտոնյանին նայելու շարունակեց Դանիելյանը,— ճշմարտությունը հիմա օդի մեջ է։ Բոլորը գիտեն։ Բայց․․․ ժամանակներն են փոխվել։ Կամ գուցե մե՞նք ենք հնացել։ Դուք գիտեք, ես խիստ մեթոդների կողմնակից եմ, իսկ հիմա ո՞վ է խստության կողմնակից։

Ուսուցչանոցի բաց պատուհանից ներս էին լցվում երեխաների ձայները, նաև թռչունների ինչ-որ ծլվլոց, որ կորչում էր համընդհանուր աղմուկի մեջ։ Դասատուները նստել էին երկար սեղանի շուրջ, մի քանիսը գրավոր էին ուղղում, երկուսը շախմատ էին խաղում, վիճակը սպասողական էր։ Կարծիքներ, իհարկե, խմորվում էին, բայց առայժմ դեպքը քննարկել վտանգավոր էր․ ամենքն էլ զգում էին, որ ձագնդի պես գլորվող առասպելի մեջ ահագին չափազանցված բան կա, բայց․․․

Վանունու զանգը ներս կանչեց քարտուղարուհուն։ Սա իր պատվող բազկաթոռից վեր թռավ բավական եռանդով, մագնիսի պես իր վրա կենտրոնացնելով համարյա ամենքի հայացքները, հետո, չգիտես ինչու, նորից նստեց, դարակից հանեց հայելին, թեթևակիորեն ուղղեց մազերը, թարմացրեց շրթներկը և քիչ անց անհետացավ դռների կաշեպատ զաղտնիքի ետևում։

— Պայթուցիկ հասակ է,— իր միտքն էր ծամծմում Դանիելյանը,— ամեն խաչմերուկում պահակ պիտի կանգնեցնես: Նրանցից ամեն մեկի մեջ դանդաղ գործողության մի ռումբ կա: Չգիտես, թե երբ է պայթելու:

— Բարդ հասակ է,— ասաց շախմատ խաղացողներից մեկը, որի վիճակը խաղատախտակի վրա երևի խառն էր,— սրանց հետ կարելի է խաղալ միայն ձիու քայլով:

— Գեղեցիկ հասակ է,— ասաց ավագ ջոկատավարը, որը ընդամենը մի տարի առաջ էր ավարտել նույն այս դպրոցը,— դուք պարզապես հին բանալիներով ուզում եք նոր դռներ բացել:— Հետո նա երևի հիշեց, որ այստեղ նստածները անցյալ տարի իր ուսուցիչներն էին ու փութաց ուղղել իր վրիպակը:— Ոչ բոլորը, խնդրում եմ ինձ ճիշտ հասկակաք:

Այդ պահին շեշտակի բացվեց կաշեպատ դուռը, և Սոֆիկ Լորեցյանը դուրս եկավ: Նա խնամքով ծածկեց դուռը և խորհրդավոր ասաց.

— Կանչում է. . .— Անտոնյանն առաջ եկավ,— հերոսներին է կանչում, ընկեր Անտոնյան:

—Ովքե՞ր են,— կոտրված հարցրեց Անտոնյանը:

— Մարին, դե գիտեք, Արմեն Գարասեֆերյանը. . .

— Տրամաբանական է,— Դանիելյանն էր,— այդ Գարասեֆերյան կոչվածի ուղեղի հիմնական բջիջներն արտասահմանյան սնունդ են ստանում, ուրի՞շ. . .

— Տիգրան Մանուկյանը. . .

— Չի կարող պատահել,— ավագ ջոկատավարն էր,— Տիգրանը ամաչկոտ, նույնիսկ թրջված տղա է:

— Օ՜, նրանք ամենքն էլ ամաչկոտ են,— նորից Դանիելյանն էր,— և, իհարկե, թրջված. . . ծնողների հոգատարությամբ, մեր հաշտվողականությամբ: Ուրի՞շ. . .

— Վահան Սարոյանը։

— Այ, դա իսկապես զարմանալի է։— Վահանը դասարանի լավագույն մաթեմատիկոսն էր, Դանիելյանի հպարտությունը։– Վստա՞հ ես, Սոֆիկ․․․

— Աշոտ Ճշմարտախոսը, ներողություն՝ Աշոտ Քանքանյանը և Սմբատ Թումանյանը։ Հինգ տղա և Մարին։— Սոֆին արագ դուրս եկավ ուսուցչանոցից։

Միանգամից սկսեցին խոսել բոլորը։ Արդեն ինչոր բան հաստատ հայտնի էր և կարելի էր քննարկել, պաշտպանել կամ դատապարտել, ափսոսալ կամ ասել՝նրանից, այ, այդ մեկից՝ ամեն բան սպասելի է։

Քիչ անց Արմենը, Տիգրանը, Վահանը, Աշոտն ու Սմբատը մտան ուսուցչանոց, շարվեցին պատի տակ։

— Մարին դասի չի եկել,— տեղեկացրեց Սոֆին,— հիմա կզանգահարեմ տուն։

Տղաները արտաքուստ բավական հանգիստ էին թվում, աչքերի փոքր-ինչ սրված արտահայտությամբ։ Նրանք ընդհանուր բարևեցին ուսուցիչներին և գնացին դեպի կաշեպատ դուռը։

— Դուք մտեք,— ասաց քարտուղարուհին, որ արդեն հասցրել էր հավաքել Մարիենց հեռախոսի համարը։— Ալո, կարելի՞ է Մարիին։ Մա՞յրն է։ Մարին տանը չէ՞։ Ա, հիվանդ է։ Սա դպրոցից են հարցնում։ Լավ։

— Երնի մրսել է,— կծու ասաց շախմատ խաղացողներից մեկը, նա, որի դրությունը բարդ էր և հիմա հավանորեն տարվում էր,— ստրիպտիզից մրսած կլինի խեղճ աղջիկը․․․

Այդ պահին դուռը բացվեց, և ներս մտավ Վահան Մամյանը։

— Բարև ձեզ,— ասաց նա։— Կարելի՞ է տեսնել․․․ դիրեկտորին։

Մի քանի ուսուցիչ պատասխանեցին նորեկի բարևին։

— Դուք ո՞ւմ եք ուզում,— հարցրեց Սոֆին,— դիրեկտորն զբաղված է։ Ո՞ր դասարանում է ձեր երեխան․․․

— Ես․․․

Այդ պահին հնչեց դասի զանգը։

Ինչ-որ շարժում, իհարկե, նկատվեց ուսուցչանոցում, բայց ոչ մեկը վեր չկացավ, չմոտեցավ դասամատյանների պահարանին։

— Գուցե դուք կասե՞ք իմ մասին,— քարտուղարուհուն դիմեց Մամյանը,— ընկեր Վանունին զիտի, որ ես գալու եմ․․․ Վահան Մամյան, ես երևի աշխատեմ ընկեր Սանոյանի փոխարեն․․․

Համարյա բոլորը հետաքրքրությամբ նայեցին նորեկին։ Քարտուղարուհին անհետացավ կաշեպատ դռների հետևում։

— Դանտեի «Դժոխքը» կարդացե՞լ եք, կոլեգա,— Դանիելյանը նայեց Մամյանին,— իհարկե, կարդացած կլինեք։

— Մինչև հիմա կասկածում եմ՝ դժոխքը «դ»–ով է գրվում, թե «խ»-ով, երրորդ դասարանցու միամտությամբ ասաց Անտոնյանը,— երբ որ գրում եմ, ձեռքս ինքն իրեն ճիշտ է գրում, բայց հիմա եթե կախեք անգամ, չեմ կարող ասել․․․

Նույնիսկ Դանիելյանը ծիծաղեց․

— Գրականության ուսուցչի համար դա էլ քիչ չէ, Անտոնյան, իսկ կախվելուց ձեռ քաշիր։ Առանց այն էլ տղամարդ ուսուցիչների թիվը երկրաչափական պրոգրեսիայով նվազում է։— Հետո դարձավ նորեկին։— Գիտե՞ք ինչու հիշեցի Դանտեին, երբ որ մտնեք այն դասարանը, որ ձեզ է վիճակվել, ահա այդ իմ ասած «Դժոխքը» կթվա զունավոր մուլտիպլիկացիոն հեքիաթ։ Դուք կարող էիք ավելի երջանիկ դպրոց զնալ, մանավանդ, ավելի երջանիկ օր։

— Դժվա՞ր դասարան է․․․

— Դժվա՞ր: Խենթերի և ստահակների. . .

— Խենթե՞ր: Վատ չէ: Ստահա՞կ. . . Չգիտեմ:

Այդ պահին դուրս եկավ Սոֆին:

— Ընկեր Դանիելյան, ընկեր Վահունին խնդրեց, որ ընկեր Մամյանին դուք ներկայացնեք 10-րդ «բ»-ին: Ասաց, որ թող այսօր պարզապես ծանոթանա, զրուցի, եթե ուզում է. . . Խնդրեց, որ բոլոր ուսուցիչները գնան դասի. . .

Աթոռները շարժվեցին, բացվեցին-փակվեցին դարակները, ուսուցչանոցը կամաց-կամաց դատարկվեց, խաղաղվեց:

— Գնանք, կոլեգա,— Մամյանին դիմեց Դանիելյանը,— ես մի քանի րոպեով Վերգիլիոս կաշխատեմ, դուք՝ Դանտե: Չէի ուզենա ձեզ դժոխք ուղեկցել, բայց վերին հրաման է. . .

— Ես զգացված եմ,— կմկմաց Մամյանը,— բայց գուցե ձեզ նեղություն չտամ, քարտուղարուհին կասի, թե որ դասասենյակում են այդ խենթերը:

— Վերին հրաման է,— հառաչեց Դանիելյանը,— իսկ դուք վախեցեք ինֆարկտից, շատ զգայուն եք երևում: Ասենք ուրիշ ինչպե՞ս, գրականության ուսուցիչը նյարդերի կծիկ պետք է լինի, իսկ ես, այսպես ասած, թվերի կծիկ եմ: Այս սերունդը, սիրելիս, իմ առարկայի լեզվով ասած՝ հինգերորդ աստիճանի հավասարում է, այդպիսի անլուծելի հավասարումներ կան: Այս սերնդից միջին հանել, քանորդում ինչ-որ բան ստանալ, անհնար է, ամեն մեկը առանձին հավասարում է, որ իր, միայն իր լուծումն ունի: Եթե ունի:— Հետո ծիծաղեց:— Խեղճ Սահակ Վանունի. . . Ամեն տարի պատրաստվում են վաստակավորի կոչման ներկայացնել, միշտ մի բան խանգարում է. . .

Ուսուցչանոցում մնաց միայն Սոֆին, որը չափազանց զգուշորեն, կաշեպատ դռան կողմը նայելով, վերցրեց խոսափողը, բայց որևէ համար չհավաքեց, այլ խոսափողը պարզապես զգուշորեն սեղմեց սեփական ականջին:

Մանոն Լեսկո

Դասարանում տասը, տասներկու աշակերտ էր մնացել։

— Որտե՞ղ են,— հարցրեց Դանիելյանը։

— Կարծում էինք, որ ազատ ենք լինելու, մի քանիսը գնացին։ Մյուս հինգն էլ՝ գիտեք։

— Ոչինչ,— ժպտաց Մամյանը,— դուք ուշանում եք, ընկեր Դանիելյան, մենք մի քիչ կխոսենք, դուք գնացեք։

— Անպիտաններ,— քթի տակ դժգոհեց Դանիելյանը։

Մամյանը մի քանի րոպե անխոս ետուառաջ արեց դասարանում։ Նայեց պատանիների դեմքերին, ինչ են մտածում, իհարկե, մտածում են իրենց ընկերների մասին, որ հիմա Վանունու մոտ դժվար ճակատամարտ են մղում։

Դանիելյանը մի քանի բառով պատմեց, թե ինչ է կատարվել երեկ, այս նույն դասասենյակում։ Ուսուցչի՞ սեղանին է պարել Մարին։ Ուրիշ սեղան չկա։

— Դուք նաև մեր դասղե՞կն եք լինելու,— հարցրեց մեկը, որովհետև լռությունը շատ էր երկարում։

— Չգիտեմ,— սթափվեց Մամյանը, հետո միամիտ հարցրեց,— կուզենայի՞ք։

Աշակերտներից մի քանիսը փռթկացրին։

— Մեզ ի՞նչ է մնում որ, մի քանի ամիս, մինչև հասցնեք մեզ ղեկավարել, կչվենք։

— Դուք Բոնի Էմ խմբի երգերը սիրո՞ւմ եք . . .

— Դուցեն լսել եմ։ Լա՞վ են երգում։

Դասարանը խլրտաց, ծայր առան փսփսոցներ, շշուկներ։

— Երեկ նրանց երգի տակ են պարել ձեր սեղանի վրա:

Մամյանը հասկացավ, որ գրոհ է սկսվում:

— Նրանց կհեռացնե՞ն, ընկեր Պապյան:

— Մամյան,— հանգիստ ուղղեց ուսուցիչը,— ես չգիտեմ, թե նրանք ինչ են արել: Եվ հետո՝ երևի ինձ չեն հարցնի, ես նոր մարդ եմ:

— Ձեզ է՞լ են հեռացրել:

Նա, ով այդ հարցը տվեց, գլուխը թաքցրեց դիմացինի թիկունքում: Դասարանը տագնապալի սսկվեց.

— Այո,— խոցված, բայց առանց որևէ զրգիռի պատասխանեց ուսուցիչը,— հեռացրել են, եթե այդ բառն է քեզ հարմար:

— Դուք մեր վերջին ուսուցիչն եք,— անսպասելիորեն, չգիտես քմծիծաղո՞վ, թե թախիծով ասաց մի աղջիկ:

Մամյանը նայեց, տեսավ աղջկա բաց կապույտ աչքերը. ոչ, թախիծով ասաց աղջիկը:

— Ինչպե՞ս է անունդ:

— Լուսիկ:

— Վերջին ուսուցիչ չի լինում, Լուսիկ:

— Այսօրվա մեր թեման Նաիրի Զարյանի «Հացավանն» է, ընկեր Մամյան:

Մամյանը շնորհակալությամբ նայեց աղջկան, նա ուզում է օգնել իրեն, ուզում է փոխել զրույցի հունը:

— Ընկեր Սանոյանը չհարցրեց պատմել «Հացավանը»: Ինֆարկտ, հիմա անհարմար է ուրիշ հիվանդությունից մեռնել:

— Լռիր,– ճչաց Լուսիկը:

— Դու էլ լավ կպարեիր սեղանի վրա:

Մամյանը նայեց այդ ասողին, գանգուր, խիտ մազերով տղա էր:

— Անունս Գագիկ է:— Տղան ոտքի կանգնեց,— դո՞ւրս գամ դասարանից:

— Ոչ, ինչո՞ւ, Գագիկ լավ անուն է:

— Ուզո՞ւմ եք, ասեմ բոլորի, անունները: Կծանոթանանք:

— Ոչինչ, Ժամանակ կա: Կծանոթանանք կամացկամաց: Իսկ հիմա. . .

Մամյանը մոտեցավ պատուհանին, նայեց դուրս. դպրոցի սովորական բակ էր՝ լցված աղմուկով, երեխաներով: Հետո շուռ եկավ, նայեց դասարանին, տեսավ նրանց մեկիկմեկիկ, փորձեց բռնել նրանցից որևէ մեկի հայացքը, չկարողացավ:

— Երկրորդ, ժամի՞ն էլ լռելու ենք:

— Դասամիջոց չենք անի,— անսպասելիորեն ասաց ուսուցիչը:— Ես ձեզ ուզում եմ պատմել իմ դպրոցական օրերից: Գուցե ձեզ հեքիաթի նման թվա: Թող լինի այդպես:

Ուրեմն, տարիներ առաջ, երբ ես և իմ ընկերները ձեզնից էլ մեկ-երկու տարով փոքր էինք, դա, ուրեմն, պատերազմի վերջին գարունն էր, երևի նույն այս օրերին, մեր դասարանցիներից մեկին դժվար բան պատահեց: Այն ժամանակ տղաների դպրոցն առանձին էր, աղջիկներինը՝ առանձին: Սկզբում նույն դպրոցն էր, հետո դպրոցը կիսեցին, փայտե պատ դրին, մուտքերը դարձրին երկու և մեզ բաժանեցին: Բայց մենք հիշում էինք մեր ընկերուհիներին, և կամաց-կամաց, երբ մեծացանք, նաև. . . սիրահարվում էինք: Կարելի՞ էր դրան սիրահարվել ասել: Չգիտեմ, Բայց ահա, իմ

ընկերը, որի անունը Մանուկ էր՝ սիրահարվել էր, և այդ բանը հայտնի էր դարձել դասատուներին։

Մանուկին որոշել էին փոխադրել ուրիշ դպրոց։

Հենց այդ օրերին մեր դասարանցի Ռուբենը, որ մեկ-երկու տարով մեծ էր մեզնից, ձեռք էր գցել փոքրիկ մի գիրք՝ «Մանոն Լեսկո»։ Գիշերով, այն Ժամանակ դեռ քաղաքում լուսաքողարկում էր, մենք մնացինք դպրոցում և ռազմագիտության կաբինետում, մոմի լույսի տակ, սկսեցինք կարդալ այդ գիրքը։ Դա սիրո զարմանալի մի հեքիաթ էր, որ սերմի պես ընկավ մեր հոգիների սևահողի մեջ։ Մենք կարդացինք համարյա ողջ գիշեր։ Դուք երևի գիտեք այդ գրքի հերոսների դժբախտ պատմությունը․ ջահել, համարյա պատանի ասպետ դը Գրիյոն տեսնում է գեղեցիկ մի աղջկա՝ Մանոնին, և սիրահարվում։ Սիրո առաջին օրերին հետևում է ծանր արկածների , հիասթափությունների երկար շղթան։ Մանոնը դավաճանում է իր ասպետին, դավաճանում է շատ անգամ և, ի վերջո, նրան իբրև անառակ աղջկա՝ իր նմանտասնմեկի հետ, փոխադրում են Ամերիկա։ Ասպետը գիտեր ամեն ինչ, բայց շարունակում էր սիրել ավելի խոր, ավելի բուռն, համարելով Մանոնին ամենակատարյալ էակը։ Նա չի լքում Մանոնին և նրա հետ մեկնում է Ամերիկա․․․

Մենք կարդամ էինք մոմի լույսի տակ, մոմը կպցրել էինք գնդացրի փողին, վարագույրները ծածկված էին խնամքով, մենք հինգ ընկերներ էինք, սերը, դավաճանությունը, հավատարմությունը դեռ անհայտ աշխարհ էր մեզ համար։

Մեզ առանձնապես ցնցեց գրքի վերջը, երբ Մանոնը մեռնում է անապատում, և դժբախտ ասպետը իր մատներով փորում է նրա գերեզմանը, հետո պառկում գերեզմանին, սպասելով իր մահին․․․

Մանուկը․․․ նա ի՞նչ գիտեր սիրո մասին։ Պարզապես Ալիսան նրանց հարևանն էր, նա սիրում էր վերցնել աղջկա պայուսակը, երբ դպրոց էին գալիս կամ գնում։ Նա բանաստեղծություններ էր գրում, նամակներ էր գրում Ալիսային։ Գուցե պատերազմական դժվար օրերի մղձավանջում այդ հեքիաթը պետք էր նրան, ի՞նչ կարող էինք ասել։ Այդպիսի մի նամակ, որ Ալիսան էր գրել, Մանուկը մոռացել էր օրագրի մեջ, օրագիրը տվել էր ուսուցչուհուն և․․․

Մանուկին փոխադրեցին ուրիշ դպրոց, իսկ մենք՝ նրա չորս ընկերՆերը, իհարկե, հետևեցինք նրան:

Ինչո՞ւ Ռուբենը հենց այդ օրերին բերեց «Մանոն Լեսկոն»:

Ինչո՞ւ ասաց՝ կարդանք գիշերով, մոմե լույսի տակ:

Ինչո՞ւ հենց այդ հեղհեղուկ, թեթևաբարո աղջկա և դյուրահավատ ասպետի սիրո պատմությունը:

Այս հարցերը չկային մեզ համար:

Այս հարցերը հետո էլ չարթնացան իմ մեջ:

Հիշում եմ, երբ ուշ գիշերով տուն էինք գնում, մենք խոսում էինք, որ պատերազմը շուտով, շատշուտոքվ երևի կվերջանա, կավարտենք դպրոցը: Երևի ամեն մեկս, մեր հոգում, մեր էության թաքուն լույսի մեջ տեսնում էր իր ապագա Մանոնին և, հավատացեք, մոռացել էինք, թե նա դավաճանում էր, խաբում: Մեր մեջ մնացել էր սերը՝ ամեն բան հաղթող, նույնիսկ մահը հաղթող սերը: Մենք պատերազմի զավակներ էինք, և այդ գիշեր, հենց ռազմագիտություն կաբինետից պատրաստ էինք գնալ ռազմաճակատ, կռվել մահի և ատելության դեմ: Եվ Մանոնը օգնում էր մեզ այդ բանն անելու:

Հետո մենք մեծացանք, բայց այդ գիշերը մնաց մեր մեջ: Գուցեև մեզ պահեց-պահպանեց իր փխրուն զրահներով. չգիտեմ: Հեքիաթներ ունեցեք: Ձեր հեքիաթը: Ձեր էության ինչ-որ մասով ապրեք հեքիաթի մեջ...

Ինչ արագ վերջացրեց, թվում էր՝ կարող էր պատմել մի քանի ժամ, հուշը, թվում է, կառներկտաներ նրան իր թևերին, բայց նա կարծես պատմեց ոչ մեկի համար, որովհետև վախենում էր նայել պատանիների դեմքերին, իսկ աչքերին՝ սարսափում էր. մի ծաղր, մի քմծիծաղ՝ կփշրեր նրան: Մամյանը սիրում էր զգալ, որ լսում են իրեն, այս անգամ վախեցավ ստուգել՝ լսո՞ւմ են: Դասարանը սսկվել էր, անսպասելի էր այս շրջադարձը՝ նրանք չհասցրին կողմնորոշվել:

— Այսօր հարցեր չտաք,— ասաց Մամյանը,— կարող եք գնալ տուն: Կխոսենք վաղը, մյուս օրը:

Զարմացած, մի տեսակ մտամոլոր, կենտրոնացած՝ տղաներն ու աղջիկները հավաքեցին գրքերը, դուրս եկան:

— Ցտեսություն,— ասաց վերջին աշակերտը:

Ծածկվող դռան հետևից Մամյանը ծիծաղի ձայն լսեց, հետո քայլերը հեռացան, ձայները մարեցին:

Մամյանը նստեց սեղանի առաջ, սիգարետ վառեց և դանդաղ սկսեց թերթել դասամատյանը: Հանգուցյալ Սանոյանի ձեռագրին նայեց տխրությամբ, գրել է միշտ մանուշակագույն թանաքով, երևի սիրել է այդ գույնը, գրել է հատիկհատիկ, լավ ձեռագիր է ունեցել: Խնամքով լրացված է յուրաքանչյուր դասի թեման: Ի՞նչ գրավորներ է տվել՝ խստիվ ըստ ծրագրի․․․ Աշակերտների թվանշաններն էլ կանոնավոր էին, կոկիկ, իրար նման՝ «երեք» և «չորս», «չորս» և «երեք»: Մի քանի անգամ հանդիպեց «երկու» գնահատականի, մեկը, ո՞վ է՝ Լուսիկ Սարուխանյան, մի անգամ զերազանց է ստացել: Գնաց ուսուցչանոց, քարտուղարուհուց խնդրեց գրավորների տետրերը, որ նույնպես խնամքով դրված էին պահարանում: Նորից եկավ դասասենյակ, սկսեց թերթել տետրերը, երբեմն կարդալ: Դասագրքերից ծանոթ տողեր էին, հարթ և սահուն նախադասություններ, հղկված ծովաքարերի նման, թվանշանները «երեք» կամ «չորս»: Սանոյանը ուշադիր ընդգծել էր կետադրական սխալները, տառասխալները, մի տետրում, ո՞վ է՝ Արմեն Գարասեֆերյան, նշում է արել՝ «հեռացել ես թեմայից, որովհետև «Աբու-Լալա Մահարի» պոեմը բանաստեղծի բողոքն է, դժգոհությունը՝ կապիտալիստական կարգերից»: Իսկ ի՞նչ է գրել աշակերտը, կարդաց․ աշակերտի կարծիքով պոեմում նաև ազգային բողոք կա, բանաստեղծն արտահայտում է նաև հայ ժողովրդի ողբերգությունը, որի տառապանքներին աշխարհը անտարբեր եղավ: Մի տետրի մեջ, ո՞վ է Մարի Մելիքյան, երկու անգամ բաց է թողնված երեքական էջ: Նայեց թեմաները․ Ես հպարտ եմ իմ հորով, մյուսը․․․ Նմանվենք մեր ծնողներին․․․ Աղջիկը գրել է ամսաթիվը, վերնագիրը, բայց շարադրությունը չի գրել:

Իսկ ահա այս էջին․ ի՞նչ է թեման՝ Մեր տունը, մեր ընտանիքը, նույն աղջիկը ութ տող ոտանավոր է գրել: Վերնագրի տակ նշել է․ «Ես չեմ գրել, միայն թարգմանել եմ, գրել է 14-15 տարեկան ֆինն մի աղջիկ, չգիտեմ որտեղ եմ կարդացել»:

Մամյանը կարդաց ոտանավորը․

Ահա նորից զբոսայգում
Ես քայլում եմ՝ մեկին գրկած,
Ես ծխում եմ,
Բայց ուրախ չեմ,
Ո՞ւր ես, հայրիկ, որոնիր ինձ
Եվ ինձ ետ տար այն օրերը,
Երբ մեր տունը, մեր հին տունը՝
Ամենալավ տեղն էր երկրի:

Սանոյանը «երկուս» էր նշանակել և կարմիր թանաքով ավելացրե․ «Իսկ քո՞ մտքերն ուր են և սա ի՞նչ ոտանավոր է, որ թարգմանել ես»: Այս թեմայի մի շարադրություն ուղղակի սքանչելի էր, ո՞վ է՝ Վահան Սարոյան: «Մեր սեղանների գլխավերևը գնալով դատարկվում է,— գրել էր նա,— ոչ թե նրա համար, որ մեծեր չկան, ըստ վիճակագրության՝ կյանքի միջին տևողությունը երկարել է: Պապս, օրինակ, միշտ ճաշում է խոհանոցում: Ոչ, մենք սիրում ենք նրան, բայց երևի պապս վարժվել է, օրինական է համարել, որ իր տեղը ոչ ոք չնստի, որ իրեն սպասեն: Հիմա՝ ուր պատահեց նստում ենք: Հիմա առհասարակ կլոր սեղանների ժամանակ է, եթե նույնիսկ սեղանը ձվաձև է կամ քառակուսի:

Հայրս մեզ հետ համարյա չի ճաշում, նա միշտ ուշ է տուն գալիս, միշտ գործ ունի, մենք, առհասարակ, վաղուց ընտանիքով սեղան չենք նստել: Վարժվել ենք, որ այդպես պիտի լինի և միայն մայրս է, որ տանջվում է դրա համար»:

Ի՞նչ է նշանակել Սանոյանը․ բովանդակության համար՝ «երեք» (նշում է արել․ «Չես պատասխանել թեմային»), ուղղագրության, շարահյուսության համար՝ գերազանց: Սեղանների գլխավերևը դատարկվում է․ ինչ սքանչելի տող է գտել այս տղան: Սանոյանը ազատ թեմայով ուրիշ շարադրություն չի տվել: Երևի տանը սիրված հայր է եղել Սանոյանը, ուզեցել է լավ բաներ կարդալ հայրերի մասին: Կամ՝ գուցե մենակ մարդ է եղել, ի՞նչ իմանաս:

Ինքը՝ Մամյանը, այդ թեմայով երբեք շարադրություն չի տա, երբեք։

Կարդաց մյուս տետրերը, կարդաց մանրաասն, պեղումներ անողի համբերությամբ․ ոչ մի կենդանի տող, ոչ մի սխալ, բոլորը նման էին իրար, կարծես շարադրությունները գրել էր նույն տառաճանաչ մեքենան։

— Ընկեր Սանոյանը հենց առաջին օրից է աշխատել մեր դպրոցում,— հայտնեց Սոֆին,— վերջին ամիսներին շատ հիվանդ էր, բայց դասի գալիս էր։ Հենց մի օր դպրոց չգնամ, կմեռնեմ, ասում էր նա։ Մահվան նախորդ օրն էլ եկել էր։

— Դուք ա՞յս դպրոցն եք ավարտել։

Չկարողացավ ասել՝ մեր դպրոցը։

— Այո, չորս տարի է չեմ ընդունվում, այս տարի տալու եմ երեկոյան բաժին։ Ստաժ եմ հավաքում։ Երկու ամիս է մնացել, որ լրանա։ Կընդունվե՞մ։

— Կընդունվես, իհարկե, եթե այդքան շատ ես ուզում։

— Ընկեր Սանոյանը ինձ հետ պարապում էր, երբ որ հիվանդ չէր։ Բարի, լավ մարդ էր։ Ուզո՞ւմ եք ծխել․․․ Ես ունեմ ծխախոտ։ Չէ, չէ, ես չեմ ծխում, ի՞նչ եք ասում,— նայեց կաշեպատ դռան կողմը,— ընկեր Վանունու համար է, արդեն հարյուր անգամ թողել է ծխելը։

— Ես չեմ կարողանում թողնել։

— Եթե սիգարետ չունենաք, ասեք ինձ։

— Շնորհակալ եմ։

Ուսուցչանոցում ոչ ոք չկար, դասերը վերջացեք էին, դպրոցը՝ խաղաղվել։ Մի տեսակ տարօրինակ էր դպրոցի խաղաղությունը։

— Դուք խոսեցի՞ք նրանց հետ: Անհաջող օր սկսվեց ձեր կյանքը մեզ մոտ: Ընկեր Վանունուն այդքան բարկացած չեմ տեսել:

Մամյանը հասկացավ, որ Սոֆին պատրաստ է պատմելու դեպքի մանրամասները: Ինչո՞ւ իմանա, դեռ չի ճանաչում մարդկանց և միանգամից. . .

— Կխոսեմ նրանց հետ, Սոֆի, դեռ ժամանակ կլինի: Քո սիրած դասատուն ո՞վ է եղել:

— Բոլորը: Բոլորը շատ լավն են:

Բոլորը: Կարելի՞ է սիրել բոլորին: Իսկ ի՞նչ ասեր աղջիկը առաջին օրը:

— Ընկեր Սանոյանը մի անգամ ասաց. Սոֆիկ, դու լավ արտիստուհի կլինես, հուզվում ես բոլորի համար և լավ ձեռագիր ունես: Նա սիրում էր, երբ լավ ձեռագիր էին ունենում:

Մամյանը դեռ չգիտեր, որ աշակերտները քարտուղարուհուն Սոֆի Լորեն էին ասում, նա չգիտեր երեկվա դեպքի մեջ Սոֆիի մասնակցությունը, նա փափուկ տխրությամբ նայեց քարտուղարուհուն, մտածելով, որ կարող էր նրա տարիքի աղջիկ ունենալ: Երևի արդեն սիրահարված կլիներ իր աղջիկը, կվստահեր հորը, կպատմեր, խորհուրդ կհարցներ:

– Դու «Մանոն Լեսկոն» կարդացե՞լ ես, Սոֆի:

— Ինչի՞ մասին է:

— Սիրահարված կա՞ս:

— Ի՞նչ եք ասում,— Սոֆին փորձեց կարմրել,– համալսարան ընդունվեմ, նոր: Գլխավորը դա է:

— Գլխավորը դա է,— մեքենաբար կրկնեց Մամյանը:— Երևի:

Անստորագիր նամակ

Սահակ Վանունին մտատանջության մեջ էր։ Տղաները խոսում կին առանց շփոթվելու, հանգիստ և ինքնավստահ։ Պատմեցին, որ երեկ դասերից հետո, իրոք, տուն չեն գնացել, որովհետև Արմենը նոր ձայնագրություններ էր բերել, մնացին, որ լսեն։ Երևի փոքր-ինչ ոգևորվեցին, որովհետև սկսեցին նաև պարել, ամենից ավելի պարել ուզում էր Մարին, որը, դա ամենքը գիտեն, դպրոցի ամենալավ պարողն է։ Երբ ներս մտավ Սոնա Միքայելյանը և դիտողություն արեց, անմիջապես հավաքեցին գրքերը, գնացին տուն։ Ահա բոլորը։ Գուցե պարելիս Մարին շա՞տ է ոգևորվել, գուցե ինչոր կոճակ է արձակվել, չեն նկատել, հնարավոր է, ռիթմիկ պարերի ժամանակ դա պատահում է։ Նրանք իրենց զարմանքը հայտնեցին քիմիայի դասատուի կասկածից, որին իրենք ամենքը շատ հարգում են․ «Չէ՞ որ դուք միշտ էլ հասկացել եք մեզ,— ասաց Արմենը,— չե՞ք գտնում, որ մեզ վիրավորել եք, մանավանդ Մարիին, որը երևի դրա համար էլ դպրոց չի եկել։ Երեկ նա ամբողջ ճանապարհին լաց էր լինում»։

Սոնա Միքայելյանը անխոս լսում էր, իսկ մտքի մեջ փորձում էր բոլոր մանրամասներով վերականգնել երեկվա տեսարանը, ամեն բան, իհարկե, շատ արագ տեղի ունեցավ, ինքը զարմանքից երևի նաև գլխապտույտ ապրեց, երբ տեսավ Մարիի մերկ (գուցե կիսամե՞րկ) ուսերը։ Տղաները ամենուր օղակով շրջապատել էին նրան և ռիթմով գոռում էին «օլե՜»։ Երբ ինքը բարկացած առաջ եկավ, շարքով առաջ եկան նաև տղաները, Արմենն ասաց իր թունոտ նախադասությունը մորաքրոջ մասին, ինքն ավելի տաքացավ։ (Արմենը չհրաժարվեց իր ասածից․ «Ես ցավում եմ, որ ձեզ նեղացրի, ներեցեք, պարզապես շատ վիրավորական թվացին ձեր խոսքերը, դուք այնքան ժամանակակից կին եք, կներեք, բայց մենք համարյա սիրահարված ենք ձեզ»)։ Երբ ինքը մոտեցավ Մարիին, նա հանգիստ կանգնած էր մագնիտաֆոնի մոտ և ձայնն էր մեղմացնում, կոճկելով իր ծիրանագույն զգեստի վերին կոճակը․ նրա զգեստը վերևից երեքչորս կոճակ ունի, իսկ հետո մինչև փեշերը շղթայով է։ Նա չնայեց ուսուցչուհուն, իսկ մատները, ինքը հաստատ նկատեց, դողում էին։ («Մոռացա ասել, որ ես ծխեցի, մի սիգարետ,— Արմենն էր,— դե ի՞նչ անեմ, երբեմն պատահում է այդ հիմարությունը, դրա համար՝ պատժեք»։ Վանունին այդ խոսքի վրա բարկացավ, մի երկար տրակտատ կարդաց ծխելու վնասների մասին, հետո մեղավոր ժպտաց, որովհետև ամբողջ զրույցի ժամանակ ինքը ծխում էր․ «Կմեծանաք, դա էլ արեք,— ասաց,— բայց լավ է, որ ինքդ ես խոստովանում, ընկեր Միքայելյանը այդ մասին ոչինչ չի ասել»)։ Սոնա Միքայելյանը հիշեց, այո, սենյակում ծուխ կար, նրան էլ հուզեց (թե՞ տարօրինակ թվաց) Արմենի անկեղծությունը։ Բայց, այնուամենայնիվ, չէր կարող երեկվա պատկերը տեսիլք լինել։ Վանունին մեղմ էր, փոքր-ինչ հանգստացած․ Սոնա

Միքայելյանը հասկանում էր, որ նրան դուր է գալիս հանգույցի նման լուծումը, մանավանդ, որ ինքը ապացուցելու հիմքեր չունի, հինգ մարդ, հանգիստ, առանց շփոթվելու ուրիշ պատմություն են անում, որ ընդհանուր գծերով նույնն է, բայց․․․ Հարկավո՞ր է իրեն խճճել պատմությունը, ինչպե՞ս պիտի հաստատի, ո՞վ է իրեն հավատալու։ Տես է, այս սատանաները, պարզվում է, իրեն սիրում են։

— Չգիտեմ,— ի վերջո ասաց, ես տեսա, որ Մարին տղաների մեջ ընկած պարում էր, ես տեսա նրա կիսամերկ ուսերը։ Բայց գուցեն թվացել է ինձ։

Վանունին հանգիստ շունչ քաշեց։

Տղաները հերթով ներողություն խնդրեցին, բացի Աշոտ Քանքանյանից, և Վանունին ասաց, որ կարող են գնալ դասի․ «Կարգին պարապեք, քննությունները քթներից տակ է։ Դպրոցում այլևս մագնիտաֆոն-բան չտեսնեմ»։

Մի քանի րոպե հետո Սոնա Միքայելյանը լուռ նստած էր, դիրեկտորը սեղանին դրած ինչ֊որ թղթեր էր մակագրում։

— Ես շնորհակալ եմ ձեզնից, ընկեր Միքայելյան,— ի վերջո ասաց,— մեզ հարկավոր է ոչ մի մանրուք չվրիպել։ Նրանք պետք է իմանան, որ դպրոցում կարգուկանոն կա։ Մեր մեջ ասած՝ վատ տղաներ չեն։— Հետո խորամանկ ժպտաց,— քեզ էլ սիրահարված են։

— Այո,— չգիտես ինչու շառագունեց Սոնա Միքայելյանը,— վատ տղաներ չեն, ես կարո՞ղ եմ գնալ։

Երբ կաշեպատ դուռը ծածկվեց, Սոնա Միքայելյանը թունոտ հայացքով չափեց Սոֆիին, չլսելու տալով «Ինչպե՞ս եք, ընկեր Միքայելյան» բառերը, չարձագանքելով աղջկա քաղցր-մեղցր ժպիտին։ Ամեն դեպքում՝ դպրոցում պտտվող առասպելները քիչ կապ ունեին այն ամենի հետ, ինչ տեղի է ունեցել երեկ, եթե նույնիսկ ամեն բան տեղի է ունեցել հենց այնպես, ինչպես իրեն թվացել է, ինչպես ինքը հեռախոսով պատմեց Վանունուն։ Դասատուն նայեց իր պտտվող բազկաթոռի վրա կոտրատվող ջահել աղջկան և հանկարծ ետ դարձավ, նորից բացեց առանձնասենյակի դուռը․

— Ընկեր Վանունի, ամեն դեպքում վատ չի լինի, եթե ձեր հեռախոսը վերցնելիս օրիորդ Սոֆիի հեռախոսն անջատվի։

— Ես դա վաղուց էի ուզում անել,— ասաց Վանունին,— միշտ մոռանում եմ։ Վաղն էլ ժողկրթբաժին են կանչել։ Սոֆի՛կ . . .

Սոֆին շանթահար նայեց քիմիայի դասատուին։

«Պարզապես լկտի պարում էին,— ուսուցչանոցում, ամենքի ներկայությամբ ասաց Սոնա Միքայելյանը,— սենյակում ծուխ կար։ Գիտեք, ես սարսափելի չեմ տանում ծուխը։ Մարին կիսամերկ էր կամ գուցե դա թվացել է, առհասարակ հիմա հագնված վիճակում էլ մեր օրիորդները կիսամերկ են թվում։ Ուրիշ որևէ բան չի եղել, տղաները ինձնից ներողություն խնդրեցին։

Դպրոցը փոքր-ինչ հանդարտվեց, թեպետ առասպելները շարունակվում էին շշուկով պատմվել և քննարկվել։

— Եթե դա այսօր չեն արել, վաղը կանեն,— ամփոփեց Դանիելյանը։— Ես առանձնապես չեմ զարմանա։

Իսկ Մարին, այնուամենայնիվ, դպրոց չէր գալիս։

Հաջորդ օրերին տեղի ունեցավ երեք դեպք, որ նորից կենդանացրեց այս պատմությունը։

Առաջին դեպք։ Սպորտային դահլիճում իրար ծեծել էին Արմենն ու Վահանը։ Անսպասելի էր, որովհետև նրանք մտերիմ ընկերներ էին։ Հատկապես Վահանի համար դա զարմանալի դեպք էր՝ նա դպրոցի ամենալռակյաց, զուսպ և քաղաքավարի տղաներից էր։ «Հենց այնպես, մի դատարկ բանի համար վիճեցինք,— ասաց Արմենը,— վիճեցինք, մի քիչ ճանկռոտեցինք իրար, վաղը կհաշտվենք, ո՞ւմ գործն է»։ Վահանը ոչ մեկին ոչինչ չէր բացատրում։

Երկրորդ դեպք։ Մարիին դասերից հետո տեսել էին դպրոցում (տեսել էին ավագ ջոկատավարը, Սանասար քեռին և, իհարկե, Սոֆին)։ «Լաց լինելով վազում էր

միջանցքով,— ասաց ավագ ջոկատավարը։— Ես չհասա հետևից»։ Ուրեմն, Մարին հիվանդ չէ, բայց դասի չի գալիս։

Եվ, ի վերջո, երրորդ՝ ամենակարևորը, որի մասին գիտեր միայն Սահակ Վանունին։ Հինգշաբթի օրը նա փոստով ստացավ մի անստորագիր նամակ։ «Ձեզ խաբեցին,— գրված էր նամակում,— Մարին, իրոք, համարյա մերկ էր պարում։ Արմենը և Սմբատը դասամիջոցին զրազ եկան։ Արմենն ասաց, որ այնպիսի նոր երգեր ունի, որ Մարին կմերկանա, եթե լսի։ Սմբատն ասաց՝ չի մերկանա։ Մարին ամոթից է, որ դասի չի գալիս, որովհետև ընկեր Միքայելյանը ձեզ ասել է ճշմարտությունը»։

Վանունին մտահոգ էր․ ո՞ւմ ձեռագիրը կլինի։ Նա այդ դասարանում դասեր չունի, բայց կարող է վերցնել հայերենի գրավորները, համեմատել։ Գուցե պարզապես Արմենին և Մարիին չսիրող մեկն է գրել, ի՞նչ իմանաս։ Վանունին ատում էր անստորագիր նամակները, որովհետև մի քանի անգամ գրել էին նաև իր մասին։ Անցյալ տարի գրեցին ճիշտ այն օրերին, երբ իրեն ներկայացրել էին վաստակավորի կոչման։ Կանչեցին ուր որ պետք է, տվին, որ կարդա նամակը, ասացին, որ կարևորություն չեն տալիս, բայց կոչումն էլ, այնուամենայնիվ, չտվին։ Նախ ուզեց պատռել իր ստացած նամակը, հետո մտածեց, որ ամեն ինչ դրանով կարող է չվերջանալ։ Մեկ էլ տեսար՝ այս ստահակը գրեց ավելի վերև, թե այսպես ու այսպես՝ Սահուկ Վանունին կոծկում է դպրոցում կատարվող դեպքերը։ Նամակը մակագրեց, նորից ծրարեց, դրեց սեյֆը։ Կտա այդ նոր դասղեկին, թող զբաղվի առանց աղմուկի։ Հարկ եղած դեպքում ինքը կասի, որ ահազանգը անհետևանք չի թողել։

Այս օրերին չափից դուրս մտահոգ ու լռակյաց է դարձել Սոնա Միքայելյանը, հրաժարվեց ուսուցիչների խորհրդակցությունում ելույթ ունենալուց, վերջապես գլուխ էր գալիս վաղուց ծրագրված երեկոն արվեստագետների հետ, հանձնարարեց ավագ ջոկատավարին։ Մտնում էր, պարապում էր ժամերը, լաբորատորիա և գնում տուն։ Վանունին մտահոգ էր․ գուցե վիրավորվե՞ց այն օրվա զրույցից։ Հարկավոր է, նորից խոսել, գուցե արտասահման գնալու առաջարկ անի․ մի քանի անգամ ասել է, որ կուզենար Լեհաստան գնալ։ Ասենք, եթե արտասահման ուզենա, հորաքրոջ տղային կդիմի։

Վահան Մամյանը դասարան մտավ բավական ուշացած։ Գրադարանում թերթում էր Վահան Տերյանի գիրքը, հրապուրվեց և ուշ զգաց, որ զանգն արդեն եղել է։ Տերյանի գիրքը մաքուր էր, չկարդացած։ «Պոեզիա չեն վերցնում,— ասաց

գրադարանավարը,— ճիշտն ասած, նաև արձակ»: «Իսկ սիրո մասին գրքեր վերցնո՞ւմ են»: «Մեկ-երկու աղջիկ: Սովորաբար վերցնում են այն գրքերը, որ հանձնարարում է դասատուն: Մեկ-երկու օր հետո ետ են բերում: Երևի միայն թերթում են»:

Տղաներն ու աղջիկները ինչոր գրգռված էին երևում, դասամիջոցին հավանորեն վիճել են: Մամյանն ամեն բան կտար, եթե աննկատ լսած լիներ նրանց վեճը: Սկսվում է դասը, և նրանք կարծես ուրիշ մարդ են դառնում․ կրիաները փակվում են պատյանի մեջ: Նախորդ ժամին Մամյանն առաջարկել էր նորից կարդալ Տերյան և անգիր սովորել ամենից ավելի դուր եկած բանաստեղծաթյունները: Առնվազն չորս-հինգ բանաստեղծություն:

— Ո՞վ է առաջինն ուզում արտասանել,— դիմեց նա դասարանին:

Իրեն նայող դեմքերն անշարժ էին, հայացքները՝ մի տեսակ բացակա:

— Կարդացի՞ք Տերյան:

— Կարդացինք,— արձագանքեց ինչոր մեկը:

— Դե․․․

— Գուցե դո՞ւք սկսեք,— Արմենի ձայնի մեջ խորամանկ երանգ կար, նրա շրթունքները լարված էին, ասես զսպում էին բառերի ինչոր պղտոր հեղեղ:

— Ինչ կա որ, ես կսկսեմ,— հանգիստ ասաց Մամյանը:

Հետո վեր կացավ իր աթոռից, մոտեցավ Արմենին, հենվեց հենց նրա նստարանին ու մի պահ լուռ մնաց: Նա պարզպարզ տեսավ 1947 թվականի այն առավոտը, երբ իրենց դասատուն՝ Նվարդ Պարոնյանը, մտավ դասարան, ճիշտ այդպես հենվեց առաջին նստարանին և ասաց․ «Այսօր ես ձեզ համար Տերյան կկարդամ»: Դա ինչ սքանչելի քառասունհինգ րոպե էր: Ուսուցչուհու ձեռքին կար Տերյանի գիրքը: Բայց նա անգիր էր ասում, մեկը մյուսի հետևից հոսում էին զարմանալի փափուկ, տաք տողերը: Դասամիջոցին նա ասաց․ «Բանաստեղծի կյանքի մասին դասագրքում կա, կկարդաք: Երևի վատ չի լինի, եթե մյուս դասին էլ դուք ինձ համար կարդաք Տերյան, ինչ որ դուք կհավանեք: Ես նաև լսել եմ սիրում»:

Տեսիլքը տևեց մի քանի վայրկյան, բայց Մամյանը այդ մի քանի վայրկյանում հիշեց հեռավոր դասի բոլոր մանրամասները։

. . . Երբ կըհոգնես, կըզազզես աշխարհից՝
Դարձի՛ր իմ մոտ, վերադարձի՛ր դու նորից. . .

— Կզազզե՞ս. . .— քթի տակ մռթմռթաց Սմբատը,— դու կզազզես, ես կզազզեմ, նա կզազզի. . .

— Եվ դասարանում կստացվի սոդոմ-գոմոր։— Շարունակեց Արմենը։

Դասարանում շշուկ անցավ, ինչոր մեկը, վերջին նստարանին, փռթկաց։

. . . Եթե բախտն ու վայելքները քեզ ժպտան. . .

Մամյանը հանգիստ շարունակում էր բանաստեղծությունը։

Նոր դասղեկը Արմենին տարօրինակ մարդ էր թվում։ Ամբողջ դպրոցը զնգզնգում էր իրենց այն օրվա պատմությամբ, իսկ սա մի բառ անգամ չի ասել, թեպետ արդեն երկրորդ շաբաթն է՝ գալիս-գնում է։ Նա ուշադիր զննում էր ուսուցչին, իր մտքերի հետ էր և չէր լսում նրան։ Տանը երեկ նորից վեճ ունեցավ մոր և քրոջ հետ։ Գուցե նրա՞նք են ճիշտ։ Վահանը խուսափում է իրենից, տհաճ բան ստացվեց։ Ինքը հենց Վահանին կուզենար պատմել ամեն ինչ, բայց ստացվեց կռիվ։ Փսլնքոտ, գնա քո հավասարումները լուծիր, ամբողջ օրը պտտվիր Դանիելյանի շուրջը։ Քո ի՞նչ գործն է բռնցքամարտի ձեռնոց հագնելը, տղամարդկանց գործերին խառնվելը։ Ասպետիս նայեք։ Արմենը գիտեր, որ Վահանը սիրահարված է Մարիին, բայց դե տղաներից ո՞վ սիրահարված չէ նրան։

. . . Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան։
Եվ այնքան ներում— ո՞ր երկրի սրտում. . .

Աշոտը արագ-արագ ինչ-որ բան էր գրում իր առջև դրած թղթին։ Նրա աչքերն անհանգիստ էին, նստել էր վերջին շարքում, մենակ։ Երևի կգնա իրավաբանական, հայրն է պնդում։ «Ոտքի, դատարանը գալիս է», պատկերացրեց իրեն միջնադարյան

դատավորի թիկնոցով, ճաղատ, ակնոցը քթին։ Ոչ, ավելի լավ է դատախազ, այնուամենայնիվ, հոր կարծիքով, ամենագլխավոր դեմքը դատախազն է և ոչ դատավորը․ նա ինչպես որ ասում է՝ դատավորը հնազանդ, խելոքխելոք ձևակերպում է։

Լուսիկը երանությամբ նայում էր ուսուցչին։ Նա կարդացել, շատ բան անգիր էր արել, բայց չի արտասանի, տղաները կծաղրեն։ Աղջկա շրթունքները շարժվում էին․ նա մտքում կրկնում էր դասատուի հետ և ավելի շատ իր ձայնն էր լսում։ Ինչ զարմանալի մարդ է եղել այս Վահան Տերյանը։ Մեր դասարանում լիներ, կսիրեի նրան․․․

— Վահան, գուցե դո՞ւ։ Իբրև բանաստեղծի անվանակից։

— Վահանը Տերյանի հետ հաշիվ չունի,— ուսուցչին ընդմիջեց Սմբատը,— նա գնալու է կիբեռնետիկայի ֆակուլտետ։

Վահանը չնայեց ոչ ուսուցչին, ոչ դասընկերոջը։ Արդեն երկու շաբաթ է նա երեսի վրա է գցել մաթեմատիկան։ Ձախ աչքի տակ դեռ մուգ կապույտ է։ Սրտում ահագին դառնություն կա, մաղձ։ Ո՞ւմ հետ կիսվի։ Դանիելյանի՞, նա իսկույն կհարցնի՝ այսինչ խնդիրը լուծե՞լ ես։ Մամյանը իր համար լրիվ անծանոթ մարդ է, անհասկանալի։ Տերյա՜ն․․․ Թվերն են կառավարում կյանքը և ոչ թե այս տխուր տողերը, թեպետ ուսուցիչը լավ է կարդում, կարծես իր սեփական տխրությունը լինի։ Մարին դեռ չի գալիս դասի․․․ Երկու ամիս հետո կբաժանվի սրանցից։ Շուտ, շուտ անցնի այդ երկու ամիսը։

․․․Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով․․․
Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի հիշեք ինձ ձեր սրտում՝ մնաք բարով, մնաք բարով․․․

— Լուսի՞կ․․․

Լուսիկը լաց էր լինում։ Նա կլանված, անէացած լսում էր ուսուցչին, մտովի կրկնում բանաստեղծի տողերը, և, անսպասելիորեն, հոսեցին արցունքները։ Դասընկերոջ ձայնը ասես արթնացրեց նրան ինչոր երազից, նա սթափվեց, նայեց շուրջը։ Գայանեն նրան էր հառել իր սատանայական աչքերը․ «Ի՞նչ պատահեց քեզ»։

«Ոչինչ չի պատահել, մի խանգարի»։ Մամյանը կռահեց շշուկները, աննկատ չմնաց նաև աղջկա հուզմունքը և դրանից հետո ասես արտասանում էր միայն լաց լինող այդ աղջկա համար։

. . . Ի՞նչ մնաց ինձ– ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ,
Մարգարտաշար հուշերի զանձ, ուրիշ ոչինչ. . .

Զանգը տվեցին։

— Չձանձրացա՞ք,— հարցրեց Մամյանը։— Ուրեմն, հաջորդ ժամին. . .

— Ինչպես ասում են՝ շնորհակալություն ուշադրության համար։— Աշոտն էր։

— Լկտի,— բարձր ասաց Լուսիկը։

Շարադրություն ազատ թեմայով

Հինգշաբթի օրը, վաղ առավոտյան Սահակ Վանունուն զանգահարեցին լուսավորության մինիստրությունից. «Այդ ինչե՞ր են կատարվում ձեր դպրոցում, ընկեր Վանունի»։ «Ի՞նչ նկատի ունեք», «Վերջին ստրիպտիզը՝ օրը ցերեկով, Մովսես Խորենացու անունը կրող դպրոցում։ Խեղճ պատմահոր մորուքի մազերը կփշաքաղվեին. . .»։ «Պատմահայրը չէր զարմանա,— այն մարդը, որ զանգահարում էր, չէր սիրում Վանունուն, Վանունին դա գիտեր և փոխադարձաբար նույն վերաբերմունքն ուներ։— Նախ պիտի ասեմ, որ շտապում եք ստրիպտիզ բառով մեզ մկրտել, երևի ձեզ է դուր գալիս այդ բառը, իսկ գալով պատմահորը, հույս ունեմ՝ հիշում եք, թե ինչով է ավարտվում նրա «Պատմությունը»»։ «Ես ուրախ եմ, որ թվաբանության նախկին դասատուն այդքան տեղյակ է հայոց պատմությանը,— զանգահարողը պատմության նախկին ուսուցիչ էր, թեպետ շատ լավ տեղը չբերեց, թե «Պատմության» ո՞ր տողերն էր ակնարկում Վանունին։— Ամեն դեպքում արժեր, որ այդ դեպքի մասին մինիստրությունն իմանար ոչ անստորագիր նամակից։ Մինիստրը կարգադրել է, որ այս նամակը ձեզ ուղարկենք, թեպետ դրա կարիքը չեմ կարծում, թե ունեք, քանի որ նամակագիրը գրում է, որ մի շաբաթ առաջ ինքն ավելի մանրամասն գրել է ձեր անունով։ Ստացե՞լ եք։ Ամեն դեպքում մինիստրի կարգադրությունն է, ես այսօր կուղարկեմ։ Թող երկու հատ լինի։ Ընկեր Վանունի, հա, վաստակավորի կոչման ներկայացնելու գործեռդ պատրաստ են, մնում է բնութագիրը. . .»։

Սահակ Վանունին հուզված կամ բարկացած պահերին պարզապես նիհարում էր, այո, այո, մարդկանց աչքի առաջ նա պարզապես նիհարում էր։ Այդ զանգի ժամանակ նա մենակ էր, բայց հավանորեն կատարվեց նույնը։ Կատարվեց ավելին, նա նյարդային զանգով կանչեց Սոֆի Լորենին և ծխախոտ ուզեց։

— Բայց չէ՞ որ․․․— կմկմաց Սոֆի Լորենը, որին Վանունին հենց երեկ կտրականապես ասել էր, որ եթե ծխախոտ ուզի, եթե անգամ խնդրի, աղաչի, մեկ է՝ թող չբերի։ Թեյ պատրաստեմ գուցե․․․

— Ծխախո՛տ,— համարյա բղավեց Վանունին։– Եվ կանչիր Մամյանին։

— Ընկեր Մամյանը դասի է։

— Թող ընդհատի դասը, գա։ Պատերազմ չի ընդհատելու։

Մինչև Սոֆին կբարձրանար չորրորդ հարկը, և Վահան Մամյանը չորրորդ հարկից կիջներ ուսուցչանոց, Վանունին յոթերորդ սիգարետն էր վառում։ Նա մռայլ նայեց նոր դասղեկին․

— Ի՞նչ եղավ, զբաղվեցի՞ք այն նամակով, խոսեցի՞ք նրանց հետ։

— Աղջիկը դեռ դասի չի գալիս, իսկ Արմենի հետ․․․ Հարկ կա՞ քրքրել մի պատմություն, որ համարյա մոռացվել է․․․

— Հիշողներ կան և բավական ազդեցիկ հիշողներ։ Վաղը մանկխորհրդի նիստ է, երկուսի հեռացումն էլ հարկավոր է ձևակերպել․․․ Ես այսօր ում հետ որ պետք է կհամաձայնեցնեմ։

— Հեռացնո՞ւմ,— Մամյանը նկատեց դիրեկտորի սեղանի լիքը մոխրամանը, ուշադիր նայեց նրա սրված դիմագծերին, ինչ-որ բան կռահեց։— Հեռացում՝ հասունության քննություններից ամիսուկես առա՞ջ․․․ Ես չեմ կարող դրա հետ համաձայն լինել։

— Ոչինչ,— հանգիստ ընդմիջեց Վանունին,— կձևակերպենք մեկ դեմով, ինչպես ասում են, պլյուս՝ հիսունմեկ կողմ, համոզված եմ։

— Գուցե թայլ տաք ես խոսեմ Արմենի հետ։

— Ես այդ թույլ եմ տվել մեկ շաբաթ առաջ, ընկեր Մամյան։— Հետո հանկարծ հարցրեց։— Գլխացավի դեղ չե՞ք ունենա․

Մամյանը փորձեց կռահել դիրեկտորի հոգեվիճակը։ Վանունին երևի բարի ու անօգնական մարդ է և գլուխը կորցնում է սուր իրավիճակների ժամանակ և դրա համար չի սիրում, երբ հարցերը խճճվում են ու ստիպված է կծիկը քանդելու։ Մարդիկ կան, որ ընդհակառակը, նույնիսկ լավ են զգում նման դեպքերում, հարկավոր է քննել, պատժել, ևս մեկ անգամ հավաստել քո իշխանությունը, խելքը։ Վանունին այդ մարդկանցից չէր, նրա համար ղեկավար լինելը բեռ էր ասես, բայց միայն․․․ խճճված իրավիճակներում։ Ճգնաժամն անցնում էր, և նա նույն Վանունին էր՝ հանգիստ, ինքնավստահ, ամեն բան հաստատ իմացող, սեղանի թամադա, դպրոցի նահապետ, փափուկ և շատախոս։

— Ես այսօր կխոսեմ նրանց հետ։ Գուցե Մարիին էլ գտնեմ, թեպետ չգիտեմ՝ նա կվստահի՞ ինձ։ Ես նրա երեսն էլ դեռ չեմ տեսել։ Իսկ նամակը, ինձ թվում է, գրել է այդ դասարանցիներից մեկնումեկը։

— Պարզ է, որ ես չեմ գրել,— դառը ծիծաղեց Վանունին, ութերորդ սիգարետը վառելով։— Չե՞ք ծխում։

— Ծխում եմ,— ասաց Մամյանը,— բայց դպրոցում աշխատում եմ չծխել։ Ես կբացեմ պատուհանը։– Մի քանի վայրկյան երկուսն էլ լուռ էին, Վանունին դանդաղ ներս էր քաշում կապույտ ծուխը, հետո Մամյանն ասաց։— Գիտեք, այս օրերին ես բավական նստեցի գրադարանում։ Բարձր դասարանցիները համարյա չեն կարդում։

— Հիմա ամեն մեկի տանը մի հանրային գրադարան կա, երբեմն՝ ավելի հարուստ, քան մեր դպրոցի գրադարանը։

— Ամեն մեկի տանը, այո, գրքեր կան, բայց ափսոս, երբեմն դրանք շարված էլ մնում են գրապահարաններում: Գրադարանը գրքերի պահեստ չէ, այլ կարդացվող, մաշվող, ձեռքից ձեռք անցնող գրքերի տուն:

— . . . Պլյուս՝ լավ ուսուցիչներ, որ սովորեցնում են ինչ կարդալ և ինչպես:— Վանունին, չգիտես ինչու, համակրանքով նայեց իր նոր ուսուցչին, բայց պահը մանկավարժական կամ մարդկային զրույցի համար անպատեհ էր․ այդ հեքիաթներով անհնար է պատասխանել պատմության նախկին ուսուցչին, որ հիմա մինիստրությունում երևի սուրճ է խմում և գոհ է, քանի որ թունավորեց մեկ ուրիշի առավոտը:— Այդ ամենի մասին՝ օրը կգա, բարին հետը, կխոսենք: Սեպտեմբերին, եթե ուզում եք, մանկխորհրդում կքննարկենք ձեր ուսումնասիրությունների պտուղները: Բայց վաղը ուրիշ խոսք ու զրույց պիտի լինի: Փաստը մեր աչքի առաջ է, ընկեր Մամյան, փա՛ստը. . .

— Երբեմն ոչինչ ավելի սխալ չէ, քան կատարված փաստը: Ինձ համար, անձամբ, մութ պատմություն է:

— Փորձեք լուսավորել այդ մութը, այդպես, հանուն մանկավարժության: Հույս չունեմ, թե ձեր լուսարձակը ուժ ունենա թափանցելու նրանց հոգիները: Դուք չեք էլ երևակայում, թե ինչ դասեր կտան ձեզ այդ դեղնակտուցները:

Մամյանը հասկացավ․ Վանունին ինքն իրեն է նախապատրաստում վաղվա վճռական քայլին, նա ուզում է այսօրվանից իսկ ինքն իրեն թշնամացնել իր աշակերտների հետ, որոնց, երևի, սիրում է: Նա ինքն է ուզում իրեն զգոել նրանց դեմ, կատարված դեպքի անորոշ ճշմարտությանը գումարելով հազար ու մի ուրիշ դառնություն:

— Ախ, մանկավարժության աստված, ինչ դարձրինք քո տաճարը, երեխաներին ինչպես նստեցրինք մեր գլխներին․ օ՛, ինչ զարգացած են, ինչ համարձակ են մտածում, ֆլան-ֆստա՛ն: Գիտատեխնիկական հեղափոխության, վաղ ակսելերացիա, պլյուս՝ այսօրվա ուսուցիչների, իբր, անկարողությունը՝ նրանց տիեզերական հարցասիրությանը պատասխանելու առումով: Եվ աշակերտները դա գիտեն՝ թերթերում գրում են, հեռուստացույցով ամբողջ օրը խոսում են, ինչպե՞ս չիմանան.— Տեսեք, թե ինչ սերունդ է՝ խելոք, զարգացած, գլուխները լիքը ինֆորմացիա. . . Մեկ-մեկ գլուխդ կորցնում ես․ չի՞ լինի, որ մենք աշակերտ դառնանք, և նրանք մեզ դաս

տան: Ականջդ կանչի, Մովսես Խորենացի, հիշում եք չէ՞. «Աշակերտներդ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան…»: Վաղվանից մեր գրքերը, տետրերը հավաքենք, դասի զանք, նստենք նրանց տեղը: Կարծում ես կզարմանա՞ն: Եվ գիտե՞ք, թե մեզ ինչ դասեր կտան…

— Ես գուցե գնամ,— ասաց Մամյանը,— շարադրություն եմ ավել, տասներկու րոպեից զանգը կլինի…

— Շարադրությո՞ւն: Նրանց թելադրություն է պետք, ոչ թե շարադրություն: Թեման ի՞նչ է:

Մամյանը մի պահ կարկամեց. իրենց այս զրույցը և շարադրության թեմա՞ն. դիրեկտորը երևի զոհ չպիտի մնա:

— Ազատ թեմա է:

— Ազատ, ազատ: Շատ չե՞ն այդ ազատությունները: Թելադրություն է պետք տալ նրանց, Մամյան, որ տեքստը մեր ձեռքին լինի: Թելադր-րու-թյուն: Նրանք են մեզ թելադրողը, այնինչ, մեր ասածը պիտի գրեն և ոչ թե՝ ինչ ուզում են: Իսկ դուք՝ շարադրություն, այն էլ ազատ:

— Ուզում եմ պարզապես ճանաչել ով ինչ է: Ես, ախր, նրանց բոլորովին չգիտեմ: Առաջարկել եմ, որ գրեն իրենց մասին, ի՞նչ կուզենային, եթե ամեն բան հնարավոր լիներ… Հետո խնդրել եմ անկեղծորեն գրել, թե որ առարկան են սիրում ամենից շատ և որը չեն սիրում… ամենից շատ:

Սահակ Վանունին սրտանց ծիծաղեց.

— Հոգինե՞րն ես քրքրում: Եթե ամեն բան հնարավոր լիներ, նրանք նախ և առաջ երևի կուզենային փակել դպրոցները և ինձ ու քեզ քշել թոշակի:

Վանունուն ջղայնացնում էին մարդկանց տարբերությունները: Թվաբանության նախկին դասատուն շատ կուզենար գործ ունենալ միջին աշակերտի, միջին դասատուի հետ: Հնարավոր լիներ սրանց գումարել-բաժանել և քանորդում ստանալ այդ միջինը, թե չէ՝ ամեն մեկի բնավորությունը նրան մի իսկական ջունգլի էր թվում,

կարո՞ղ ես, գտիր ճանապարհը... Վահան Մամյանը երևի այդ ճանապարհներն է որոնում: Աստված իր հետ, բայց մինչև գտնի, մտածում էր Վանունին, այդ ջունգլիներում հանկարծ չուտե՞ն նրան, իրեն էլ հետը...

Արմեն Գարասեֆերյանը դասղեկի հարցերին պատասխանում էր սառը և քաղաքավարի: Նա որևէ նոր բան չասաց, պարզապես բառ առ բառ կրկնեց այն, ինչ ասել էր Սահակ Վանունուն: Եվ Մամյանը ստիպված հայտնեց նամակի մասին:

— Ստորագրություն կա՞:

— Անստորագիր է: Գրել են մինիստրություն: Մի օրինակն էլ դպրոցի դիրեկտորին:

Արմենը մի քանի րոպե լուռ մնաց: Նրա բաց կապույտ աչքերը սևեռվել էին նույն կետին, իսկ միտքը երևի հանկարծակի լարվեց: Մամյանը նոր հարց չտվեց նրան, թող մտածի, մնա ինքն իր հետ, ծանրութեթև անի: Հետո հանկարծ մտածեց, որ ինքը կարող էր Արմենի տարիքին տղա ունենալ, հետո մտածեց, որ իր տղան էլ հնարավոր է այդ հինգի մեջ լիներ: Դասամիջոցին հասցրել էր կարդալ Արմենի շարադրությանը. այսինքն, ի՞նչ շարադրություն, պարզապես մի քանի տող էր գրել. «Դուք հարցնում եք՝ եթե ամեն ինչ հնարավոր լիներ, ի՞նչ կուզենայի... Ինչո՞ւ պետք է ամեն ինչ հնարավոր լինի և ո՞ւմ է հետաքրքիր, թե ես ինչ կուզենայի...»: Հետո: չգիտեմ ինչու, մի տող էր գրել Տերյանի բանաստեղծությունից. «Օ՜, հայրենիք, դառն ու անուշ»: Ի՞նչ երկրաշարժ կա պատանու ներսում, ի՞նչ բանալի կարող է բացել նրա լռությունը:

— Ասում եք՝ անստորագի՞ր:— Ուսուցչին նայեց մի տեսակ ծակող հայացքով:— Եվ երևի հավատում եք, որ ճիշտ են գրել: Ուրեմն մեր զրույցը ինչի՞ համար է:

— Անստորագիր նամակները ես կայրեի առանց կարդալու: Կարծում եմ՝ ընկեր Վանունին նույնպես: Բայց քո լռությունն էլ անստորագիր նամակի մի տեսակ չէ՞, կամ, ավելի ճիշտ, սպիտակ թուղթ է, որտեղ միայն ստորագրության կա:

— Ես պարտավո՞ր եմ ձեզ հետ անկեղծ լինել:

— Ոչ։— Սառը ասաց Մամյանը։— Անկեղծությունը պարտավորությամբ չի լինում, մանավանդ, որ դու ինձ համարյա չես ճանաչում։ Ում չես ճանաչում, ինչո՞ւ պիտի վստահես։

Մամյանի խոսքի մեջ անօգնական մի բան կար, երևի Արմենը մի պահ նույնիսկ նեղվեց ուսուցչի այդ վիճակից, հետո անսպասելիորեն չարացավ.

— Մի խոսքով, ձեզ հանձնարարել են, դուք կատարում եք դասղեկի ձեր պարտքը։ Կարծում եմ, որ կատարեցիք։ Ես կարո՞ղ եմ գնալ...

— Կարող ես,— հանգիստ ասաց Մամյանը, նրան ծիծաղելի ու տխուր թվաց իր առաքելությունը, փակ դռներ է ծեծում, ինչի՞ համար։ Հետո անասելի քնքշանքով նայեց իր դիմաց նստած պատանուն,— գիտե՞ս, Արմեն, ես կարող էի քո տարիքին տղա ունենալ։

Այ քեզ անցում, Արմենը չէր սպասում նման նախադասության։ Գուցե ծուղա՞կ է, շախմատային ձիու քա՞յլ։ Իսկ եթե... արագորեն վանեց «իսկ եթե»-ն, ներսում զսպանակն ավելի լարվեց, ճակատի կնճիռը խորացավ։

— Ոչինչ չեք կորցրել, ընկեր Մամյան,— ասաց քմծիծաղով,— կարող եք համարել, որ նույնիսկ շահել եք, ո՞ւմ է պետք ինձ նման տղան...

Արդեն դռների մոտ Արմենը շուռ եկավ, նայեց ուսուցչին, որ համառորեն փորձում էր վառել սիգարետը։ Լուցկին չէր ենթարկվում։

— Իսկ ստորագրությունը մենք կգտնենք, այդքան շատ ստոր մարդ չկա մեր դասարանում։ Իսկ անստորագիր բառի արմատը ստորն է և ոչ թե ստորագրությունը։

Մամյանը ի վերջո կարողացավ վառել սիգարետը։ Արմենը դեռ դռների մեջ էր, ինչոր խոսքի՞ էր սպասում։ Եվ, չգիտես ինչու, ուսուցիչը հարցրեց.

— Ինչո՞ւ էիր մեջբերել Տերյանի տողը, չհասկացա։

Արմենը նայեց նրան և ոչինչ չտասաց։

Ուսուցիչը մնաց դատարկ նստարանների լռության մեջ: Հիմա կարող է գնալ տուն և դարձյալ վայելել մենակության հաշիշը: Ի՞նչ կբերի վաղը:

Մամյանը նորից սկսեց թերթել աշակերտների տետրերը և զբաղվել բավական տխուր մի թվաբանությամբ․ ո՞ր առարկան են սիրում և ո՞րը չեն սիրում: Գրականությունը ամենից քիչ ձայներն էր ստացել, քսանութ աշակերտից գրականությունը իրենք ամենաչսիրած առարկան էին համարել․․․ տասնութը: Այդքան շատ դեմ ուրիշ ոչ մի առարկա չէր ստացել: Դանիելյանը կչարախնդա․ «Հը՞, կոլեգա,— կասի,— դարը փոխվել է, դարը․․․»: Ոչ, դարը մեղավոր չէ: Ո՞վ է մեղավոր: Հիշեց Իսահակյանի տողերը․ «Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ»: Գրականությունը, այո, հրեղեն խոսք է, իսկ ինչ ենք մենք հասցնում երեխաներին այդ հրեղեն խոսքից, մի սիգարետի ծուխ, մի լուցկու կրակ․․․ Այսինչ վեպի գաղափարական բովանդակությունը, այսինչ պոեմի պատկերները, այսինչ պիեսի դրական և բացասական կերպարները: «Հրեղեն խոսքը» կտոր-կտոր ենք անում, մասնատում, տեսակավորում, որ հեշտ լինի վերլուծելը: Բանաստեղծության հեղեղը ճզնում ենք խցկել ջրմուղի խողովակների մեջ և բաց թողնել կաթիլ-կաթիլ: Գիրք կարդալը ծով մտնելու նման է, պիտի զլուխդ պտտվի ծովի անսահմանությունից, պիտի հանկարծ քո մեջ շոշափես հավերժության ներկայությունը, պիտի հանձնվես տարերքին: Մենք նրանց ծով ենք մտցնում ազդանշանով և թույլ տալիս, որ խորանան մի քանի մետր միայն, ամեն քայլի ստիպում ենք, որ ետ նայեն, հո շատ չհեռացա՞ն ափից: Եվ ծովը դադարում է ծով լինելուց, դառնում է տաք ջրով լողավազան: Այդպես չե՞ն նրանք առաջին անգամ շփվում Պուշկինի, Թումանյանի, Տերյանի հետ: Գրականության անհայտ, կախարդական աշխարհը դառնում է թվանշան ստանալու համար տրված «տնային հանձնարարություն»: «Ապա, երեխաներ, ո՞վ կարող է տասըտասնհինգ կետով վերլուծել «Աբու-ԼալաՄահարի» պոեմի գաղափարական բովանդակությունը: Սկսենք սյուժեից, մի գիշեր արաբ նշանավոր բանաստեղծը վերցնում է ուղտերի քարավանը և հեռանում է Բաղդադից, ինչո՞ւ է հեռանում, ո՞վ կասի․․․»:

Հիշեց Սանոյանի տված շարադրությունները: Ի՞նչն ենք ուղղում՝ կետադրական սխալները, տառասխալները: Իսկ կայծը տեսնո՞ւմ ենք, երբ պատանին հանկարծ շեղվում է սովոր սխեմայից, որոնում և գտնում է իր բառերը․ «շեղվել ես թեմայից»,— գրում ենք կարմիր թանաքով․․․ Մի օր փորձե՞լ ենք գնալ հինգտասը տարի առաջ գրած «երազների» հետքերով, ի՞նչ դարձան: Չէ՞ որ այդ «երազներն» էլ դրվում են թվանշան ստանալու համար․ «Երազում եմ շինարար դառնալ, կառուցել Երևանը»— «գերազանց»— գրում ենք մենք, իսկ նա հինգ տարի հետո դառնում է կոշիկի խանութի

վաճառող։ Ոչ, նա այն ժամանակ էլ գիտեր, որ շինարար չի դառնա, բայց թե գրեր, որ առնտրական է ուզում դառնալ, դասատուն կարմիր թանաքով կուղղեր նրա «երազը»․․․

․․․ Եվ նրանք հարմարվում են, և նրանք ձնանում են, հետո դա դառնում է բնավորություն։ Եվ այսպես, կամացկամաց նրանք ատում են գրականությունը, որը ուրեմն, ճշմարտության բանալի չէ, որը հոգեկան վայելքի հնարավորություն չէ, որը պարզապես պարտադիր մի առարկա է, պիտի թվանշան ստանաս, ելք չկա։

Ելք չկա։

Մանկավարժական խորհրդի նիստը հետաձգվեց։ Առավոտյան 10րդ «բ» դասարանի աղջիկներից մեկը քարտուղարուհուն փոխանցեց Մարի Մելիքյանի նամակը, որը, ափսոս, ծրարված էր։ Վանունու մոտ այդ պահին նստած էին Դանիելյանը, Մամյանը, Անտոնյանը։ Վանունին բացեց, կարդաց բարձրաձայն։ «Ընկեր Վանունի,— գրում էր Մարին,— մի քանի օր առաջ ես եկա դպրոց, շատ կարճ, բայց հուսահատական զրույց ունեցա մեր ուսուցիչներից մեկի հետ, երեկ երեկոյան իմացա որոշ բաներ։ Ես այլևս դպրոց չեմ գա․ եթե հարկավոր է, կարող եք ձևակերպել հեռացում։ Արդեն մի շաբաթ է ես աշխատում եմ, եթե հաջողվի, կգնամ երեկոյան դպրոց։ Ուզում եմ իմանաք, որ այնքան էլ դժբախտ չեմ ձեր դպրոցի գոլ մթնոլորտից գլուխս ազատելու համար։ Մնաք բարով»։

— Լկտի աղջիկ, դեռ անձնազոհ է ուզում երևալ,— անմիջապես արձագանքեց Անտոնյանը։

— Պետք չէ,— մեղմ ասաց Մամյանը,— նա կարող էր նաև ձեր աղջիկը լինել կամ․․․ իմ։— Այս ինչ տխմար գաղափար է ներծծվել ուղեղի մեջ․ Մամյանը կուզենար ետ վերցնել իր բառերը, բայց․․․

— Իմ աղջիկը չէր կարող լինել։

— Կարող էր,– սառը ընդմիջեց Դանիելյանը,— ամեն մեկիս աղջիկն էլ կարող էր լինել։ Ի դեպ, նրա հայրը վաղուց լքել է մորն ու աղջկան։ Ինձ դասարանում երեկ ասացին։ Ես չգիտեի, թեպետ երրորդ տարին է, դաս եմ տալիս նրանց։

— Ես գիտեի,— ասաց Վանունին,— մորն էլ ճանաչում եմ, շատ լավ կին է:— Լռեց:— Ուրեմն մեկի հարցը լուծվում է ինքն իրեն: Գուցե պարզապես գործերը տանք գնա, հը՞. . . Իսկ այդ Արմեն կոչվածին պետք է հեռացնել: Քիչ առաջ խոսեցի, նա է դրանց խմբապետը: Պլյուս՝ իրեն պահում է դատախազի նման:

Մամյանն ինչո՞ւ նորից հիշեց Տերյանի տողը, «Օ՜, հայրենիք, դառն ու անուշ». . . Չէ, ինչ-որ բան կա այս պատմության մեջ, որ մնում է թանձր վարագույրի հետևում: Մի՞թե այսքան անօգնական ենք մենք: Հեռացնե՞լ, դա է մեր դեղատոմսը: Ո՞ւր ենք հեռացնում, ի՞նչ ենք հաստատում դրանով՝ մեր անկարողությու՞նը, մեր ո՞ւժը: Ո՞րը:

— Գուցե չշտապենք, ընկեր Վանունի:

— Երևի չշտապենք,— ասաց Դանիելյանը,— նույն խնդիրը հազար ու մի լուծում է ունենում, գուցե ես էլ փորձեմ խոսել տղայի հետ: Դեռ հայտնի չէ, թե ինչ որդ է շարժվում նրանց ուղեղներում: Հիշո՞ւմ եք Թումանյանի դպրոցի պատմությունը. ինչո՞վ վերջացավ, գիտեք, կարծեմ:

Մամյանը ուրախ զարմանքով նայեց Դանիելյանին:

— Գուցե սրան էլ գործերը տանք, թողնի գնա,— մեղմացավ Վանունին,– Նորքի զանգվածում մի դպրոց կա, դիրեկտորը մոտիկ մարդ է, ես կբացատրեմ:

— Իհարկե,— ասաց Անտոնյանը մանկավարժական տեսակետից ճիշտ կլինի:

Ճի՞շտ կլինի: Մամյանը դառը ժպտաց: Եվ այդ պատանին դպրոցից կգնա հաղթողի պես, որ այդքան մանկավարժ միասին չկարողացան կոտրել իրեն, ստորագրեցին իրենց թուլության դատավճռի տակ և իրեն պահ տվին մի ուրի՞շ դպրոցի. . .

— Գլխացավի դեղ չունե՞ք,— հարցրեց Վանունին:

— Ինձ մոտ կա,— ասաց Անտոնյանը,— ֆրանսիական հաբ է, կտրում է միանգամից:

— Նրանց շարադրություններն ահագին բան բացեցին: Կարծես հուշեցին ինձ,— ասաց Մամյանը:— Ես երևի կամացկամաց ճանաչեմ նրանց․․․

— Մինչ այդ նրանք կչվեն մեր դպրոցից,— ծիծաղեց Դանիելյանը:

—․․․ Եվ կյանք կմտնեն:— Վանունին կուլ տվեց գլխացավի հաբը և հիշեց, որ մյուս շաբաթ շրջանավարտների երեկո է, ինքը խոսք պիտի ասի: Քանիերորդ անգամ պիտի ասի նույն բառերը: Տեսնես բառերը թոշակի չե՞ն գնում: Չե՞ն մաշվում, երբ գործածվում են ամեն օր: Նույն բառերը: Նույն: Նույն:

Արմեն Գարասեֆերյանը բավական հանգիստ ընդունեց դպրոցի դիրեկտորի սպառնալիքը:

— Կարիք չկա մտատանջվելու:— Ասաց,— հեռացրեք, ընկեր Վանունի: Նորքի զանգվածն էլ առանձնապես հեռու չէ, ես ավելի հեռու գնալու հնարավորություն ունեմ, մեր տանը նույնիսկ շնորհակալ կլինեն ձեզ:

Սահակ Վանունին նախ տարակուսած նայեց իր դիմաց կանգնած պատանուն, խելագարվե՞լ է, ի՞նչ է, հետո ներսում ճչաց զսպված մի դառնություն․ լկտի, անպատկառ, փոխանակ լաց լինի, ներողության խնդրի, խոստանա կանոնավոր մարդ դառնալ․ գոնե հիմա խոստանա, իսկ երկու ամիս հետո գլուխն էլ քարը, կյանքը քիթը կտրորի, խելքի կգա:

— Ես խնդրելու ոչինչ չունեմ, հեռացրեք, դա շատ ավելի հարմար է ինձ:— Արմենի աչքերում մի մուգ տխրության երևաց, որ Վանունին չնշմարեց և որը պատանին ինքը ճզմեց անմիջապես, երևի վախենալով, որ հանկարծ կփլվի:— Ես կարո՞ղ եմ գնալ․․․

— Դուրս,— զսպված դառնությանը հորդեց միանգամից: Վանունին ձեռքը խփեց սեղանի ապակուն, և նրա ձայնը, նաև ջարդվող ապակա ձայնը՝ երևի արձագանք տվեց բոլոր հարկերում:

Արմենը հանգիստ տեղը դրեց աթոռը, որին նստած էր քիչ առաջ, մի պահ մոլորված (մոլորվա՞ծ) կանգնեց դիրեկտորի առաջ, հետո դանդաղ գնաց դեպի դուռը:

— Ցտեսության, ընկեր Վանունի,– կաշեպատ դուռը բացելով, ասաց նա, հետո մի պահ կարկամեց, ասես ծամում էր դառը մի նախադասություն և չէր կարողանում կուլ տալ:– Երևի ավելի ճիշտ կլիներ ասել՝ մնաք բարով. . .

Մնաք բարո՞վ. . . Վանունին նայեց ծածկված դռանն և խորապես անիծեց ինքն իրեն, որ երեսունյոթ տարի առաջ չլսեց հոր հորդորները և գնաց մանկավարժական ինստիտուտ: Հայրն ասում էր՝ դա գործ չէ, Սահակ, հիմա բոլորը դաս են տալիս, աշակերտ չկա:

Մագնիտաֆոնային սեր

Սոնա Միքայելյանը արագությամբ աչքի անցկացրեց Մարիի նամակը և դանդաղ, մտամոլոր դուրս եկավ Սահակ Վանունու առանձնասենյակից՝ առանց բառ ասելու: Մի՞թե աղջիկն իրենց զրույցն էր ակնարկում: Մարիի տարիքին Սոնան իրենց դասարանի ամենահմայիչ աղջիկն էր, հետո՝ համալսարանի ամենագեղեցիկ ուսանողուհիներից մեկը, հետո՝ շրջանի միսս-ուսուցչուհին, ինչպես մի որ կատակեց ժողկրթբաժվարը: Հետո՞: Հետո այն, որ շուտով կլրանա երեսունհինգը, իսկ ինքը դարձել է պաշտոնաթող գեղեցկուհի՝ ինչպես վերջերս խայթեց ուսուցչուհիներից մեկը: Ապրում է մոր հետ (ինչքա՞ն կապրի մայրը): Մտքերն արթնանում էին իրար խանգարելով, անտրամաբանական հաջորդականությամբ, և փողոցի ժխորը չէր ցրում նրա հոգու մուժը, ինչպես հույս ուներ: Մարին այն օրը ներս մտավ անսպասելիորեն: Դասերից հետո ինքը մնացել էր քիմիայի լաբորատորիայում, հաջորդ օրվա փորձերը պիտի նախապատրաստեր: Գլխացավ ուներ, տանը ոչ ոք չէր սպասում իրեն, որովհետև մայրը երեք օրով գնացել էր Կիրովական, եղբոր մոտ: Մարին ներս մտավ, այլայլվա՞ծ էր, ինքը շարունակեց զբաղվել փորձով, ինչ-որ նյութեր էր խառնում իրար, սպիրտայրոցը համառորեն չէր ենթարկվում: «Դուք կարո՞ղ եք մի քանի րոպե չընդհատել ինձ, հարցեր չտալ»: «Լսում եմ, Մարի»: «Կարո՞ղ եք: Շնորհակալ եմ: Ուրեմն, այն օրը դուք մոտավորապես ճիշտ տեսաք, ես պարում էի համարյա կիսամերկ: Հարցեր չտաք: Ես դա արի իմ կամքով: Արմենը միայն ասաց՝ կհանվե՞ս: Դատարկ բան է, ասացի, ծովափին միլիոն աղջիկ նույն տեսքով է, ի՞նչ կա որ: Ես գիտեմ, ծովափին ուրիշ է: Դուք գեղեցիկ եղել եք, հիմա էլ գեղեցիկ եք, ես գիտեմ: Մեր տղաներից շատերը սիրահարված են ինձ, ես գիտեմ, դա, իհարկե, դուր է, գալիս, բայց նրանք իմ մարմինն են ուզում միայն, և ես ցույց տվի: Սեր չկա: Սերը հորինել են գրողները, ձեր այդ Տերյանը, Եսենինը, ՍայաթՆովան: Հիմա կա միայն ցանկություն՝ այսինչ բանն ունենալու, մագնիտաֆոն, ջինս, այսինչ աղջկան: Նրանց

մեջ կա մեկը, որ ինձ նամակներ է գրում արդեն մի տարի։ Բառեր չեն, այլ կեղծամ, տարբեր գույնի՝ ոսկե, սև, տարբեր փափկության։ Չգիտեմ, գուցե նա սիրում է իսկապես, բայց ես կարդացել եմ հորս նամակները։ Օ՜, ինչ բառեր կան այդ դեղնած թղթերի մեջ, իսկ մայրս արդեն տասը տարի է կրծում է իր մենակության շղթան։ Ես պիտի վրեժ լուծեմ տղաներից՝ մորս համար։ Ես ուզեցի նաև դաս տալ փսլնքոտ Ռոմեոյին․ նա էլ, չէ՞, եկելցցվել էր իմ սրունքները տեսնելու համար, որովհետև Արմենը նրա ներկայությամբ ասաց՝ կհանվե՞ս։ Սկզբում, երբ սկսեցի պարել, նա փորձեց դուրս գալ, ինչո՞ւ»։

Աղջիկն ուսուցչուհուց երևի կարևոր մի նախադասություն էր սպասում, իսկ ինքը անսպասելիորեն ընդմիջեց․ «Այդ ամենն իզուր ես ինձ խոստովանում, Մարի, ես ոչ ձեր դասղեկն եմ, ոչ գրականության ուսուցիչը։ Երկուսն էլ ընկեր Մամյանն է, նրա հետ խոսիր»։

Ի՜նչ հայացքով նայեց Մարին իրեն, աստվա՜ծ իմ, ինչ դառը, փշրված հայացքով, հետո սառը ասաց, սառը չարախնդությամբ․ «Եվ դուք հավատացի՞ք իմ ասածներին։ Ես ստեցի, ես խաղում էի, ես դեր էի փորձում»։ Ու զնաց դեպի դուռը։ «Վատ չխաղացիր դերդ, Մարի, պատկերացնո՞ւմ ես, քիչ էր մնում հավատայի։ Կարող ես գնալ»։

Եվ հիմա՝ Վանունուն գրած այս նամակը։

Հիշեց երեկվա վեճը Վահան Մամյանի հետ։

«Դուք քիմիական մարդիկ եք ուզում, գրականությունից՝ քիմիական հերոսներ, որ ստացվում են զանազան տարրեր սինթեզելուց։ Մինչև ջրի մեջ միկրոբներ չլինեն, դա կենդանի ջուր չի լինի։ Գուցե նրանց արատներն այդ միկրոբնե՞րն են»։

«Կարիք չկա ծաղրելու իմ առարկան, որ ես պակաս չեմ սիրում, քան դուք Տերյան, մանավանդ, որ հիմա բավական շատ են ստեղծվում ձեր ասած այդ քիմիական գրքերից։ Միկրոբնե՞ր, այո, բայց ի՞նչ քանակությամբ։ Առանց միկրոբների, հայերեն ավելի ճիշտ կլինի ասել մանրէների, չի կարող կենդանի ջուր լինել, բայց չափից ավելի շատ չե՞ն այդ մանրէները, վտանգավոր չէ՞ այդ ջուրը»։

«Մենք հենվում ենք միայն մեր փորձի, մեր ապրած կյանքի վրա, ջահելների փորձը մեզ համար կարծես նշանակություն չունի»:

«Այդ պարը, ձեր գրասեղանի վրա, նույնպես փորձ է. . .»:

«Երկուսը կարող են նայել նույն բանին և տեսնել տարբեր բաներ: Այդ պարը, ձեր լեզվով ասած, գուցե լակմուսի թուղթ էր, որքան բան պարզեց և որքան դեռ կարող էր պարզել, եթե. . .»:

«Եթե խորանանք, փորձենք հասկանալ նրանց, այո՞»:

«Այո: Մենք հաճախ նրանց հետ փորձում ենք վարվել այնպես, ասես խնդիր ենք լուծում, որի պատասխանը նախօրոք նայել ենք խնդրագրքի վերջում: Իսկ չէ՞ որ Դանիելյանն է ասում, նրանցից ամեն մեկը տասն անհայտով հավասարում է: Եթե կարողանանք հայտնաբերել անհայտներից գոնե մեկը, հրաշք չէ՞. . .»:

«Դանիելյանը ձեզ դաշնակից չէ»:

«Ես դաշնակից չեմ որոնում: Ամեն ուսուցիչ իր ճակատամարտն է մղում»:

«Երբեմն հողմաղացների՞ դեմ»»

«Ինձ արդեն մի անգամ համեմատել են Դոն Կիխոտի հետ: Եթե հասկանալով դա արած լինեին, ես կմեռնեի հպարտությունից, բայց ծաղրեցին ինձ»:

«Կներեք, ես ծաղրելու միտք չունեի: Ես սիրում եմ Դոն Կիխոտին, բայց ավելի. . . ցավա կցում եմ»:

«Բարությունն անպաշտպան է, բարությունը բռունցքներ չպիտի ունենա: Ուրիշի բարությունը կարող է ծիծաղելի թվալ, եթե ինքդ. . . բարի չես. . .»:

Որտեղի՞ց հայտնվեց այս մարդը և ինչի՞ նա կարող է հասնել իր տարօրինակ լռությամբ, իր անպաշտպան բարությամբ, իր անսպասելի պայթյուններով:

«Կներեք,— հրաժեշտ տալիս ասաց նա,— ես միայն ձեզ հետ եմ այսպես երկար ու տաք խոսում: Ես ինքս ավելի շատ եմ կեղեքվում զանազան հարցականներից, ես ոչ մի հարցի պատասխան չունեմ»:

Փողոցը տանում էր Սոնա Միքայելյանին, բայց տագնապները չէր ցրում: Գուցե հարկավոր է հանդիպել Մարիին, ի վերջո, ինքը պարտավոր է իմանալ ճշմարտությունը: Երեկ Մամյանը տողեր կարդաց նրանց նոր շարադրություններից: Նա թույլ էր տվել գրել առանձին թղթերի վրա, չստորագրել անուն-ազգանուն: Զարմանալի տողեր էին՝ անկեղծ, տարօրինակ, սանձարձակ, նաև խելոք:

«Մեզ ասում եք, թե վախկոտ ենք: Ի՞նչ անենք, մեր դպրոցը երկու անդամ հրդեհվեց, երկու անգամ էլ գիշերով, թող մի անգամ էլ ցերեկով վառվեր, տեսնեիք, թե ինչպես կհանգցնեինք»:

«Մեր տունը լավն է և այն տունն է լավ, որտեղ լավ մարդիկ են ապրում: Եվ ամեն ընտանիք իր այլանդակն ունի: Մեր ընտանիքի այլանդակը ես եմ: Փորձեք կռահել ո՞վ եմ ես: Իսկ իմ մյուս շարադրությանը դուք գերազանց կդնեք, ես այնպիսի բաներ կգրեմ, այնպես ճիշտ կվերլուծեմ «Հացավանը»:

«Դուք ինչի՞ն եք թվանշան դնելու, ուսուցիչ, իմ տառասխալների՞ն, թե՞ անկեղծությանը: Գիտեմ, դուք ասացիք, որ թվանշան չեք դնելու, որովհետև անկեղծությունը չի կարելի գնահատել հինգբալյան սիստեմով: Ուրեմն, պատասխան գտեք ինձ համար, ես ուզում եմ տխրել և չեմ կարողանում: Այո, այո, ուզում եմ երբեմն տխուր լինել, մենակ, թափառել փողոցներում, լաց լինել եմ ուզում: Բավական է դեմքիս մի ամպ նշմարվի, մայրիկս բժիշկ է կանչում, հայրիկս՝ խելագարեցնում իր հարցերով, եղբայրս ծաղրում է, հո չե՞ս սիրահարվել. . . Իսկ ես պարզապես ուզում եմ մտածել, կտրվել առօրյա բաներից, ուզում եմ տխրել: դուք չե՞ք ծիծաղում այս տողերը կարդալով. . .»:

«Հորս ֆիննական գրասեղանը, որի վրա դեռ նա որևէ նամակ անգամ չի գրել, մեր ընտանիքում ավելի է խնամքի ու ուշադրության արժանանում, քան ես. . .»:

«Ի՞նչ կուզեի դառնալ, մինիստր, ահա թե ինչ, այո, այո: Կամ՝ շրջկոմի առաջին քարտուղար: Առաջին, հասկանո՞ւմ եք»:

«Իմ բախտը միշտ բերել է, ունեցել եմ ամեն ինչ: Հիմա էլ գիտեմ, դեռ դպրոցը չեմ ավարտել, բայց համալսարանում տեղս պատրաստ դրված է: Իսկ եթե անկեղծ եք ուզում իմանալ՝ զզվել եմ այդ ամենից, երազում եմ, որ գոնե այս անգամ բախտս չբերի, համալսարան չընդունվեմ և փորձեմ քայլել իմ ոտքերի վրա: Հիմա, այս պահին, ուզում եմ: Գուցե այս պահն անցնի և շարունակեմ «բախտի ճանապարհով»»:

Մենք, երևի իսկապես, չենք ճանաչում սրանց,— մտածեց ուսացչուհին, ոչ սրանց իրական արատները, ոչ իրական արժանիքը: «Միկրոբները»,— կասեր Մամյանը:

Մենք երևի հեռացել ենք երեխաներից, մեզ թվում է ճանաչում ենք նրանց, մեզ թեթև բան է թվում հոգի ճանաչելը՝ նրանց մի քայլով, մի անպարկեշտ արարքով կամ հարցով:

— Ոչ, ոչ,— բարձրաձայն արտաբերեց Սոնա Միքայելյանը, թեպետ քայլում էր մենակ, փողոցի ժխորի միջով:

Ո՞ւմ հետ է վիճում: Ինքն իր հե՞տ: Ջղազրգիռ փորձեց կանգնեցնել մտքերի հեղեղը, որովհետև հանկարծ հասկացավ, որ մտածում է Մամյանի բառերով, վիճում է նրա հետ, բայց... նրա բառերով: Բառերի հաջորդ շարքը, որ արթնացավ նրա մեջ, դարձյալ Մամյանի խոսքերի արձագանքն էր. «Մենք սխալներ ենք անում, և նրանք, կրիայի պես, թաքնվում են իրենց պատյանի մեջ: Քերականական սխալները, խնդրի մեջ թույլ տված սխալը հեշտ է տեսնել և ուղղել կարմիր թանաքով: Իսկ բնավորությա՞ն սխալը, որտե՞ղ դնել վերջակետ, որտե՞ղ հարցական»:

Մտամոլոր, տարտամ քայլերով մտավ վարսավիրանոց: Վաղուց չէր եկել: Ինչո՞ւ հենց այսօր մտավ...

— Երեկ զբոսայգում էի,— ասաց Սոնա Միքայելյանը:— Ինձնից քիչ հեռու մի զույգ էր նստած: Երկուսի արանքում մագնիտաֆոն էր դրված, երգում էր, ինչ-որ բառեր էր ասում, անգլերեն կարծեմ: Զույգը երբեմն-երբեմն համբուրվում էր: Նստեցի մոտ կես ժամ, նրանք ոչ մի բառ չասացին իրար, խոսում էր մագնիտաֆոնը, նրանք երբեմն համբուրվում էին: Համբուրվում էին թույլ, ալարկոտ... Ի՞նչ կասեք:

Մամյանը ծիծաղեց.

— Մագնիտաֆոնային սե՞ր: Կասեք երևի, որ փոխվել է մարդկանց բաղադրությունը: Չգիտեմ: Ինձ թվում է, բոլոր ժամանակներում էլ եղել են այդպիսի ալարկոտ հոգիներ: 17-րդ դարում էլ ամենքը Ռոմեո և Ջուլիետ չէին․․․

Նրանք տուն էին գնում դպրոցից: Երկուսին էլ տունը չէր ձգում: Սոնան ջղագրգիռ էր ու մտախոհ, չէր կարողանում որոշել՝ գտնի՞ Մարիին, թե՞․․․ խորհրդակցել Մամյանի հետ: Նա կասի՝ անպայման, նա կուրախանա: Իսկ եթե այս անգամ Մարին չուզենա լսել իրեն, կկարողանա դիմանալ այդ վիրավորանքին․․․

— Դու բոլոր դեպքերի համար արդարացում ունես: Նախանձում եմ:

— Արդարացում չէ, բացատրություն:

Նրանք մտան սրճարան:

Սուրճը դառն էր ու հաճելի:

— Բախտ բացել գիտե՞ս, Սոնա:

Ժպտաց, տարօրինակ մարդ է այս Մամյանը: Մամյանը խառնում է իր հաշիվները, իրեն զրկում որոշակիությունից, կտրուկ և վճռական եզրակացություններից: Առաջ ինքը գիտեր կյանքի շատ երևույթների բանաձևը, հիմա տատանվում է: Երեկ Դանիելյանն էլ խայթեց․ «Մամյան, դու ամենքիս բանաստեղծ ես դարձնելու»: «Չի կարելի լինել մաթեմատիկոս,— ասաց Մամյանը,— առանց մի քիչ բանաստեղծ լինելու: Ես չեմ ասել, քո հանճարեղ կոլեգաներից մեկն է ասել, անունը չեմ հիշում: Պարզապես պիտի վախենալ սխալվելուց․ մանկավարժի գործը դաշտը ականներից մաքրողի նման է, մի անգամ սխալվում են և վերջ»: Ո՞վ է այս մարդը, ամեն անգամ խոսում են դպրոցից, աշակերտներից, գրականությունից, քիմիայից, բայց երևի սա անձնական կյանք էլ ունի, չէ՞:

— Սիրո մեծ տեսաբան ես, Վահան, իսկ երբևէ, իրոք, սիրահարվե՞լ ես․․․

Սոնան գիտեր, որ նա մենակ է ապրում, բաժանվա՞ծ է, կի՞նը չկա կամ գուցե չի՞ ամուսնացել: Սեփական հարցը զնգաց նրա ականջներում․ ինչո՞ւ է խցկվում այս մարդու հոգու մեջ, ո՞ր իրավունքով: Առանց դուռը թակելու, առանց բանալիի․․․

— Դպրոցում սովորելիս սիրահարվել եմ: Եվ շատ թունդ,— ասաց Մամյանը:— Դպրոցում, երևի հարյուր տարի առաջ: Հետո՞․․․ Անհետաքրքիր մարդ եմ երևի աղջիկների համար: Իսկ երեսունինիգից հետո սկսեցի վախենալ: Տասնյոթքսան տարեկանում աղջկա մերժումը արկած է, նույնիսկ հետաքրքիր, եթե վիրահատություն է, ապա՝ շատշատ կույր աղիքի: Ծեր հոգու վերքերը չեն սպիանում:

— Կներեք,— շփոթվեց Սոնան,— կանացի անխելք հարց էր․․․

Նրանք ևս մի-մի գավաթ սուրճ խմեցին, երկար, տխուր նայեցին սրճարանի առաջ, ջրավազանի մեջ լողացող երեխաների երամներին, ունկնդրեցին նրանց ժխորը, ասացին ևս մի քանի բառ («ո՞ւր ես գնալու արձակուրդին», «չգիտեմ», «դո՞ւ», «տեսնենք»), չխոսեցին մանավանդ երեխաների մասին, որովհետև հենց նրանց մասին էին մտածում:

— Բախտս չբացեցիր,— երբ վեր էին կենում, դժգոհեց Մամյանը:– Գիտե՞ս, ես հավատում եմ սուրճի բաժակին: Մի ծիծաղիր:

Բաժանվեցին կանգառում․ ամեն մեկն ապրում էր քաղաքի մի ծայրում, որտեղ, ամեն օրվա պես, հավատարիմ սպասում էր մի տաք, փափուկ մենակություն, որ կոչվում է անձնական կյանք:

— Մինչև վաղը:

— Մինչև վաղը:

«․․․Իսկ մնացածնե՞րը»

Սահակ Վանունին ծալեց, գրպանը գրեց ելույթը, որ ինչպես միշտ, Անտոնյանն էր գրել: Ելույթի մեջ լիքը թռչակի գնալու բառեր էին, վաստակավոր բառեր: Երևի պիտի ասեր, որ Մամյանը գրի: Կամ գուցե ավելի լավ է՝ հենց այնպես խոսել: Քիչ առաջ, ի վերջո, ստորագրեց Արմեն Գարասեֆերյանի հեռացման հրամանը:

Մանկավարժական խորհրդում դեմ եղավ Մամյանը, և, այ քեզ զարմանք, Դանիելյանը․ որևէ բան չասաց, պարզապես դեմ քվեարկեց։ Մամյանը խոսեց երկար-բարակ, կրկնեց այն, ինչ այն օրերին Վանունին հազար անգամ լսել էր իր առանձնասենյակում ։

— Սիրելի երեխաներ,– սկսեց Վանունին, հետո Նայեց իր առաջ նստած տասներորդ դասարանցիներին,— այ թե երեխաներ եք, հա,— դահլիճում շշուկ անցավ՝ քմծիծաղ, փսփսոց,— ի՞նչ ասեմ՝ ընկերնե՞ր, պատանինե՞ր․․․

— Լեդիներ և ջենտլեմեններ,— խորքից հուշեց մեկը, դահլիճը ուրախ ծիծաղեց։

Վանունին չտեսավ ով էր։ Ախ, ամեն տարի կրկնվող այս բառերը։ Աշակերտների մեջ, նախավերջին շարքում նստած էր Սոնա Միքայելյանը․ մանկխորհրդում նա էլ չխոսեց։ Ինչ-որ տարօրինակ բան է կատարվում մի քանիսի մեջ։ Մինչև այժմ մանկավարժական խորհուրդը Վանունու համար շախմատի մոտավորապես նույն խաղն էր՝ վաղուց հայտնի, մշտապես կրկնվող քայլերով։ Հիմա մի քանիսը խաղի այլ շարունակություն են ընտրել, անսպասելի քայլեր են անում, և Վանունին, չէր կռահում շարունակությունը։ Ինքը ինչպե՞ս խաղա․ ձիո՞ւ քայլով, զինվորնե՞րն առաջ մղի։ Մամյանը Վանունու համար համարյա հասկանալի էր, նոր ուսուցիչ է, ուզում է դուր գալ ջահելներին, մի քիչ էլ կարծես այս աշխարհից չէ։ Բայց որ Դանիելյա՞նն էլ՝ միշտ կծու, խստաբարո և ամեն հարցի պատասխանը գրպանում պահած․․․

— Դե լավ,— մտքի թելը վերջապես գտավ, մատին ոլորեց Վանունին,— դուք արդեն մեծ մարդ եք և տասը տարի է, որ մենք խոսում ենք իրար հետ, թեպետ երբեմն դուրս է գալիս, որ ամեն մեկս իր համար է խոսում։ Երկու ամիս, և դուք կավարտեք դպրոցը, ինչպես ասում են՝ կյանք կմտնեք։ Սա մեր ավարտական երեկոն չէ, ուղղակի ես ձեզ ուզում եմ մի քանի բան ասել․․․ Դուք գիտեք, որ մեր դպրոցը քաղաքում լավ համարում ունի։ Միայն անցյալ տարվա շրջանավարտներից քսանութը ընդունվեցին։ Անունները լավ գիտեք, բայց չի խանգարի նորից հիշել․— և Վանունին ձախ գրպանից հանեց ինչոր թուղթ, սկսեց մեկիկ-մեկիկ կարդալ, թե շրջանավարտներից ով որտեղ է ընդունվել, չմոռանալով նույնիսկ Սաթենիկ Վարդումյանին, որ ընդունվել էր առևտրի տեխնիկում․․․— մնացածնե՞րը, իսկ մնացածները, կարող ենք ասել, համարյա բոլորն աշխատում են գործարաններում, կան և շինարարության վրա, ուրիշ հիմնարկներում․․․ Այդ ո՞ւր, Վահան Սարոյան․․․

Վահանը արդեն դռների մոտ էր։

— Ժամադրված է,— ծիծաղեց ինչոր մեկը։

— Ո՞ւր ես գնում, Վահան,— կրկնեց Վանունին,— քեզ հետաքրքիր չէ՞․․․

Վահանը մի քանի վայրկյան անվճռական մնաց դռների մոտ, հետո ասաց․

— Ես․․․ ես հավանորեն ձեր ասած «իսկ մնացածների» մեջ լինեմ, բացի այդ ժամադրված եմ։ Արմենի հետ, եթե հետաքրքրում է ձեզ․․․

— Ձեր կիսատ կռի՞վն եք շարունակելու,— Վանունու ձայնը դողաց, բայց նա կարողացավ զսպել հաջորդ նախադասությունը։ «Անիծվի այս հացը, որ մենք ենք ուտում»,— ասաց նա մտքում և ծխելու անդիմադրելի պահանջ զգաց։

— Ուրիշ կռիվ, ընկեր Վանունի,— Վահանը մի տեսակ տխուր նայեց դահլիճին,— ուրիշ կռիվ ենք շարունակում, երևի էլի կպարտվեմ,— «էլի»-ն հնչեց դառնությամբ, իսկ Արմենի անունը արթնացավ հանկարծ, նա պարզապես ուզեց տալ Վանունու համար ամենատհաճ անունը, բայց անմիջապես էլ մտածեց, որ հարկավոր է տեսնել Արմենին։ Այդ «ուրիշ» կռիվը հայտնի էր միայն իրեն, ողջ դպրոցում միայն իրեն։— Ես հենց այնպես ասացի, ընկեր Վանունի, բայց իսկապես պետք է գնամ, կարելի՞ է․․․

— Հենց այնպես գնա,— տեղից սրամտեց Անտոնյանը։

— Գնա, տղա ջան,— հայրաբար ասաց Վանունին։

Դահլիճը աղմկեց, ծիծաղեց, փսփսաց ու հանդարտվեց, բայց ամեն ինչ խանգարվեց, ներկայացումը դուրս եկավ սովոր հունից։ Վանունին կմկմաց ևս մի քանի նախադասություն, հետո ձայն տվեց երկու-երեք աշակերտի, որոնք ասացին, ավելի ճիշտ՝ կարդացին, որ իրենք ամբողջ կյանքում կաշխատեն բարձր պահել Մովսես Խորենացու անվան դպրոցի պատիվը։

— Ես իրավաբանական եմ գնալու,— ասաց Աշոտ Քանքանյանը։

— Դե, իհարկե, Աշոտ ճշմարտախոսն էլ ո՞ւր պիտի գնա: Կաշառք դու հաստատ չես վերցնի:

— Կվերցնի,— մռայլ ասաց Սմբատ Թումանյանը,— նա բոլոր հանցագործներին բաց կթողնի, անմեղներին կպատժի:

— Չափդ իմացիր,— Աշոտը, չգիտես ինչու, հանկարծ գունատվեց,– չափդ իմացիր, թե չէ. . .

— Իսկ ես քեզ մի խորհուրդ տամ,— լրջացավ նաև Սմբատը,— կաշառքիդ չափն իմացիր: Աշխատիր չափավոր վերցնել, այդպես երկար են մնում:

— Վերջ տվեք, տղաներ,— ավագ ջոկատավար Համիկ Սիմոնյանը փորձեց խաղաղեցնել աքլորանալու պատրաստ դասընկերներին,— այսպիսի գեղեցիկ օր. . . Դուք անհարմար չե՞ք զգում. . .

— Ես ոչ մի տեղ էլ չեմ գնալու,— հանգիստ ասաց Տիգրան Մանուկյանը,— հոգնել եմ:

— Դու «իսկ մնացածների» մեջ ես. . .

— Հոգնել եմ:

— Հնարավոր լիներ, ավարտեինք ու անցնեինք թոշակի:

Ծիծաղեցին: Լրջացան:

«. . . Իսկ մնացածները»: Սահակ Վանունու թեթև, հենց այնպես ասած խոսքի մեջ, եթե հնարավոր լիներ քույքայել այդ խոսքի միջուկը, տարրալուծել այդ խոսքի բուն իմաստը, անզեն աչքով անգամ կհայտնաբերեր քաղցր մի թույն, որ վտանգավոր է հատկապես չձևավորված հոգիների համար: Ուրեմն, տասը տարի շարունակ դպրոցի օդում խլրտացող նվիրական բառերը գունավոր փուչիկներ են եղել, կյանքի տարբեր և գեղեցիկ ճանապարհների մասին այդ օդը լցրած զրույցները հեքիաթ են եղել, խանդավառ շարադրությունների թեմա, ուրեմն, պարզվում է, միայն մեկ

ճանապարհ կա դպրոցի պատիվը ոսկեզօծելու, միայն մեկ… եթե ճիշտ է Սահակ Վանունին: Ֆիզիկոս, գեներալ, գրող, ճարտարապետ՝ այդ ամենը, իհարկե, սքանչելի է: Այգեգործ, քարտաշ, հացթուխ, փոստատար, դերձակ՝ աշխարհն աշխարհ է ամենից առաջ սրանցով: Ո՞վ ասաց: Ոչ Վանունին: Շրջանավարտների անցյալ տարվա հավաքին Վանունին բավական երկար ու սրտառուչ ներկայացրեց դպրոցի սաներից մեկին, որ շրջսովետի գործկոմի բնակարանային բաժնի պետն էր և լուրջհանդիսավոր նստած էր նախագահության սեղանի առաջին կարգում, նույն պահին, մեկ ուրիշ սան՝ քարտաշ Սանասար Սարյանը, կանգնած մնացել էր պատի տակ: Ոչ, ոչ, ամեննին վատ մարդ չէր նաև բնակարանային բաժնի պետը, բայց աննշան մի մանրուք, չէ՞ որ նա տնօրինում է Սանասար Սարյանի կառուցած բնակարանները: Հասկանո՞ւմ եք՝ մեկը կառուցում է, մյուսը՝ տնօրինում: Հնարավոր էր, որ Սանասար Սարյանն էլ նստած լիներ նախագահությունում, այդպես շատ է պատահում, բայց որ բնակարանային բաժնի պետը ոտքի վրա մնացած լինի պատի տակ․ այդպես երբեք չի պատահում: Որովհետև Սահակ Վանունու համար նա անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսի համար և ուրիշ շատ բան ունի, իսկ մնացածները՝ այգեգործ, քարտաշ, հացթուխ, փոստատար, դերձակ:

— Ես գյուղատնտեսական, երևի:

— Ծնվել ես ասֆալտին և գյո՞ւղ…

— Ասֆալտի վրա էլ գյուղատնտեսի համար շատ տեղ կա: Տեղը պիտի ճարես:

— Եթե ուրիշ բան չեղավ, կչվեմ ֆիզկուլտուրայի ինստիտուտ:

— Հա, դու հարյուր մետր լավ ես վազում:

— Նախ տնտեսագիտական կփորձեմ:

— Բժշկական, թեպետ…

— Պատմական, հետո ինչ ուզեմ՝ կաշխատեմ:

— Բացի պատմաբանից:

Կատակելով, լրջանալով, սրամտելով, աղմկելով՝ պատանիները վտակ-վտակ դուրս էին հոսում դպրոցի դռներից և նրանցից ոչ մեկը չէր մտածում ճեղքել Սահակ Վանունու «իսկ մնացածները» խոսքի միջուկը, ոչ մեկը չէր մտածում տարրալուծել այդ խոսքի բուն բաղադրությունը, որովհետև նրանցից ոչ մեկը իրեն չէր երևակայում «իսկ մնացածների» անանուն, անհասցե շարանի մեջ:

Տխուր այդ հանդեսից հետո Մամյանը խնդրեց, որ Վանունին մի րոպե լսի իրեն․

— Արմենի հրամանը մի ստորագրեք: Ես դա պահանջում եմ: Եվս երկու օր ժամանակ տվեք:

— Ստորագրել եմ:

— Ոչինչ,– առաջին անգամ խայթեց Մամյանը:— Մարմարի վրա չի փորագրված ոչ հրամանը, ոչ ստորագրությունը:

Վանունին թունոտ նայեց իր առաջ կանգնած ուսուցչին, նա մոռացել էր առաջարկել, որ նստի, իսկ սա՝ մինչև չառաջարկես, չի նստի: Այդպես ավելի լավ է, թող մնա ոտքի վրա: Հանգիստ, փափուկ մարդ է թվում, բայց մեկ էլ տեսար խայթեց: Ինչպես հիմա․ սրա բառերը տեսեք՝ մարմարի վրա չես դրել սաորագրությունը:

— Դուք ավելի լավ է զբաղվեք դասարանով: Ամեն մեկս լավ կլինի մեր գործն անենք: Դուք իմ առաջ եք պատասխանատու, ես՝ մինիստրի: Իմ գլուխն էլ այնտեղ չեն շոյում:

— Կարելի է բացատրել նաև մինիստրին:

— Նախ պիտի կարողանաս մինիստրի մոտ ընկնել, հետո պիտի կարողանաս, որ նա քեզ լսի:

—․․․ Եթե թույլ կտաք, ես գուցե փորձեմ տեսնել նրան, բացատրել:

Վանունին անկեղծ ծիծաղեց:

Մամյանը չէր կարող և չուզեց ասել, որ Ռուբեն Սաֆարյանը իր դասընկերն է, իրար հետ սովորել են ութ տարի։ Ռուբենին տեսնելու նա ուրիշ պատճառ էլ ուներ։ Երեկ հանդիպեց Մանուկին, որ շինարար է, աշխատում է մինիստրության շինվարչությունում․ «Երեխա ժամանակ քանդում էինք դպրոցը, հիմա շինում ենք»,— կատակեց։ Մանուկի գործերը լավ չեն, շինարարության գծով տեղակալը, Մամյանը չգիտեր, որ դա Սոնա Միքայելյանի հորաքրոջ տղան է, վերջերս սկսել է հետապնդել Մանուկին, իսկ Մանուկը չի կարողանում ընկնել Ռաբենի մոտ, որ բացատրի։ Ռուբենին վաղուց չի տեսել։ Չէ, անպայման կգնա Ռուբենի մոտ, մանավանդ մայրն էլ մի քանի ամիս առաջ պատվեր տվեց։ Կգնա, կխոսեն, կբացատրի Մանուկի վիճակը։ Կասի նաև Արմենի մասին։

— Փորձիր,— ի վերջո, ծիծաղը զսպելով, ասաց Վանունին,— դու լավ չես ճանաչում Ռուբեն Սաֆարյանին։

«Պայթյուն»

«Նստիր, վեր մի կենա։ Նստիր։ Ո՞ր արձանն է ինքը մոտենում։ Նրանց են մոտենում, այսինքն արձաններին։ Կարելի է, չէ՞, քեզ բարևել։ Հո չե՞ս նեղանում, որ քեզ բարևում են։ Երևում է նոր քարտուղարուհիդ դեռ չի վարժեցված քո վարքուկարգին։ Պատկերացնու՞մ ես, անմիջապես, հենց ասացի հին ընկերդ եմ, միացրեց հեռախոսը։ Հո չե՞ս նեղանում, որ հետդ դուղով եմ խոսում, ինձ թվում է՝ կնեղանաս, եթե դուք ասեմ։ Նախորդ քարտուղարուհիդ, ինչպես մայրս կասեր, օձի կծածն էր երևում՝ երբ էլ զանգեի, դու կամ խիստ զբաղված էիր, կամ քո մոտ կարևոր խորհրդակցություն էր, կամ «մյուս» հեռախոսով խոսում էիր վերևի հետ, կամ ընդունում էիր ընտրողներիդ։ Իսկ մնացած ժամանակ՝ դու «քեզ մոտ չէիր»։ Լսիր, դու հիմա երևի իսկապե՞ս քիչ ես լինում «քեղ մոտ», հը՞․․․ Կամ գուցե արդեն չես էլ ուզում ինքդ քեզ հետ լինել, քեզ մոտ, ինքդ քո դեմ-դիմաց։ Երևի արդեն ավելի հաճելի է լինել քո այսօրվա «ես»-ի հետ, բայց ախր հո չե՞ս կարող ինքդ քեզնից դատարկվել։ Իսկ քո ներսում, ախր, ուրիշ շատ բան կա՝ ուզե՞ս, թե՝ չուզես։ Հասկանում եմ, դու հիմա իրոք զբաղված մարդ ես, ես էլ ոչ քո ընտրողներից եմ, ոչ «վերևի» հեռախոս, ես ընդամենը քո հազարավոր ուսուցիչներից մեկն եմ․․․ Դեմքդ մի խոժոռիր, կատակ եմ անում, հո չե՞ս նեղանում, որ կատակ եմ անում։ Ի՞նչ հարցով եմ եկել, ինչո՞վ կարող ես ինձ օգնել։ Ոչ մի հարցով, պարզապես եկել եմ, օգնության խնդիր էլ չունեմ, իսկապես չունեմ, հանգիստ նայիր, մի կնճռոտիր ճակատդ։ Լսիր, մարդ, իսկ չի՞ կարող, որ, օրինակ, դու օգնության

կարիք ունենաս, ասենք, հենց իմ օգնության կամ մեկ ուրիշի: Քմծիծաղ մի տուր: Միգարետ կարո՞ղ եմ վերցնել, իմը մոռացա ընդունարանում: Լավ սիգարետ է: Ծխենք, մի քիչ նայենք իրար... Իսկ հիմա, իսկականից հարցրու, թե ինչ կաչկա, հարցրու, ամուսնացե՞լ եմ, թե՞ ոչ, հիշո՞ւմ ես, չէ՞, որ ես ընտանիք չունեմ, որ ոչ մի աղջիկ այդպես էլ ինձ չսիրեց: Հարցրու, էլի՞ հին տանն եմ ապրում: Ահագին հարց կա, չէ՞, աշխարհում, որևէ հարց տուր, մի խնայիր: Ես հիմա գնալու եմ, տակից ոգնին հանիր, նստիր հանգիստ, ընկերաբար ժպտա, ասա մեր հին, միամիտ բառերից մեկնումեկը... Կզարմանաս, բայց, երդվում եմ, ես ոչ մի ցանկություն չունեի քեզ մոտ գալու, մայրս հոգիս հանեց, թե գնա: Հիշում ես, չէ՞, որ ես մայր ունեի: Մայրս, ուրեմն, մի քանի ամիս առաջ ինչոր խառը երազ էր տեսել քո վրա ու այդ երազից հետո հանգիստը կորցրել է, չորս թե հինգ անգամ զանգահարել է, որ ձայնդ լսի, քարտուղարուհուդ ձայնն է լսել, վերջին անգամ էլ այդ ձայնը բավական քաղաքավարի զգուշացրել է, թե ընկեր Սաֆարյանի ընդունելության օրը ուրբաթն է, ժամը երկուսից հինգը, հարցրել էր՝ մայրս ուսուցի՞չ է, թե՞ ծնող, զգուշացրել էր, որ հարկավոր է նախօրոք ցուցակագրվել: Մայրս, դե միամիտ, հավատացյալ կին, ասել է՝ ի՞նչ Սաֆարյան, ես Ռուբենին եմ ուզում: Բոլորովին գլուխ չի հանել հատկապես ցուցակագրվել բառից: «Իմ տղայի ընկերն է Ռուբենը,— ասել է,— ձայնն եմ ուզում լսել»:— «Մայրիկ,— ասել է քարտուղարուհուդ ձայնը, պատկերացնո՞ւմ ես, ասել է՝ մայրիկ, դրա համար էլ շնորհակալություն,— մայրիկ, ախր ընկեր Սաֆարյանը սովորել է չորս, թե հինգ դպրոցում, առնվազն մի երեք-չորս հազար մարդու հետ նույն տարիներին, եթե այդ երեքչորս հազարի մայրն էլ ուզենա նրա ձայնը լսել... Հիմա ո՞վ չի ուզում ընկեր Սաֆարյանի ձայնը լսել...»: Այդպես էլ ասել է և դրա մեջ, իհարկե, ահագին ճիշտ բան կա, բայց ճիշտ ինձ համար և ոչ թե մորս: Մի խոսքով՝ մայրս ամիսներ առաջ ստիպեց խնդրեց, որ քեզ տեսնեմ, իսկ ես նրան չէի կարող խաբել, դրա համար էլ եկա, որ քեզ իսկապես տեսնեմ: Մայրս շատ խառը երազ էր տեսել, ասաց, այ տղա, ընկերդ երևի նեղության մեջ է... Մի ծիծաղիր... Գիտեմ, գիտեմ՝ երկուս անց կեսին կարևոր խորհրդակցություն ունես, ես քիչ հետո կգնամ: Լսիր, մայրս ստիպեց, որ սերկևիլի մուրաբա բերեմ քեզ, ահա, ընդունիր օրինական ապրանքդ, նա դեռ հիշում է, որ դու այդ մուրաբան շատ ես սիրում, ինքն է եփել, իր ձեռքով...

Լսիր, ինչ անուշ բան է, չէ՞, որ կան մարդիկ, որ դեռ հիշում են, թե մենք ինչ մուրաբա ենք սիրել քսան տարի առաջ: Ծիծաղելի՞ է: Ի՞նչն է ծիծաղելի... Ներիր, աստծո սիրուն, ներիր երբ որ ես գնամ, մուրաբան կարող ես տալ քարտուղարուհուդ, ընդմիջումներին թեյ են խմում, չէ՞, բայց ես գնամ՝ հետո: ես հարկադրված էի վերցնել,

մայրս շատ կնեղանար, եթե չվերցնեի․․․ Ես հիմա մորս առաջ Քրիստոսի պես արդար եմ, մուրաբան հանդիսավոր բերելիանձնել եմ քեզ։ Մորս խաբել դեռ չեմ սովորել։ Ասում են խաբելը հիմա դատարկ բան է, բայց դեռ չեմ սովորել, ես դե հին դմբո եմ, կամ դոդ՝ ինչպես դու էիր կնքել ինձ դպրոցում։ Գործե՞րս, ի՞նչ ասեմ, ամեն ինչ կարգին է, քո օրհնությամբ աշխատում եմ նոր դպրոցում։ Մովսես Խորենացու անվան դպրոցում, դու գիտես, երեխաներին լեզու-գրականության եմ սովորեցնում։ Ծիծաղում են Տերյանի վրա, Պետրոս Դուրյանին «ռաբիզ» են ասում, հայերի մեջ ոչ մի հիպի գրող չկա՞, ասում են։ Լսիր, Տերյանի վրա հռհռում են, դա քեզ բոլորովին չի՞ մտահոգում․․․ Ժամացույցդ թող․ ախր ես ժամանակ շատ ունեմ, կարելի է ասել՝ ես ժամանակի միլիոնատեր եմ, կարող եմ քեղ ժամանակ պարտք տալ։ Առանց տոկոսի։ ինչքան ուզում ես։ Չեմ էլ պահանջի, որ վերադարձնես, ես ժամանակ շատ ունեմ։ Երեկ, նույն այս ժամին Նվարդ Պարոնյանր լաց էր լինում մեր հին ուսուցչանոցում։ Զանգահարեց, կանչեց ինձ, գնացի։ Երկուսով էինք։ Քեզ մի քանի օր առաջ նամակ էր գրել, թե ինչ հարցով, չասաց, դու էլ մակագրել էիր գործերի կառավարչիդ, նա էր ընդունել։ Սառը, ապակե աչքերով մի մարդ է, քիչ առաջ տեսա, իսկույն հասկացա, որ հենց ինքն է։ Ինձ թվաց, նա իր սեղանի հեռախոսներից մեկն է, ինձ թվաց նրա վրա կարելի է որևէ հեռախոսի համար հավաքել, բացի, իհարկե, շտապ օգնությունից։ Ուրեմն, ահա ապակե այս մարդն էր ընդունել մեր հին ուսուցչուհուն, քաղաքավարի ասել, որ դու շատ զբաղված ես և, ցավոք, չես կարող ինքդ ընդունել․․․ Լսիր, ասացի, չէ՞, իմ Ժամանակից վերցրու, դրա հաշվին էլ կընդունես նաև քո հին ուսուցչուհուն։ Ընդունիր հա՞, լսիր, տես ինչ է ասում, ախր ուսուցիչը շատ դժվարությամբ է որևէ բան խնդրում իր հին աշակերտից։ Ասե՞մ իրեն, որ կընդունես, հը՞․․․ Տեսնե՞նք․․․ Ես, մեկ է, դեռ մի քիչ կնստեմ՝ որքան էլ նայես ժամացույցիդ։ Ենթադրենք, թե հիմա էլ ինձ հետ ես խորհրդակցում։ Դու որևէ մեկի հետ հիմա, իրոք, խորհրդակցո՞ւմ ես։ Թե՞ հիմա ամենքը միայն քեզ հետ են խորհրդակցում։ Իսկ Արմենի հոր թաղմանն ինչո՞ւ չեկար։ Երկու տարի առաջ երևի կգայիր, հիմա՝ չեկար։ Հիշո՞ւմ ես ուստա Պարթևին, մի անգամ հորդ փոխարեն դպրոց եկավ, հիշո՞ւմ ես, ես ու դու ընկեր Շուշանյանի կրկնակոշիկները մեխել էինք հատակին, հազավ թե չէ՝ շրըրը՛մփ․․․ Ուստա Պարթևը մեռավ։ Չե՞ս իմացել։ Հա, երևի քեզ հետ չէր համաձայնեցրել իր մահը։ Սխալ է մեռել։ Մի թթվիր, պատասխանիր ինձ մի ուրիշ սուր, կծու, թեկուզ կոպիտ խոսքով, ձեռ առ ինձ․․․ Իսկ ուստա Պարթևին արքայավայել թաղում արեցինք, մեր դասարանից բոլորը կային, ամբողջ դպրոցն էր հավաքվել։ Ես տեղնուտեղը հորինեցի, որ դու՝ մինիստրությանդ գործերով Հնդկաստան, թե Լաոս ես գնացել, բոլորն այնպես միանգամից ու այնպես անվերապահ հավատացին, որ ես էլ կասկածեցի, գուցե իրո՞ք դու քաղաքում չես։ Բայց երկրորդ օրը Սուրենը քեզ տեսել էր թատրոնում,

զանգահարեց ինձ, ես մի կերպ շարունակեցիծաղկեցրի սուտս, ասացի, որ դու նույն օրն ես եկել և օդանավակայանից ուղիղ գնացել ես թատրոն, աշխատանքդ է դա պահանջել: Մեր միամիտ Սուրենը նույնիսկ խղճաց քեզ․ դա էլ մի կյանք չէ, ասաց, թատրոն էլ գնում են իբրև աշխատանք: Գերեզմանատանը երկար նստեցինք, տխրեցինք: Մեր դասարանցի ամեն մեկի հոր մահով ես ավելի լրիվ եմ որբանում: Ուստա Պարթևը մեր դասարանի ամենավերջին հայրն էր, ուրեմն հիմա մենք լիակատար, ոտից գլուխ որբ ենք: Լսիր, պատահո՞ւմ է, որ դու հիմա տխրես: Ինչոր անծանոթ մի ժպիտ է գոյացել քո դեմքին՝ անստորագիր, ջրալի, անհասցե ժպիտ: Լսիր, վերջին անգամ ե՞րբ ես տխրել: Ինձ թվում է, եթե հիմա ասեմ, որ մայրս երեկ մահացավ, դու նույն այդ քո ժպիտով կնայես ինձ․ դու երևի հիմա չես էլ լսում ասածներս, այնքան վարժվել ես, որ այստեղ միայն քեզ, քեզ լսեն: Մեծ զոհաբերություն է, չէ՞, եթե դու ես լսում: Մի խոժոռվիր: Ես եկել եմ քեզ տարօրինակ բաներ ասելու, հույս ունեմ՝ քարտուղարուհիդ այլևս հեռախոսը չի միացնի, և դու ստիպված չես լինի ասելու՝ լավ, արի՛: Ես, ուրեմն, չեմ գնա, մինչև ամեն ինչ չասեմ․ համարիր դա մեղադրյալի վերջին խոսք, որ դատարանում էլ ոչ ոք չի ընդհատում: Դու ինձ դուրս չես անի, չէ՞․․․ Ծեր մարդ եմ, շատախոս, մերոնք մի տեսակ ծերացել են, ասենք, ժամանակն է․․․ Իսկ ինձ նախորդ դպրոցում ներկայացրել էին վաստակավոր ուսուցչի կոչման: Ստոր բան է, չէ՞, ամբողջ կյանքումս դասատուների հոգին հանել եմ, դաս խանգարել և հիմա․․․ Ես, իհարկե, կարծում եմ, որ այդ կոչումը չեն տա, բայց եթե հանկարծ․․․ Վաստակավո՛ր: Եթե այդ առիթով հավաքվենք տղաներով, կգա՞ս․․․ Ցուցակը դու կազմիր, թե ում հրավիրեմ, կարող է պատահել մերոնցից մեկնումեկին չես ուզում տեսնել, ասա, մի՛ քաշվիր: Միայն թե գործերի կառավարիչիդ չհանձնարարես, որ այդ ցուցակը կազմի, վախենում եմ, թե նա ինձ էլ չմտցնի ցուցակի մեջ․․․ Այ, դա քո իսկական ծիծաղն էր, լավ է, որ չես մոռացել․․․ Մի կարգին հռհռա, ընդունարան չի հասնի ձայնդ, քարտուղարուհիդ էլ դեռ նորմալ մարդ է, ինձ շատ հարգանքով բարևեց, ասաց, որ տղան մեր դպրոցում է սովորում: Երևի դրա՞ համար միացրեց հեռախոսը․․․ Չէ, ի՞նչ եմ ասում, նա հեռախոսով երեսս հո չէ՞ր տեսնում, ես անունազգանունս էլ չասացի, ասացի, պարզապես, որ հին ընկերդ եմ: Հավատաց: Պատկերացնո՞ւմ ես, անմիջապես հավատաց, տեղեկանք չպահանջեց, բնութագիր չպահանջեց, պարզապես հավատաց մարդու խոսքին: Մարդու: Խոսքին: Հավատաց: Շրջանառությունից դուրս եկած բառեր են, չէ՞: Մի բան խնդրեմ Ռուբեն․ մորս զանգահարիր հենց հիմա, ուզո՞ւմ ես ես հավաքեմ հեռախոսի համարը: Ասա նրան, որ լավ ես, որ շատ հավանեցիր սերկևիլի մուրաբան, հետո կտաս քարտուղարուհուդ կամ կթափես: Մի փափուկ, հին, լավ բառ ասա մորս, հը՞․․․ Հետո՞ կզանգահարես: Կատակ արի, հիմարհիմար դուրս եմ տալիս, գլուխդ տանում, իսկ քո գլուխը հիմա

շատ է հարկավոր Հայաստանի բոլոր դպրոցներին: Իմ գլուխն ի՞նչ, համարյա դատարկ է, լիքը միայն անցյալի տխուր-ուրախ զնգոցով, ինչոր հուշերի հնոտիներով, զանազան սենտիմենտալ բաներով, բառերով . . . Իսկ եթե ուզում ես ճշմարիտն իմանալ, ես մեր Մանուկի համար եմ եկել: Նարվեցի՞ր: Ես կուզենայի՝ կանաչեիր: Լսիր, նրան զրպարտել են, իսկ դու կանաչ թանաքով մակագրել ես տեղակալիդ վրա՝ ստուգել-զեկուցել: Լսիր, դու Մանուկին, ուրեմն, պիտի ուրիշների միջոցով ստուգե՞ս: Կանչեիր՝ նա ինքը քեզ ամեն բան կասեր. և արածը, և չարածը: Նա քեզ իր ամենաստոր մտադրությունն անգամ կասեր, այն, որ մտքովն անցկացրել է, բայց չի արե;Լ Իսկ դու արձանի պես կարդացել ես նրա նամակը, երևի միայն առաջին մի քանի տողը, և մակագրել կանաչ թանաքով: Լսիր, դու ինչո՞ւ ես վախեցել ասելու տեղակալիդ, որ Մանուկին ճանաչում ես, որ հավատում ես նրան, որ չես հավատում զրպարտագրին:

. . . Լսիր, Մանուկին վերջին անգամ ե՞րբ ես տեսել: Ես կիրակի օրը հանդիպեցի: Մի քիչ խմած էր, ինձ թվաց՝ օրորվում էր ոտքի վրա: Պարզապես բարևեցի, ու անցանք, նա ինչոր մեկի հետ էր, չճանաչեցի՝ ով էր: Ես, ճիշտն ասած, ուզում էի մենակ լինել այդ երեկո, չէի ուզում, որ խոսեինք, որ նա պատմեր իր դառնությունները և, պարզ է, գժգոհեր քեզնից: Ես մի տեսակ փախա Մանուկից: Բայց քիչ հետո նորից հանդիպեցինք, այս անգամ նա մենակ էր: Ես անմիջապես ասացի, որ շատ վաղուց չեմ տեսել քեզ, նա երեխայի պես ժպտաց. «Դո՞ւ էլ դիվանագետ դառար,— ասաց, հետո ձևակերպեց զարմանալի մի նախադասություն,— լսիր,— ասաց,— դու չե՞ս կարծում, որ հիմա ամենամեծ դիվանագիտությունը ճշմարտությունն ասելն է: Ախր, ոչ ոքի մտքով հիմա չի անցնում, թե կարող ես ասել նաև . . . ճշմարտությունը»: Ես ոչ մի բառ չգտա Մանուկին պատասխանելու, ես գետինը մտա իմ թաքուն մտքերի համար, և մենք կարգին չարախոսեցինք քեզ: Հետո տխրեցինք քեզ համար, յոթ սարից այն կողմ մնացած մեր տխուր-ուրախ մանկության համար . . . Մինչև հիմա ես քեզ երբեք չեմ պատմել, թե ինչպես գնացինք հորդ դագաղն առնելու: Մանուկը, Արմենը և ես:

Լսիր, դու դատարկ դագաղի մոտ երբևէ նստե՞լ ես: Դա ավելի հնչող է, քան եթե դագաղում հանգուցյալ կա: Ախր, երբ դագաղը դատարկ է, ներսում, ուրեմն, կարող էիր նաև ինքդ լինել . . . Մարդ ես, էլի, հազար ու մի բան է մտքովդ անցնում: Մանուկը դագաղը դրել էր ծնկներին, որովհետև մեքենան անընդհատ ցնցվում էր: Քանի տարի է անցել, չէ՞, բայց չգիտեմ ինչու, ես միշտ հիշում եմ հենց այդպես նստած: Լսիր, դու կարծում ես այն ժամանակ Մանուկը գիտե՞ր, թե դու մի օր իր պետն ես դառնալու,

դրա՞ համար էր անում, լսիր, դու արդեն սկսել ես հավատալ միայն կնքածստորագրած թղթերին, դրա համար մարդկանց աչքերին չես նայում, աչքերի մեջ ստորագրություն չկա, կնիք չկա։ Ներիր։ Իսկապես, ներիր։ Ախ, Ռուբեն, Ռուբեն, հիշո՞ւմ ես, ինչպես գիշերով կարդացինք «Մանոն Լեսկոն»։ Ինչ սքանչելի գիշեր էր, հիշո՞ւմ ես․․․ Ճակատիդ կնճիռներ են երևացել, առաջ չկային, լսիր է դու կարգին ծերացել ես, աչքերիդ մեջ թանձր հոգս է, դու անընդհատ մատներդ թաքցնում ես սեղանի տակ, հին սովորությունդ է, չես մոռացել, երբ դու զսպում էիր քեզ, մատներդ թեթևակի դողում էին։ Դու հիմա ավելի ես զսպում քեզ, երևի մատներդ ավելի են դողում։ Լսիր, վեր կաց, հետաձգիր քո այդ կարևոր խորհրդակցությունը, դուրս գանք փողոց, հենց փողոցում, մայթին կանգնած մի տեղ զարեջուր խմենք, հետո գնանք տեսնենք մեր հին ուսուցչուհուն, հետո գնանք մորս մոտ, նա, ախր, անհանգիստ է քեզ համար, երազ է տեսել և մազաչափ գաղափար չունի քո պաշտոնի մասին։ Նրա համար ամենաբարձր պաշտոնն իր տղայի ընկերը լինելն է։ Լսիր, մի քանի ժամով երեխա դառնանք, ծիծաղիր ինձ վրա, ստորացրու, անեկդոտ պատմիր։ Լսիր, այդ էլ ասեմ՝ Մանուկը ներքևում է, նա շատ է ուզում իմանալ, որ չի նեղացել, նա մտածում է, որ դու ինչ որ արել ես, ստիպված ես արել և հիմա ինքդ ես տառապում դրա համար։ Լսիր, գնանք, խաբենք Մանուկին, նա կուրախանա, ինքը քեզ կհանգստացնի, կմխիթարի։ Լսիր, չորս օր առաջ, ախր, Մանուկը երեխա ունեցավ։ Աղջիկ, էլի աղջիկ։ Լսիր, վեր կաց գնանք, գտնենք մեր դասարանից ում կարող ենք, նստենք մի խուլ, անմարդաբնակ տեղ, շատախոսենք, ուրախանանք կամ տխրենք, մեկ է։ Հին մտերիմները երևի նրա համար են նաև հարկավոր, որ մեզ վերադարձնում են անցյալի մեր պարզ վիճակներին, երբ մենք դեռ անուն չունեինք, տարբերություններ չունեինք, երբ նույնն էր մեր վիշտն էլ, ուրախությունն էլ։ Չե՞ս կարող գալ, առանց այն էլ բավական ժամանա՞կ խլեցի։ Դե լավ, լավ։ Լավ, ասում եմ․․․ Իսկ մորս հանկարծ չզանգահարես, նա փետրվարի 21-ին մահացավ, իսկապես մահացավ, չզանգահարես։ Իսկ սերկևիլի մուրաբան իրոք խնդրել էր, որ քեզ բերեմ։ Մահից մի քանի շաբաթ առաջ նա իրոք քո վրա երազ էր տեսել։ Անհանգիստ էր։ Հիշում ես, որ մեկ ամիս առաջ Մանուկը քեզ զանգահարել էր, դու ասել էիր, թե ժամանակ չունես խոսելու, ասել էիր, որ տեղակալիդ դիմի։ Իսկ նա զանգահարել էր հայտնելու, որ մայրս մեռավ․․․ Ես գնամ»։

— Կներեք, բայց ընկեր Սաֆարյանը չի կարող ձեզ ընդունել, ընկեր Մամյան․․․

Քարտուղարուհին տարեց կին էր, բայց կարմրել էր երեխայի պես։ Երկու ժամ շարունակ Մամյանը սպասում էր ընդունարանում, բայց․․․

— Կարևոր գործով նրան կանչեցին: Մյուս դռնով գնաց: Խնդրեց, որ երկուշաբթի օրը զանգահարեք, ես կմիացնեմ:

Մամյանը փողոց դուրս եկավ՝ ներսում լիքը բառեր, որ չկարողացավ ասել իր հին ընկերոջը, իսկ կաշվե պայուսակի մեջ սերկևիլի մուրաբան էր, որ մայրն ուղարկել էր Ռուբենի համար:

Հանցանք և պատիժ

Դասարանը շարադրություն էր գրում․ Եղիշե Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը: Մամյանին դարձյալ շտապ կանչեցին ուսուցչանոց, նա դուրս եկավ:

— Մարդ չգիտի որտեղից արտագրի,— հառաչեց Աշոտ Քանքանյանը,— դասագրքում չկա այս բանաստեղծության մասին, որտեղից գտավ: Իսկապես որ՝ մահվան տեսիլ:

— Ցնցող բանաստեղծություն է,— ասաց Վահանը,— ես չէի կարդացել:

Աշոտը վեր կացավ, մոտեցավ ուսուցչի սեղանին, որի վրա դրված էր Մամյանի թղթապանակը:

— Իր մոտ ինչոր բան երևի լինի,— փնթփնթաց նա,— վերցնեմ-արտագրեմ: Այ թե կզարմանա,— և նա սկսեց քրքրել թղթապանակը,— օհո, նամա՞կ,— կարդաց մի տող,— ժողովուրդ, սենսացիա, Մամյանը սիրահարված է, կարդա՞մ․․․

Եվ մինչ դասարանը ուշքի կգար, նա սկսեց․

— «Սիրելիս, մենք ամեն անգամ խոսում ենք ուրիշ բաներից, և ես չեմ կարողանում ասել քեզ գլխավորը: Իմ տարիքի մարդու համար երևի դժվար է սիրո խոստովանություն գրել․․․»:

– Ստոր անասուն,— տեղից գոռաց Վահանը,— տեղը դիր նամակը:

– Ինչո՞ւ,— Աշոտը վառվում էր հետաքրքրությունից,— կարող ես կոճկել․․․ ականջներդ։ «Սիրելիս, այս նամակը գուցե երբեք չհամարձակվեմ քո ձեռքը տալ․․․»։

Վահանը և էլի մի քանիսը վեր թռան տեղից։ Հաջորդ վայրկյանին թղթերը Վահանի ձեռքին էին։

— Սա ուրիշ ձեռագիր է,— ասաց Սմբատը, հատակից վերցնելով մի թուղթ, որ Վահանը վայր գցեց, հետաքրքրասիրությունը հաղթեց, և նա կարդաց մի քանի տող։ Կարդաց, մռայլվեց և տվեց Վահանին,— նայիր։

Վահանը վերցրեց։ Կարդաց և հանկարծ գունատվեց։ Հետո դարձավ դասարանին։

— Մի քանի րոպեով բոլորդ դուրս եկեք։ Սմբատ, Տիգրան, Սեթ — դուք մնացեք։ Դու էլ Աշոտ․․․— հետո ատամների արանքից նետեց,— Աշոտ ճշմարտախոս․․․

Դասարանը հնազանդ դուրս եկավ։

— Եթե Մամյանը գա, զբաղեցրեք․․․ Աղաչում եմ։

Տղաները, աղջիկները շփոթված դուրս եկան միջանցք․ ի՞նչ կարող էր լինել, ինչո՞ւ տղաները մնացին։ Դասարանից ինչ-որ աղմուկ լսվեց, Լուսիկը փորձեց բացել դուռը, մյուս կողմից փակ էր։

․․․ Գինգտասը րոպե անց՝ լայն բացված դռան հետ, աշակերտների զարմացած հայացքների դեմ բացվեց տարօրինակ մի տեսարան։ Գրատախտակի մոտ դրված աթոռին, գոտիներով կապկպված, գլխահակ նստել էր Աշոտ Քանքանյանը, տղաները լուռ, սփրթնած կանգնել էին նրա գլխավերևում, ասես պատվո պահակ էր՝ հանգուցյալի դագաղի մոտ։ Գրատախտակին կավիճով գրված էր․

«Աշոտ Քանքանյանը մատնել է իր ընկերներին։ Այդպես է սկսվում նաև դավաճանությունը Հայրենիքին»։

Այդ մակագրության տակ գնդասեղով ամրացված էր Սահակ Վանունու անունով գրված անստորագիր նամակը։

Դասարանը լուռ նստեց։

Ծանր, անողորմ էր պատանիների լռությունը։ Եվ այդ լռության մեջ էլ անսպասելիորեն դասարան մտավ Մամյանը։ Նա նայեց կապկպված Աշոտին, նայեց դասարանին, կարդաց գրատախտակին գրվածը և անշարժացավ դռների մոտ։

— Ես եմ արել,— ասաց Վահանը,— կարող եք պատժել ինչպես ուզում եք։

Մյուս տղաներն էլ ոտքի կանգնեցին․

— Միասին ենք արել։

Մամյանը մտախոհ գնացեկավ դասասենյակում, հետո, անսպասելիորեն, գրպանից հանեց ծխախոտի տուփը, վառեց, սկսեց ծխել։

— Ես կասկածում էի, որ Աշոտ Քանքանյանն է գրել,— կիսաձայն ասաց նա,— դա ստոր արարք է և, իրոք, այդպես կարող է սկսվել նաև դավաճանությունը Հայրենիքին․․․ Ես նույնպես համոզվեցի, երբ համեմատեցի ձեռագրերը։

— Գիտեիք և մեզ հեքիաթնե՞ր էիք պատմում,— Սմբատն էր՝ կծու, կռվարար։

— Հեքիաթներ էլի եմ պատմելու,— Մամյանը խոսում էր փափուկ, բայց դառնացած,— Վահան, քանդեք գոտիները, ջնջեք՝ ինչ որ գրել եք։ Երբեմն, ճշմարտությունն էլ հարկավոր է ջնջել։

Վահանը մոտեցավ, հանգիստ, բայց դանդաղ, տառտառ՝ սկսեց ջնջել իր գրած նախադասությունը։ Հետո, նույնպես դանդաղ արձակեց գոտիները։ Նրա աչքերում ահավոր թախիծ կար, Մամյանը չկարողացավ դիմանալ պատանու հայացքին։

— Վերջում նստիր, Աշոտ։

— Ես կբողոքեմ,— փնթփնթաց Աշոտը,— Ինչի՞ դատաստան եք տեսնում։ Սա Ամերիկա չէ, ես կբողոքեմ, ես ճշմարտությունն եմ գրել. . .

Մամյանը կարծես խոսում էր ինքն իրեն։

— Արմենը երևի խելոք տղա է, «անստորագիր բառի մեջ», ասաց նա ինձ, «ստորն է արմատը»։ Արմենը ճիշտ ասաց,— հետո դարձավ Աշոտին,— շարադրության մեջ դու էիր գրել, որ մինիստր ես ուզում դառնալ կամ շրջկոմի առաջին քարտուղար։— Հարց չտվեց։— Այո, դու էիր գրել. . . Հայրդ ի՞նչ գործի է, որտե՞ղ. . .

— Շրջկոմում,— մեքենաբար պատասխանեց Աշոտր,— հայրս էլ կբողոքի։

— Իբրև ի՞նչ. . .

— Բաժնի վարիչի տեղակալ,— դարձյալ մեքենայի պես պատասխանեց Աշոտը։

— Շրջկոմում երկա՞ր ժամանակ է, որ աշխատում է։

— Տասներկու տարի։

— Եվ տասներկու տարի՝ տեղակա՞լ. . .

— Որովհետև ազնիվ մարդ է։

— . . . Եվ, երևի, տասներկու տարի է ձեր տանը պատմում է, թե ինչ արտոնություններ ունի առաջին քարտուղարը։ Նրա տառապանքի մասին չի պատմում, նրա հոգսերի մասին չի պատմում. . .

— Հորս հետ գործ չունեք,— հիստերիկ ճչաց Աշոտը։

Մամյանը նամակը կրկին դրեց թղթապանակի մեջ, հետո, մի տեսակ մեքենաբար, աչքի անցկացրեց թղթերը.

Այստեղ ուրիշ թղթեր էլ կան, հույս ունեմ, չեք կարդացել. . .

— Չենք կարդացել,— ասաց Աշոտը։

— Չենք կարդացել,— մռայլ կրկնեց դասարանը։

— Շարունակեք գրել «Մահվան տեսիլի» մասին,— ասաց Մամյանը,— երևի դասամիջոցն էլ կօգտագործենք։

Ու՞մ էր նամակ գրել իրենց ուսուցիչը,— մտածեց Վահանը, մտածեցին բոլորը, ո՞ւմ։ Վահան Մամյանը, կախարդական մի րոպեում, դարձավ նրանց բախտակիցը, նրանց դասարանցի, նրանց սիրելին։ Ինչպե՞ս կատարվեց դա, ինչպե՞ս. . .

— Եվ մի խնդրանք,— Մամյանը կարողացավ նայել բոլորին,– կարողանանք մոռանալ Աշոտի արածը, թող նա ինքն իրեն պատմի, եթե կարող է, եթե ուժ կգտնի իր մեջ։— Հետո նորից նայեց բոլորին, ժպտաց,— ֆրանսիացի սքանչելի մի տղա կար՝ Անտուան դը Սենտէքզյուպերի— օդաչու էր և գրող։ Նա խորունկ բառեր ունի, երևի լավ չհիշեմ։ Տաճարը քարերից է շարված, ասում էր նա, բայց տաճարը իրենով մի տեսակ ազնվացնում է քարերը։ Քարերը դառնում են տաճարի քարեր։— Լռեց, նորից կրկնեց,— տաճարի քարեր։ Այդպես է և ընկերությունը, որը պետք է գտնել մի ավելի մեծ բանի մեջ, քան դուք ինքներդ եք։ Ընկեր, բարեկամ կարելի է լինել ինչ-որ մեծ, կարևոր բանում, չի կարելի հենց այնպես. . . Կներեք, ես նորից հեքիաթ եմ պատմում. . .

«Արմենը,— հանկարծ կայծակի պես ճայթեց Վահանի ուղեղում,— չէ՞ որ նրա համար ավելի կարևոր բան է որոշվում։ Իսկ ես նրան մենակ եմ թողել, ես նեղացել եմ, խռովել նրանից»։ Նա մտածեց, որ հենց այս պահին հարկավոր է վեր կենալ, գտնել նրան թեկուզ գետնի տակից, թեկուզ նորից կռվեն, հայհոյեն, ծեծկվեն։

— Ես ուզում եմ դուրս գնալ,– Վահանը դիմեց Մամյանին,— շարադրությունը տանը կավարտեմ, կբերեմ վաղը։

— Գնա,— հանգիստ ասաց Մամյանը,— եթե այդքան շտապ է, գնա, Վահան։

Վահանը պարզապես վազելով դուրս եկավ դասարանից։

— Դուք ինձ սխալ հասկացաք,— կմկմաց Սմբատը։

— Ճիշտ հասկացա,— Ժպտաց Մամյանը։— Ուսացիչն էլ դասերի կարիք ունի։ Դե, շարունակենք մեր գրավորը…

«Օ, Հայրենիք, դառն ու անուշ»

Մարին Մամյանի զանգին պատասխանեց, որ անհնար է հանդիպել. «Ես ցերեկն աշխատում եմ, երեկոյան՝ դպրոց։ Ավելի լավ լինել չէր կարող»։ Մամյանը շփոթվեց. տասնյոթ տարեկան աղջկա սառնությունը խոցեց նրան. «Շաբաթ կամ կիրակի նորից կզանգահարեմ, որտե՞ղ ես աշխատում»։ «Խբագրությունում։ Փոխարինում եմ մեքենագրուհուն»։ «Ուրեմն կզանգահարեմ»։ «Ես աշխատում եմ նաև կիրակի օրը»։ «Ո՞ր խմբագրությունում»։ Ասաց։ «Ինչո՞ւ ասացի,— ու շպրտեց խոսափողը,— չլիներ աշխարհում Մովսես Խորենացու դպրոց»։

Արմենը ձեռք չտվեց մոտ դրած ուտելիքին։

Քույրը՝ Նարինեն, նոր ջինս էր հագել ու կոտրատվում էր հայելու առաջ. «Իսկ ական Լևիս է, Արմեն, մորաքույրն է ուղարկել։ Նախանձից մեռնում ես, գիտեմ»։ Արմենը պառկեց բազմոցին։ Քիչ հետո հայրն էլ կգա, հարցեր կտան, կսկսվի։ Ինչպե՞ս պիտի ապրի այս բնավորությամբ, ամեն ինչ, գունավոր կինոյի նման, նկարվում է դեմքին։ Ինչպես բացատրի, որ հեռացրել են դպրոցից։ Կուրախանան։ Կչարախնդան։ Սահակ Վանունու թիկունքին կարելի է ցուցատախտակ կպցնել «Ավերակ։ Պահպանվում է պետության կողմից»։ Ո՞վ գրած կլինի նամակը, ո՞վ։ Հեռախոսի չէր պատասխանում։ Երեք օր է փախչում է տղաներից։ Տնեցիներն էլ ինչ սիրով են հենց դռնից ճանապարհում տղաներին. «Տանը չէ»։ Ուրեմն, մորաքույրը նորից ծանրոց է ուղարկել։ Տեսնես ֆլոմաստեր ուղարկե՞լ է։ Խնդրել էր։

— Հայրդ եկավ, վեր կաց,— սենյակ մտնելով՝ ձայն տվեց մայրը։

Չկամ, դժգոհ վեր կացավ, նստեց հեռուստացույցի առաջ, լուրեր էին հաղորդում։

— Ինձ հեռացրել են դպրոցից, Նարինե։

Քույրը տագնապով մոտեցավ:

— Գիտե՞ն:

— Մեր դպրոցում ոչ ոք ոչինչ չգիտի: Բացի Վահանից․․․

— Պատմիր:

Արմենը պատմեց: Հարկավոր էր, ի վերջո, մեկնումեկն իմանար, թե ինչ է կատարվել: Ինչպե՞ս մերկացավ Մարին: Ինքը կատակում էր, խաղ էր, որի ելքի վրա վստահ էր: Եվ հանկարծ՝ Մարին հանվեց: Վահանը սիրում է նրան: Արմենը դա գիտի, ոչ միայն ինքը գիտի: Գիտի նաև Մարին: Հանվեց, քանի՞ վայրկյան պարեց: Ախ, այդ Սոնա Միքայելյանը: Ոչ, ոչ, լավ էր, որ նա շուտ վրա հասավ, Վահանը իր ամենալավ ընկերն էր, կռվեցին: Մարին տարօրինակ էր, նա տենդի մեջ էր ասես, զառանցում էր, խելագարվել էր:

— Որ ասում էի,— Նարինեն անջատեց հեռուստացույցը, դուռը փակեց,— մայրիկ, մեզ չխանգարեք, խոսում ենք:— Որ ասում էի․ դա էլ քո Մարին: Ես էլ աղջիկ եմ, կներես, բայց ամեն տեղ նույնն է, համոզվեցի՞ր․․․

— Նույնը չէ: Դու չես ճանաչում Մարիին: Ասենք, ես էլ չեմ ճանաչում:

— Հիմա նոր սերունդը ամեն տեղ նույնն է՝ Ավստրալիայում, թե Հայաստանում: Ուզեցել է դուր գալ ձեզ, ով գիտի ի՞նչ կա մտքում: Թքիր, Արմեն:

— Ուրեմն դու կարող ես թողնել Հայաստանը, գնալ:

— Հայաստանն ամեն մեկիս մեջն է: Գիտեմ, որ կկարոտեմ: Ինչ կա որ, դրսի հայերը հայ չե՞ն:

— Զզվում եմ քեզնից, Նարինե:

— Իսկ քո Մարիի՞ց: Չե՞ս զզվում:

— Զզվում եմ ամեն ինչից։

— Ավստրալիա։ Պատկերացնո՞ւմ ես, Արմեն, Խաղաղ օվկիանոս, Սիդնեյ։ Գիտես, ինչ հարուստ երկիր է, տարին տասներկու ամիս լողացիր, սնացիր։ Ուզո՞ւմ ես, ջինսս տամ քեզ։

Լաց լինելու չափ տխուր՝ Արմենը նայեց քրոջը, որին շատ էր սիրում։ Հեռացրին, հանգիստ հեռացրին։ Մի կապ էլ կտրվեց՝ թանկ ու մաքուր մի կապ։ Թքած, Երևանում երկու հարյուր ուրիշ դպրոց կա։ Մարին դեռ հանելուկ է, պիտի պարզել։ Բայց նախ՝ պիտի պարզել, թե ո՞վ է գրել նամակը, կապանի նրան՝ գնալուց առաջ։ Եվ բանտ կընկնի, անմիջապես ծնվեց հաջորդ նախադասությունը, ուրեմն, չի գնա։ Դառը մխիթարություն։

— Գնանք կինո,— ասաց Նարինեն,— ֆրանսիական նկար է։ Կցրվես։ Հայրիկին չե՞ս ուզում ասել։

— Չգիտեմ։

— Գնա՞նք կինո։

— Ուզում եմ մտածել։ Ես պիտի տեսնեմ Մարիին։

Հեռախոսը զնգաց։

— Վահա՞նը,– Նարինեն հարցական նայեց եղբորը,— Նարինեն է, Վահան, բարև։ Արմե՞նը, Արմենը քնած է, վատ էր զգում։ Գլխացավ ունի։ Ուզում ես, որ հանդիպե՞ք։ Կզարթնի, կասեմ։

Նարին են դրեց խոսափողը։

— Ինչո՞ւ ես խուսափում նրանից։

— Բոլորից եմ խուսափում, իսկ Վահանի հետ կռվել ենք։ Հիմա մենք համարյա թշնամիներ ենք։

Նարինեն տագնապով նայեց եղբորը։ Նայեց ավագ քրոջ աչքերով, հանկարծ հասկացավ, որ ինքը երեք տարով մեծ է, որ Արմենը, վերջին հաշվով, դեռ պատանի է, մեծ երեխա։

Նորից զանգ։

— Ո՞վ, Մարի՞ն։

Արմենը վեր թռավ տեղից.

— Մարի՞։

— Մենք պետք է հանդիպենք, Արմեն։ Այն նամակը Աշոտ Ճշմարտախոսն է գրել։ Դասարանը դատել է նրան։ Մամյանն ասել է՝ ճիշտ եք արել։

— Քեզ ո՞վ ասաց։

— Վահանը։ Նա որոնում է քեզ։

— Ես ուզում եմ խոսել քեզ հետ, Մարի։

— Արի դպրոց։ Դասերը ժամը տասին են վերջանում։ Շահումյան դպրոցի շենքում ենք։ Դոների մոտ սպասիր, եթե ուզում ես։

— Ասում ես՝ Աշո՞տն է գրել։ Ես կսպանեմ նրան։

— Արդեն սպանել են մեր դասարանում։ Չե՞ս կարոտել։

— Չգիտեմ։ Կգամ, տասին կգամ։

Արմենը հանկարծ մտաբերեց, որ Վանունու կաբինետում միայն Աշոտն էր, որ ոչինչ չասաց, ոչ ժխտեց, ոչ հաստատեց։ Անաստ՛նն։

— Ես գնում եմ, Նարինե։

— Դուք տասին ժամադրվեցիք:

— Ուզում եմ քարշ գալ փողոցներով: Ուզում եմ բոլոր փողոցները մեջս պահել քար առ քար: Այնտեղ կհարցնեն, կպատմեմ: Գիտեմ, որ կհարցնեն:

Չէ, կոտրվում է եղբայրս, մտածեց Նարինեն, երնի կգնանք: Ուրախությամբ մտածեց:

Մակագրություն գրատախտակին

Գրատախտակին ինչոր բան էր դրած: Դանիելյանը սկզբում ուշադիր չէր, հետո հանկարծ կարդաց․ «Այդ կավից նախ գուցե մի սիրտ սարքեք ձեզ համար, ուսուցիչ»: Կարծես շանթահար եղավ: Հիշեց նախորդ ժամի իր բարկությունը, գազազած էր, ատամների արանքից նետեց․ «Դուք դեռ կավ եք, ես ձեզնից ինչ ուզեմ, կսարքեմ»: Դասամիջոցին ուրեմն պատասխան են մտածել․

– Ջնջե՞մ․․․

Ո՞վ ասաց: Աղջկա ձայն էր, Դանիելյանը չտեսավ, թե ով էր: Նորից կարդաց, կավիճով գրված բառերը ասեղների պես խրվեցին նրա էություն մեջ: Կարծես մեկը՝ դաժան մի ձեռք, վիրահատեց իրեն՝ առանց թմրեցնելու: Դասարանը սսկվել էր․ իսկ և իսկ՝ վիրահատության պահի լռություն: Մամյանի դաստիարակությունը բերք է տալիս․ մտածել են սովորում: Փոխանակ գիտություն սովորեն: Բայց ինչո՞ւ չի կարողանամ գոռալ, չի ուզում պարզել, թե ում ձեռագիրն է: Ինչո՞ւ է փլվել աթոռին, կարծես իր զգեստների մեջ մարդ չկա:

— Գնացեք տուն,— ամեն ինչ արեց, որ ձայնը չդողա:— Գնացեք տուն, ազատ եք:

Ամենավերջում դուրս եկավ Աշոտ Քանքանյանը: Ինչ-որ բա՞ն էր ուզում ասել:

— Գնա, Աշոտ:

Մնաց մենակ՝ դատարկված դասարանի ամայության մեջ։ «Նախ և առաջ սիրտ սարքեք ձեզ համար, ուսուցիչ»։ Ուսուցիչ․․․ չեն մոռացել այդ էլ գրել, ստահակներ, խելագարներ։ Բայց այդ բաչը հանկարծ ինչոր փափուկ դող հաղորդեց նրա սրտին։ Այսպիսի հարված նա չէր ստացել իր աշխատանքի բոլոր քսանվեց տարիներին։ Հավասարում, ամեն մեկը հավասարում է տասն անհայտով։ Ամեն մեկն ուրիշ հավասարում է և ամեն մեկի անհայտներն են ուրիշ։ Իսկ տանը՝ տղան — լիակատար մի ձրիակեր և լավ, առողջ ստամոքսով։ «Կուշտ մարմիննե՞ր դաստիարակենք,— լսեց Մամյանի ձայնը,— շատշատ՝ խելո՞ք մարմիններ, որ վաղը կարողանան մեքենա ղեկավարել, մեքենա արտադրել։ Ա՞յս է մեր պարտքը, և վե՞րջ»։ Ինչ անել, ինչպե՞ս պահպանել ուսուցչի անարգված իր արժանապատվությունը։ Ենթադրենք, թե պարզեց ով է գրել։ Պարզ է, կավիճը գրատախտակին տարել-բերել է մեկը։ Քսանութից մեկը։ Բայց ոչ ոք նրա ձեռքը չի բռնել, ոչ ոք չի ջնջել հետո։ Նա պարզ-պարզ պատկերացրեց հավաքական մի ձեռք, որ գրատախտակի սև մարմարին փորագրում էր այդ բառերը։ Արդեն երեք տարի գերագույն բարեխղճությամբ սրանց սովորեցնում է հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափության։ Դարը փոխվել է, ուղեղն է դարձել առաջին ջութակը, դիրիժորը, մարշալը։ «Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով»։ Մամյանն Իսահակյանի այդ բանաստեղծությունը անգիր էր հանձնարարել։ Վանունին մի ժամ խոսեց այդ մասին մանկխորհրդում․ ծրագրում չկա, ասաց, ծրագիրը մեզնից ավելի խելոք մարդիկ են կազմում, հոռետեսական բաներ եք սովորեցնում երեխաներին։ Մամյանը չպաշտպանվեց․ «Ծրագրի բոլոր գործերը ես անցել եմ»։ Հենց իր սիրասուն որդին այդ ոգու սովի արտահայտությունը չէ՞։ «Հարյուր ռուբլու համար ես չեմ աշխատի,— ասաց,— դա մի շաբաթվա փող է։ Ես իմ ուղեղը բավական թանկ եմ գնահատում»։ Իսկ ինքը՝ Մարտին Դանիելյանը, միայն քսան տարվա աշխատանքից հետո է, որ երկու հարյուր ռուբլի է ստանում։ Ինչ էժան ուղեղ ունի, համարյա ձրի, կարելի է վաճառել իջեցրած գներով ապրանքների խանութում։

— Ընկեր Դանիելյան․․․

Կիսաբաց դռան արանքից նա տեսավ Աշոտ Քանքանյանի դեմքը, քսանութից մեկը։

— Դուրս կորիր,— հանկարծ ճչաց նա՝ անզորությունից, ցավից, վիրավորանքից։— Երեսդ չտեսնեմ։

Միջանցքում արձագանք տվեց իր աշակերտի վախեցած ոտնաձայնը: Քսանութից մեկի ոտնաձայնը:

Հուսահատություն

— Եվ դուք, մանկավարժ լինելով, հակահարված չեք տվել Լինչի դատաստանի հեղինակներին: Ո՞ր երկրում ենք ապրում . . .

Աշոտի հայրը՝ Խաչիկ Քանքանյանը, Մամյանին ուղիղ քառասունհինգ րոպե սպասեցնել տվեց շրջկոմի միջանցքում: Մամյանը լարված էր ու անհանգիստ: Վերջին օրերին նա ջղագրգիռ էր դարձել, գիշերները համարյա չէր քնում:

— Մինչև այդ ո՞ր դպրոցում եք աշխատել:

Խաչիկ Քանքանյանը իր որդու ուսուցչին կարծես հարցաքննում էր: Նրա լավ սափրված դեմքը հենց հիմա կարելի էր ձվաձև շրջանակի մեջ քղնել և կախել պատից. նայողները կասեին՝ բարի, խելոք, ինքնավստահ մարդ է, գործի մարդ:

— Ձեր շրջանում է այդ դպրոցը: Դիրեկտորի հետ չստացվեց իմ աշխատանքը:

— Կհետաքրքրվենք: Կստուգենք: Կոմունի՞ստ եք:

— Այո, այս ինքն, ոչ:— Եվ հանկարծ ծնվեց հիմարագույն մի հարց:— Իսկ դո՞ւք . . .

Խելագար է, մտածեց Քանքանյանը կամ՝ ամբարտավան: Գուցե ծաղրո՞ւմ է:

— Կներեք,— ասաց Մամյանը,— ինչոր սխալ դուրս եկավ, ինչպե՞ս կարող եք կոմունիստ չլինել, այսինքն, կուսակցության անդամ: Բայց կոմունիստ կարող են լինել նաև նրանք, որ կուսակցության անդամ չեն: Չե՞ք գտնում:

Խելագար է, եզրակացրեց Քանքանյանը:

— Ձեզ հետ երևի ուրիշ լեզվով պիտի խոսել:

— Ո՞ր: Ես գիտեմ նաև ռուսերեն: Մի քիչ՝ ֆրանսերեն:

— Կուսակցական լեզվով:— Կտրեց Քանքանյանը:— Ես այդ լեզուն գիտեմ: Հասկացա՞ք:

— Ես կարո՞ղ եմ գնալ:

— Կգնաք, երբ ձեզ կասեն:

— Ովքե՞ր… կասեն:

— Ձեզ ո՞վ է կանչել, ընկեր Մամյան:

— Դուք իմ աշակերտի հայրն եք: Դուք ինքներդ պիտի գայիք դպրոց:

— Դեմագոգիա՞: Դրա բուժումն էլ ունենք:

— Դեմագոգիա հունարեն բառ է: Նշանակում է…

— Մենք ավելի լավ գիտենք, թե ինչ է նշանակում:

— Գիտեք, թե ռուսական թագավորները ինչպես էին խոսում և գրում. մենք՝ Նիկոլայ Երկրորդս…

— Ա՜խ,— անկեղծ հառաչեց Քանքանյանը,— դուք պետք է կոմունիստ լինեիք, որ իմանայի…

— Ո՞վ… կոմունիստ լիներ…

Մամյանը վեր կացավ, մտածելով, որ կհասնի դպրոց, դիմում կտա: Գուցե թարգմանությամբ զբաղվի… Բանակում, ինչո՞ւ հանկարծ հիշեց, մի ջահել լեյտենանտ ունեին, նա 4-րդ դասարանի կրթության ուներ, դասակում կային համալսարան ավարտած տղաներ: Երբ մեկնումեկը զանցանք էր թույլ տալիս, լեյտենանտը կանչում էր, վառում էր ծխախոտը ու երկար զրուցամ: Ծխախոտի

մոխիրը նա թափ չէր տալիս, ծխում էր մինչև գլանակի վերջը և ստացվում էր մոխրից գլանակ․ ինչպես է, որ չէր թափվում։ Զարմանալի մարդ էր․ «Սկզբում, ուրեմն, նախնադարյան համայնական հասարակարգն էր, ճի՞շտ է, հետո՞»։ «Հետո՝ ստրկատիրական»։ «Ճիշտ է, հետո ֆեոդալական, կապիտալիստական, իսկ հիմա՞․․․ հիմա մենք կոմունիզմ ենք կառուցում, իսկ դու, ընկեր շարքային, ամեն օր չես փայլեցնում կոշիկներդ․․․ Է՜խ, ինտելիգենցիա․․․»։

Ինչո՞ւ հանկարծ հիշեց լեյտենանտին։ Ոչ, ոչ, ինչ Քանքանյան, լեյտենանտը բարի ու քաջ տղա էր, պարզապես ավարտել էր միայն 4րդ դասարան, իսկ ենթակաների մեջ՝ համալսարանականներ․․․ Այս էր ամբողջը։

— Մյուս անգամ չկանչեք։ Ես չեմ գա։ Եկեք դպրոց, եթե ձեր որդու հարցով է։

— Կգաք, ընկեր Մամյան։ Կբերեն։— Քանքանյանը բարեկիրթ ժպտաց,— ինձ մոտ չեն ծխում։ Կներեք։

— Կներեք,— ասաց Մամյանը, սիգարետը մատների մեջ ջղաձիգ տրորելով։

— Ի՞նչ եք կարծում, Աշոտը ծխո՞ւմ է։

— Չգիտեմ։ Չեմ տեսել։

— Ականջները կկտրեմ։— Աշոտ Քանքանյանի հայրը ծիծաղեց բարձր, հետո լրջացավ։— Այո, այո, կկտրեմ։ Չե՞ք հավատում․․․

«Մարի, ես ուզում եմ խոսել քեզ հետ։ Մեր զրույցը․․․»»։

«Դուք յոթանասուն աշակերտ ունեք,– սուր կտրեց Մարին,— յոթանասուն։ Իսկ ես նույնիսկ ձեր նախկին աշակերտը չեմ։ Ի՞նչ պիտի խոսենք»։ Ու դրեց խոսափողը։

Հուզմունքը բռնել էր Սոնա Միքայելյանի կոկորդը։ Կուզենար լաց լինել, գոռալ։ Ինչո՞ւ նվաստացավ և ո՞ւմ առաջ՝ սանձարձակ մի աղջկա։ Միկրոբներ․․․ սրանց մեջ միայն միկրոբներ են եռում, էական տարրերը չկան կամ բոլոր տարրերի բաղադրությունը փոխվել է։ Ինչպե՞ս փոխվեց, ինչպե՞ս չնկատեցին։ Մամյանն այսօր շատ անտրամադիր էր, ասաց, որ հազիվ մինչև տարվա վերջն աշխատի, պարզապես,

անհարմար է, հասունության քննություններին մի ամիս է մնացել: Սրան ի՞նչ պատահեց, եկել էր՝ հարյուր տարվա ծրագրերով և հանկարծ... Ամեն մարդ մութ մի սենյակ է, վարագույրները ձգած: Վանունուն գոնե այս անգամ վաստակավորի կոչում տան: Տային, երևի կգոհանար, կզիջեր աթոռը, կգար ուրիշ մեկը, ինչոր բան կփոխվեր... Ի՞նչ:

«Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով»

Այն մի քանի հարյուր քառակուսի մետր երկինքը, որի տակ Մովսես Խորենացու անվան դպրոցն էր, կամաց-կամաց ծածկվում էր մռայլ ամպերով, որ կարկուտ էր խոստանում կամ պղտոր և ձյունախառն անձրև:

Սոնա Միքայելյանը իր դասերի հետ էր, իր փորձերի, ուրիշ որևէ թեմայով չէր խոսում նույնիսկ Մամյանի հետ:

Մամյանը բավական տագնապած էր Աշոտի հոր հետ ունեցած հանդիպումից, իսկ Վահանից իմացավ Արմենենց ընտանիքի հայրենիքը թողնելու մտադրությունը:

Դանիելյանն ավելի չար ու դյուրագրգիռ էր դարձել: 10րդ «բ»-ի հետ սառն էր ու քաղաքավարի, երբեմն շախմատ էր խաղում Մամյանի հետ և կռվում հետը՝ տախտակի վրա:

Անտոնյանը վիրավորված էր, որովհետև ոչ ոք նրա կարծիքը չէր հարցնում, և նա չգիտեր ինչ անի իր կարծիքները:

Վանունին ստորագրած հրամանը կախեց ուսուցչանոցի պատից, ուղարկեց ժողկրթբաժին և մինիստրություն, և զրգռված էր ամենքի դեմ:

Եվ ահա, նորից զանգ մինիստրությունից. «Չէ, իսկապես որ մտնելու եք պատմության մեջ. մի ամիս առաջ ստրիպտիզ, հիմա էլ՝ Լինչի դատաստան: Շրջկոմում շատ անհանգստացած են»:

«Ես չեմ կարող ողջ դասարանին դպրոցից հեռացնել: Հետո գիտեք, որ անստորագիր նամակներն առհասարակ...»:

«Դատապարտվում են: Այո, իհարկե, բայց ստուգվում են նաև: Իսկ այն նամակը չէ՞ որ լրիվ ճիշտ էր: Ճիշտ էր, չէ՞»:

«Ճիշտն ու սխալը կողք-կողքի են: Նայած ինչ աչքերով կնայեք եղածին: Ես չէի կարող չհավատալ մեր լավագույն մանկավարժին, որ ականատես էր»:

«Այդ մանկավարժին բոլորս էլ հավատում ենք, բայց տղան ո՞վ էր․ Աշոտ Քանքանյանը, ի վերջո, գրել էր ճշմարտությունը, իսկ նամակը՝ մինիստրի մակագրությամբ կախվում է սև գրատախտակին»:

«Ուրիշ գույնի չունենք: Ես գիտեմ, որոշ դպրոցների շագանակագույն գրատախտակ եք տվել»:

«Օհո, այս օրին է դպրոցդ, ու դեռ հումորի զգացումը չես կորցնում: Գովելի է: Հա, Վանունի, կոչումիդ հարցը ձգձգվում է, երևի մնա եկող տարի, շատ մարդ էինք ներկայացրել, վերևում կրճատեցին: Ոչինչ, վաթսունութ տարեկան մարդ ես, ուժերիդ ծաղկման շրջանում՝ ինչպես ասում են, ժամանակ շատ կա»:

«Կա, ժամանակ շատ կա»:

«Իսկ Լինչի դատաստանի հարցը չքնեցնես: Մեկ է, կզարթնի: Դասատուի, ինչպե՞ս էր ազգանունը, Մամյա՞ն, թե՞ Պապյան, չգիտեմ, նրա, նրա օձիքից բռնիր»:

«Դուք եք ուղարկել այդ Պապյանին, ձեր ձեռքերն ավելի երկար են, բռնեք»:

«Չեղավ, չեղավ: Ես չեմ կարծում, թե այդ հարցը կոլեգիա մտնի, ես ամեն ինչ կանեմ, որ․․․ չմտնի, բայց դա ավելի շատ կախված կլինի ձեզնից, այսինքն՝ քեզնից, ինչպես ասում են․ քարն էլ է քո ձեռքին, պոպոքն էլ»:

«Հիմա պոպոքը մենք ենք — քարն էլ՝ ձեր ձեռքին: Կհավաքվենք՝ կմտածենք: Շնորհակալ եմ խորհուրդներիդ համար»:

«Ես միշտ քո բարեկամն եմ, այդ մեկը պիտի իմանաս»:

Մռայլ դրեց խոսափողը։ Չէ, Վանունի, վերջդ անփառունակ է երևում և դեռ մտածում ես կոչման մասին։ Ի՞նչ անել։ Նախ, ծխել։

Վանունին նման էր թերմոսի․ ուրախությունը կամ տխրությունը, բարկությունը կամ հանգիստ վիճակը նրա մեջ պահպանվում էր քանչորս ժամ, հետո մեկը աստիճանաբար տեղի էր տալիս մյուսին։

Մինիստրության պատմաբանի հետ ունեցած զրույցը, որ օրվա վերջին էր, չխանգարեց, որ նա երեկոյան մասնակցի 10-րդ «բ» դասարանի գրական հանդեսին։ Եվ ինչ լավ արտասանեցին՝ թատրոն է, ոչ թե դպրոց։ Տրամադրությունն ընկավ միայն, երբ Վահան Սարոյանը կարդաց «Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով» բանաստեղծությունը, չի հասկանում, այդ Մամյան կոչվածը չի հասկանում, մի ամիս առաջ էր, մանկխորհրդում երկար-հիմնավոր խոսեց, բացատրեց և դարձյալ՝ ոգու սով։ Ի՞նչ են գտել այդ բառերի մեջ։

— Ինքն է ընարել,— ասաց Մամյանը,— ես չեմ խառնվել և, պիտի ասեմ, որ սքանչելի գործ է։ Ես նրանց ասացի՝ ընտրեցեք ձեր սիրած բանաստեղծությունները, արտասանեք։

Երեկոն բավական մխիթարեց Մամյանին, և նա տխրությամբ մտածեց, որ թողնելու է այս դպրոցը։ Այս դպրոցն էլ։

Երեկոյից հետո Դանիելյանի հետ մնացին շախմատ խաղալու։

— Երևի թողնեմ գնամ,— մի քանի քայլ անելուց հետո ասաց Մամյանը։

— Ո՞ւր,— չհասկացավ Դանիելյանը,— թագուհիդ հարվածի տակ է։

— Տուն, ո՞ւր։ Ինձ ուրիշ դպրոց հազիվ թե ընդունեն։ Եվ հետո՝ հոգնել եմ։

Դանիելյանը ապշած նայեց իր դիմաց նստած մարդուն, այս երեկոն մի իսկական հաղթանակ էր և հանկարծ՝ գնամ։ Մամյանը մի քանի բառով պատմեց իր վիճակը, Աշոտի հոր հետ ունեցած զրույցը, Վանունու երկիմաստ խոսքերը, թե եկող տարի գրականության ժամերը բավականին պակասելու են։

— Ձենքերդ շուտ չե՞ս վայր դնում:

— Թագուհին փրկել չի լինում:

— Գնալուդ մասին եմ ասում: Գլխիցդ հանիր: Մի տղամարդ դասատու հազիվ ավելացավ:— Դաինելյանը չուզեց ասել, որ Մամյանն այնուամենայնիվ, իրեն դուր է գալիս, որ նրա խենթությունների մեջ ինչոր գրավիչ բան կա՝ նույնիսկ իր պես չոր ու կծու մարդու համար:— Մի շտապիր, մենք դեռ կտանք-կառնենք:

Հետո պատմեց իր տղայի մասին: Հիմա էլ ուզում է ամուսնանալ: «Ինչո՞վ ես պահելու կնոջդ, ինը ամիս հետո՝ երեխայիդ»: «Ի՞նչ է, դու գործից դուրս ես գալո՞ւ»: Գնաց, խնդրեց, Սփյուռքի կոմիտեում մի ծանոթ կար, խոստացավ: «Սփյո՞ւռք, առավոտից իրիկուն զանազան հյուրեր— մեջները լիքը հոսոսներ— Մեզ Մասիսը ցույց տուր, օ՜, Մատենադարանի ձեռագրերը, Էջմիածին տար, մոմ վառենք . . . Չէ, ընկեր հայրիկ, դրա համար չեմ տասնհինգ տարի սովորել: Հրապուրիչը արտասահման գնալու հեռանկարն է: Բայց դա էլ՝ անձրևի հույս է — օգոստոսի շոգին: Տասը տարին մեկ — ինչպես ասում են՝ մինչև բարակ առուն ջուր գա . . .»: Դպրոցում Դանիելյանը խստության և կարգուկանոնի զինվոր է, տանը չէր ստացվում: Կինը ամեն անգամ իր մարմնով փակում էր նրա գնդացիրը: «Մի տղա ունես, այ մարդ, էն էլ՝ ամեն օր կռվում եք: Դո՛ւ պիտի լեզու գտնես: Դո՛ւ»:

— Ինչ խելք ես արել, որ ամուսնացած չես,— Դանիելյանն ասաց այն նախադասությունը, որ ինքն իրեն է գալիս՝ նման դառը զրույցից հետո:

— Լա՞վ է որ,— հառաչեց Մամյանը,— գնում ես տուն և մեկը չկա, որ գոնե հետը կռվես: Ինքդ քեզ հետ ես կռվում:

— Դա էլ երևի ճիշտ է,— մխիթարվեց Դանիելյանը:— Շա՜խ:

«Ես արդեն ծեր եմ, մայրիկ . . .»

Սրճարան մտան: Իրար նայում էին կորցրած հարազատների պես:

«Չե՞ս կարոտել մերոնց»:

Մի-մի բաժակ կարմիր գինի ուզեցին, երկուսն էլ դպրոցում չեն, ուրեմն աշակերտ չեն․ հանկարծ մեծացան դպրոցի դիրեկտորի հրամանով, մանկխորհրդի որոշմամբ։

«Աշխատանքդ ինչպե՞ս է»։

«Տպում եմ։ Դպրոցի մասին հոդվածներ էլ եմ տպում և զարմանում, կարծես գրում են ուրիշ մոլորակների մասին, կապ չունի ապրածի հետ»։

«Մարի, մենք կարող է գնանք, գիտե՞ս»։

«Գիտեմ, Վահանն ասաց։ Է, ինչ կա որ, գնացեք, ուրիշները գնում են, չէ՞»։

«Լսիր, ախր դու ինչպե՞ս հանեցիր շորդ։ Ախր դու չգիտես, դա իմ ցնդաբանությունն էր և, կզարմանաս, կապ ուներ մեր գնալու հետ։ Նախորդ օրը քրոջս հետ վիճել էինք։ Նա ուզում է, նա համաձայն է հորս հետ։ Ի՞նչ կա Ավստրալիայում, ասացի, փալաս-փուլուս, ստրիպտիզ։ Ստրիպտիզ այստեղ էլ կա, ինքն ասաց, մի տարբերությամբ՝ այնտեղ դա մասնագիտություն է, այստեղ՝ ազածդ աղջիկը դեմ չէ։ Շշմեցի, ինչպե՞ս թե։ Այո, այո, ասաց, մեր աղջիկներին ես ավելի լավ գիտեմ․․․ Ուզեցի փորձել, հասկանո՞ւմ ես, թղթախաղի պես բան դառավ։ Ես համոզված էի, որ դա մի փափուկ ապտակ կհասցնես մռութիս, և, հավատա, ես գոհ կլինեի, իսկ դու․․․ Վահանը բեզ սիրում է, նա ինչպե՞ս կաթված չստացավ տեղնուտեղը, չհասկացա։ Երկրորդ օրը մենք քո պատճառով իրար քիթմռութ աղավաղեցինք»։

«Իսկ ես չեմ սիրում։ Այ Արմեն, դու էլ ես հավատո՞ւմ, թե հիմա սեր կա։ Հորս նամակները կտամ, կկարդաս։ Ինչ բառեր, ինչ երդումներ, հեքիաթ, թվում է հազար տարի սիրելու էին իրար, իսկ ինձ հինգ տարեկան թողեց-գնաց։ Վահանը․․․ Նա էլ ինձ նույն բառերն է գրում, իսկ ձեր կողքին, աչքերը չռած, սպասում էր, որ տեսնի, թե ծնկներիցս վերև ինչ կա»։

Մարին մտաբերեց իրենց առաջին վրույցը՝ դեպքից երկու, թե երեք օր անց։ Ուզում էր վիրավորել Վահանին, ստորացնել, խոցել նրա տղայական արժանապատվությանը, եթե ունի։ «Հիմար,— ասաց,— չգիտես, որ Արմենը քեզնից բիֆշտեքս կսարքեր»։ «Նա ինձ իր թուլությունից ծեծեց, բայց, ախր, դու ինչպե՞ս․․․»։

«Ինչպե՞ս հանվեցի, ուզեցի և հանվեցի»: «Ես քեզ հիմա էլ սիրում եմ»: «Ուզում ես, հատուկ քե՞զ համար հանվեմ: Հիմա հարմար չէ, փողոցում ենք: Հետո, մի ուրիշ անգամ»: «Չեմ ուզում, թեպետ դրանից հետո էլ քեզ կսիրեմ»: «Հիմար, հենց դրանից հետո կսիրես, դուք դրանից հետո եք սիրում»: «Դու սերն ես վիրավորում»: Քրքջաց, «Դու սիրո ոգի՞ն ես, դեսպա՞նը, սուրհանդակը…»: «Ով սիրում է, նա սիրո դեսպան է դառնում, սիրո զավակը: Աշխարհին հարկավոր են միայն սիրուց ծնված զավակները: Չար մարդիկ հաշվով կատարված ամուսնություններից են, ես հավատում եմ»: «Ես չար զավակներ եմ ուզում պարգև տալ աշխարհին: Ուզում եմ մորս վրեժը լուծել, որին հայրս ամբողջ կյանքում դավաճանել է: Իսկ մայրս, հիմարի պես, հիմա էլ շարունակում է սիրել նրան»: «Մայրդ սքանչելի կին է»: «Լսիր, դու Դոն Կիխո՞տն ես, ինչպե՞ս ձեռք բարձրացրիր Արմենի վրա»: «Ես հիմա էլ ուժեղ եմ նրանից»: Ուզեց ավելի խոցել. «Ճի՞շտ է, որ Տիգրանը, Արմենը և Սմբատը գրազ էին եկել»: «Արմենը չէ, նա հետո իմացավ»: «Ուրեմն, Տիգրանն ու Սմբա՞տը: Ինչի՞ վրա»: «Ով տարվեր, մյուսի համար ջինս էր ճարելու»: «Այդքան էժա՞ն». ու հանկարծ լաց եղավ փողոցում:

«Վահանը բոլորովին չէր հավատում: Եթե դու այդ բանը չանեիր, մենք իրար կծեծեինք հենց նույն օրը: Նա մեռնում է քեզ համար»:

«Իսկ Աշոտն ասել է, որ դուք էիք գրազ եկել: Լուսիկին է ասել, նա ինձ զանգահարեց»:

«Ի՞նչ գրազ: Ասում եմ, չէ, այդ ցնդած միտքը իմ գլխում ծագեց, պատճառն էլ իմացար: եթե գրազ էր՝ ինքս ինձ հետ էի գրազ եկել. այսինքն իմ մեջ եղած կարգին Արմենը գրազ էր եկել մյուս՝ ստոր Արմենի հետ: Եվ վստահ էի, որ ստորը պարտվելու է: Ինչ լավ էր, որ գոնե քիմիկոսը շուտ եկավ»:

Արմենը չուզեց ասել Տիգրանի և Սմբատի գրազի մասին, դա էլ, վերջին հաշվով, հիմար մի խաղ էր, նրանք էլ երևի համոզված էին, որ հաղթող չի լինելու: Բայց Սմբատը չէ՞ որ հաղթեց, թեպետ ջինս, իհարկե, չուզեց Տիգրանից: Արմենի համար շատ դառը կլիներ այդ մասին պատմել Մարիին: Իսկ Մարին զիտեր և, հանկարծ, ահավոր մի դառնություն նորից գլուխ բարձրացրեց, և նա հազիվ զսպեց լացը. Արմենը չգիտի՞, թե՞ թաքցնում է իրենից:

«Ինչ լավ էր, որ Սոնա Միքայելյանը շուտ եկավ»,— կրկնեց Արմենը:

«Տիկին Սոնա՞ն, այդ ապխտած ձո՞ւկը, կոմիսիոն խանութ հանձնած գեղեցկուհի՞ն: Իմ մեջ նա փշրեց հավատի վերջին նշույլը, որ ունեի մեծերի նկատմամբ: Վահանը դեռ սիրո՞ւմ է ինձ»:

«Դու ես նրա հետ խոսել»:

«Մենք միշտ խոսել ենք քո մասին: Նա շատ մտահոգ է քո գնալով: Շշմելու տղա է, քոթակ է կերել քեզնից և ամբողջ հոգսը դու ես: Ուրեմն, գնո՞ւմ եք»:

«Չգիտեմ»:

«Իսկ այդ Աշոտը պիտի ապրի՞ մեր դասարանում»:

«Ինձ էլ են արդեն հեռացրել, ուրեմն, պիտի ասեիր մեր նախկին դասարանում: Ես, իհարկե, նրան կսպանեմ՝ մինչև գնալս»:

«Պարզվեց, որ գնում ես»:

«Նոր ինքդ էիր համոզում»:

«Ծխենք, Արմեն, օգտվենք երկու ժամվա մեր ազատությունից: Իսկ Վահանի հետ մենք հանդիպում ենք համարյա ամեն օր: Չի պոկվում ինձնից»:

«Ասում են Մամյանը հենց առաջին օրը պատմել է, թե ինչպես են իրենք պատերազմի օրերին, մի գիշերում կարդացել «Մանոն Լեսկոն»»:

«Ուզում ես ասել ես Մանո՞նն եմ»:

«Վահանն է ասպետ դը Գրիյոն»:

«Նա լավ տղա է, դեմ չեմ, բայց նրա նմանի հետ չեմ ամուսնանա: Սեր չկա, ուրեմն, ամուսնությանը հաշիվ է․․․ Կամուսնանամ, ուրեմն, հաշվով, որ հետո, երբ չստացվի, ասեմ՝ հաշիվներս սխալ դուրս եկան: Եվ ոչ թե սերս»:

«Կին ես դառել, Մարի, հոգնած ու ջղային կին»:

«Մի օր պիտի դառնայի, իսկ ես, գիտես, ամեն ինչում շտապում եմ»։

Ամբողջ գիշեր Մարին այրվում էր մղձավանջի մեջ, աչքերը չէին փակվում, միտքը չկչկում էր պատի ժամացույցի պես՝ լարված, տենդագին։ Ուրիշին դժվար չէ ճշմարտություններ ասել, ասել այնպես հեշտ, կարծես ոչ մի կասկած չկա այլես, ասես ամեն ինչ հասարակ է՝ ինչպես այբուբենի տառերը։ Ատում է հորը, բայց ինչո՞ւ է գնում, ցցվում նրա գործարանի դռների մոտ, որ գոնե հեռվից նայի այդ օտար, հարազատ ու անծանոթ մարդուն։ Ինչո՞ւ է անընդհատ կարդում նրա նամակները, չարանալո՞ւ համար, ինչքա՞ն կարելի է, ո՞րն է չարության սահմանը։ Հանվե՞ց, այո։ Նախ՝ չհասկացավ, թե ինչպես կատարվեց, խաղ էր, որ առաջին պահին հրապուրիչ թվաց, հետո հանձնվեց պարի տարերքին, հետո տեսավ Վահանի հիմար, զարմացած հայացքը։ Գուցե հա՞յրս էլ այդպես մի օր նայել է մորս, կայծակի պես փայլատակեց նրա մտքում, գուցե ես հիմա փրկում եմ մեր ապագա երեխային, որ տասը տարի հետո կարդալու է այդ Վահան կոչեցյալի նամակները և լաց է լինելու։ Այս տարիներին մեկը հասկացա՞վ իմ տառապանքը՝ իմ ընկերներից, ուսուցիչներից։ Բոլորի համար ես երես առած, սանձարձակ ու հեշտ աղջիկ էի, որ դերասանուհի է դառնալու։ Այդ հանգուցյալ Սանոյանը երկու անգամ շարադրության տվեց մեր հայրերի մասին, ոչ մի անգամ ես չգրեցի, հետաքրքրվե՞ց, անհանգստացա՞վ... Երկու անգամ «անբավարար» ստացա շարադրությունից, և դասատուն չնկատեց անգամ, որ տետրի այդ էջերը բաց թողեցի, ինը էջ սպիտակ մնաց տետրում՝ գուցե իմ կյանքի ամենակարևոր և դժվար էջերը. «Մարի, ցրված աղջիկ ես,— ամեն անգամվա պես նույն բանն ասաց ասուցիչը,— դարձյալ էջեր ես բաց թողել, մյուս անգամ ուշադիր եղիր»։ Այդպիսի անզգա մարդն ինչպե՞ս մեռավ ինֆարկտից։

«Քնած չե՞ս, Մարի»։

«Քնած եմ, մա, իսկ դո՞ւ»։

«Ես էլ եմ քնած, Մարի»։

Ծիծաղեցին։

«Նոր դասարանդ լա՞վն է»։

«Լավն է, մա, լուրջ մարդիկ են: Երկու տղա արդեն սիրահարվել են ինձ: Մեկի անունն Արմենակ է: Պատկերացնո՞ւմ ես՝ փեսաղ — Արմենակ»:

Մայրը ծիծաղեց:

«Իսկ դու ե՞րբ ես սիրահարվելու, Մարի»:

«Երբ ծերանամ, մա»:

Ո՞վ է մեզ ավելի հաճախ խաբում, քան մենք ինքներս: Միայն մորս մոտ չեմ կարողանում խաղալ, միայն մայրս է թափանցում իմ մեջ, որովհետև սիրում է ինձ: Անպաշտպան եմ մորս առաջ զրահ չունեմ, դիմակ չունեմ:

«Երեկ պատահաբար հորս տեսա, մա: Գնում էինք նույն տրոլեյբուսով: Նա ինձ չնկատեց»:

«Տեսքն ինչպե՞ս էր, լսեցի, որ հիվանդացել է: Չմոտեցա՞ր. . .»:

«Ես քնած եմ, մա»:

Հետո նրանք լաց եղան մութի մեջ, ամեն մեկն իր համար, ամեն մեկն աշխատելով որքան հնարավոր է անձայն:

«Ես արդեն ծերացել եմ, մա,— արցունքի մեջ ժպտաց Մարին,— արդեն ծերացել եմ, գուցե ժամանա՞կն է սիրահարվելու. . .»:

Ձայն, որ ապրում է օվկիանոսի ափին

Դասարանը լուռ էր ու կենտրոնացած: Լսում էր ուսուցչին:

Մամյանը նստել էր վերջում, ազատ նստարանին:

«. . . Ավստրալիայի, Հարավային Ամերիկայի, թե՞ Աֆրիկայի աննշան քաղաքներից մեկում ապրում էր մի մարդ: Տեղացի տանտիրոջ մեծ առանձնատանը

նա մի սենյակ էր վարձում, լուռ ու աննկատ անցնում էին նրա օրերը, մարդը ծեր էր ու, երևի, հոգնած: Տանտերերը վաղուց նկատել էին, որ ամեն շաբաթ օր, երբ նա, հայտնի չէ որտեղից ինչ-որ մի թերթ էր ստանում, ստանալուն պես փակվում էր իր սենյակում, և հետո լսում էին, բավական երկար լսում էին նրա ձայնը: Բառերն անհասկանալի էին, և հետո տանտերերը սովորեցին, երևի նախկին դերասան է կամ փաստաբան՝ հիմա ոչ բեմ ունի, ոչ հաճախորդ:

Մարդը այդպես լուռ ու աննկատ ապրեց ու մի օր էլ այդպես մեռավ, և տանտերերը, նրա խնդրանքը հիշելով, հեռագրեցին մեծ քաղաք, նրա ինչ-որ ազգականի, որի հասցեն մարդը թողել էր: Այդ ազգականը, տարեց մի կին, հաջորդ առավոտ եկավ մի քահանայի հետ, և մարդուն թաղեցին փոքրիկ, աննշան գերեզմանոցում: Գերեզմանի մոտ տանտերերն էին, սնազգեստ ազգականուհին և քահանան: Քահանան խունկ վառեց, երգեց անհասկանալի ու տխուր ինչ-որ երգ, և մարդուն թաղեցին:

Երեկոյան, երբ, բնականաբար խոսք գնաց սենյակն ազատելու, հանգուցյալի իրերը տնօրինելու մասին, տանտերը ազգականուհուն պատմեց, թե ինչպես էր մարդը երբեմն փակվում իր սենյակում և բարձրաձայն կարդում չգիտես որտեղից նրան հասնող լրագրերը:

— Ահա սրանք,— ցույց տվեց սեղանի վրա, աթոռներին և պատերի տակ դրված լրագրերը,— ի՞նչ լեզվով են:

— Հայերեն, դա նրա մայրենի լեզուն էր:

— Իսկ ինչո՞ւ էր բարձրաձայն կարդում:

— Ո՞վ գիտե, գուցե չէր ուզում մոռանալ իր լեզուն, այս քաղաքում նա ուրիշ ո՞ւմ հետ կարող էր խոսել իր լեզվով: Միայն իր հետ:

Տանտերը, որ ավստրալիացի էր, աֆրիկացի կամ ամերիկացի, զարմացած նայեց թերթերի կապոցներին, հետո մի օրինակ վերցրեց, շուռումուռ տվեց:

— Կարելի՞ է վերցնել: Իբրև հիշատակ, երևի նա բարի ու լավ մարդ էր:

— Նա բարի ու լավ մարդ էր,— տխուր հաստատեց ազգականուհին,— մնացած թերթերն էլ կարող եք տնօրինել՝ ինչպես ուզում եք․ մեր տանը, ցավոք, արդեն վաղուց չեն կարդում այս լեզվով, իսկ իմ աչքերը վատ են տեսնում․․․

Ասում են՝ տանտերը, որ ավստրալիացի էր, աֆրիկացի կամ ամերիկացի, սենյակը թողեց ինչպես կար, այլևս երբեք վարձով չտվեց այն, իսկ թերթերը մնացին սեղանին, աթոռների վրա, պատերի տակ։ «Թող այդ մարդու ձայնն ապրի իր սենյակում»,— ասաց նա որդիներին, կամ գուցե ոչինչ չասաց, միայն բանալին վերցրեց և երբեմն, երբ տխուր էր լինում ու դառնացած, մտնում էր այդ սենյակը և թվում էր, լսում էր այն մարդու ձայնը։

Տխո՞ւր հեքիաթ է։

Չգիտեմ ։

Մարդն ապրեց, տարիներ շարունակ խոսեց ինքն իր հետ և մեռավ, օտարության մեջ թողնելով իր ձայնը, և այդ ձայնը մինչև օրս էլ երևի ապրում է աշխարհի անհայտ, անանուն քաղաքներից մեկում, գրքերով, թերթերով լցված նեղլիկ մի սենյակի չորս պատի մեջ։

Կհարցնեք, ինչո՞ւ պատմեցի այս հեքիաթը։

Ձեր ընկերը՝ Արմեն Գարասեֆերյանը, տառապում է՝ Հայրենիքից գնալ–չգնալու հարցականների մեջ։

Եթե տառապում է, չի՞ կարող նրան էլ սպառնալ այս մարդու ճակատգիրը։ Ես ճանաչում եմ մարդկանց, որ հեշտ են գնում, նրանք թող գնան, բայց Արմենը տառապում է— ձեզնից մի քանիսը գիտեին։ Հիմա իմացաք ամենքդ»։

Դատ

Վանունու և Դանիելյանի դրույք)ը երկար էր ու դաժան։ Հին ընկերներ էին, այս դպրոցում իրար հետ աշխատում էին արդեն տասներկու տարի, այդ տարիներին կռվել էին, հաշտվել, միասին ծերացել։ Իրար հետ շախմատ էին խաղացել, գնացել

ֆուտբոլ, դանաղան ժողովներում ննջել էին, իրար պաշտպանել էին, որ երբ հարկավոր էր եղել, միասին էին դժգոհել վերևից, ներքևից, հառաչել էին, որ փոխվում է, չգիտես ինչու փոխվում է դպրոցի օդը, գլուխները շատ անգամ էին չարչարել հասկանալու, թե երեխաներն այս ինչու՞ չեն ուզում սովորել, իսկ ուսուցիչները չեն ուզում սովորեցնել։ Ասել էին ծայրահեղ բաներ, անիծել էին իրենց մասնագիտությանը, բայց անդավաճան սիրել էին դպրոցը՝ ամեն մեկն իր ձևով։

Եվ ահա այսպիսի դաժան վեճ։

Վահանին Մամյանից պահանջել էր գտնել Աշոտի դատաստանի հեղինակներին, պատժել։ Մամյանն ասել էր, որ ինքը գիտի, թե ովքեր են, բայց նրանց բռնկումն ազնիվ է համարում և հարկավոր է ուրիշ դպրոց փոխադրել Աշոտին։

Վանունին ձեռքը խփել էր սեղանին, իրենից անկախ կրկնել էր մինիստրության պատմաբանի բառերը, իսկ Մամյանը նստել, անմիջապես դիմում էր գրել իր ազատման խնդրանքով։

— Ուզում ես ասել, որ ես վախկոտ եմ, մորթապաշտ, կեղծավոր, որ դողում եմ իմ աթոռի համար․․․ Դա՞ ես ուզում ասել։

— Դու ես ասում, Սահակ։

— Ուզում ես ասել՝ Մամյանն իսկական մանկավարժ է, Մակարենկո, Սուխոմլինսկի, չգիտեմ ինչ․․․

— Դու ես ասում։

— Ի՞նչ ես Քրիստոսի պատասխանները տալիս։ Մանավանդ, որ ես էլ Պիղատոս չեմ։

— Երկուսս էլ Ավետարան կարդացել ենք, լավ է։ Բայց կարծեմ Պիղատոսն, ի վերջո, ասաց․ ես չեմ ուզում իմ ձեռքերը թաթախել անմեղի արյան մեջ։ Այդպես է գրված Ավետարանում, Սահակ։

— Ուրեմն, Պիղատոսից է՞լ վատն եմ։

— Մեր լեզվով խոսենք։ Սահակ։ Մամյանը չպիտի գնա այս դպրոցից։ Մենք ամենքս մի քիչ ուրիշ դարձանք, երբ նա եկավ։ Պահպանենք նրան։ Ինձ էլ է հաճախ գրգռում նա, շատ բան չեմ ընդունում նրա արածից ու ասածից, բայց չե՞ս տեսնում, որ երեխաները սիրեցին նրան, չե՞ս տեսնում։ Այդ խենթ, ստահակ արարածները։

— Ո՞վ է նրան քշում դպրոցից։ Ինքը գրեց։ Շատ լավ էլ ձեռագիր ունի անիծվածը։

— Պատռիր այդ դիմումը, Սահակ։

— Գրանցված է, Մարտին, այդ դիմումն արդեն փաստաթուղթ է։ Պլյուս՝ հայտնել եմ մինիստրություն։

— Մի ամիս առաջ թող այս աթոռը, Սահակ, ավելի լավ է, քան մի տարի հետո։ Ես իբրև ընկեր եմ ասում։ Ես ինքս ինձ էլ՝ կասեի։

Դանիելյանը ձեռքը թափ տվեց ու գնաց դեպի կաշեպատ դուռը, Վանունին գլուխն առավ ափերի մեջ։ Անիծվեր այն օրը, երբ հորը չլսեց ու գնաց մանկավարժական։ Հիմա դպրոցին ռոբոտներ են հարկավոր՝ ջղեր ու կասկածներ չունեցող մարդիկ։

Դուռը բացեց Նարինեն։ Դռան առաջ խմբված էր Արմենենց ողջ դասարանը։

— Մենք հաստատ գիտենք, որ Արմենը տանն է,— ասաց Վահանը,— ներս հրավիրիր։

— Մտեք,— շփոթված կմկմաց Նարինեն։

Մտան հյուրասենյակ, որ համարյա դատարկ էր՝ մնացել էր սեղանը, մի քանի աթոռ, պատին՝ Կոմիտասի նկարն էր։ Շատերը նստեցին պարզապես հատակին։ Արմենը ներս մտավ, տեսավ ընկերներին, սրտում աղմկեցին ուրախությունն ու զարմանքը, նաև ինչ-որ լուրջ բան կռահեց։ Խոհանոցից եկան ծնողները։

— Բարով եք եկել, ջահելներ,— կմկմաց հայրը,— ինչ լավ դասարան եք, այսպես խմբովին չէի տեսել։ Տիկին Ազնիվ, սեղան պատրաստիր, պատվարժան հյուրեր ունենք։

— Մի անհանգստացեք և հետո՝ այսքան դատարկ ստամոքս լցնելը հեշտ գործ չի։ Խնդրում ենք նստեք, ուզամ ենք խոսել Արմենի հետ։

— Դու պիտի չգնաս, Արմեն,— լացակումած շտապեց Լուսիկը։

Արմենը հասկացավ․ ահա թե ինչու են եկել ընկերները։

— Չպիտի գնաս,— ասաց Սմբատը,— դու չես ուզում, չէ՞․․․

Համբարձում Գարասեֆերյանը հասկացավ, որ ծանր խոսակցություն է սպասվում։ Եվ հանկարծ կատաղեց․

— Ի՞նչ է, մեր տանը կոմերիտական ժողո՞վ եք անելու։ Պարկեշտ չէ, ջահելնե՛ր։ Ձեր ծնողները ձեզ կնախատեն։

— Թեկուզև ժողով,— ասաց Վահանը,— բայց ի՞նչ ժողով, մենք խոսում ենք մեր ընկերոջ հետ։ Իրավունք չունե՞նք։

— Երբ նրան հեռացրին, այն ժամանակ Ժողով անեիք,— Նարինեն թունոտ նայեց Վահանին։

— Հեռացրի՞ն, ո՞ւմ հեռացրին։

— Արմենին, հայրիկ, Արմենին արդեն մի շաբաթից ավելի է հեռացրել են դպրոցից։

— Ա՞յդ էլ արին։ Օվիր-ից են, հարկավ, կարգադրություն իջեցրել։ Կանենն՝ հայրենիքն էլ իրենցն է, օրենքներն էլ։ Դե տղաս, է՞լ ինչի ես սպասում, դպրոցից էլ դուրս արին։

— Երևանում հարյուր ութսուն ուրիշ դպրոց կա, Հայաստանում՝ հազար երեք հարյուր,— ասաց Արմենը,— և քո Օվիր-ը կապ չունի։

— Ինչո՞ւ եք տանում Արմենին,— լացակումած ասաց Լուսիկը,— նա առանց Երևանի չի կարող։

— Առանց Երևանի՞, առանց Երևանի ո՞վ կարող է, աղջիկս, արտասահմանի հայերը, ի՞նչ է, հայ չե՞ն. . .

— Արմենն արտասահմանի հայ չէ։ Երևանցի է։

— Մենք հիմա գալիս ենք լուսավորության մինիստրի մոտից․ Արմենին վաղվանից կվերականգնեն դպրոցում,— ասաց Վահանը։

— Ճի՞շտ,— Արմենը հազիվ զսպեց լացը․ ոչ նրա համար, որ վերականգնել են, այսինքն, ոչ միայն դրա համար, այլ ուրիշ բանի համար, որ այդ պահին նրա մեջ անուն չունեցավ,— ճի՞շտ. . .

— Իմ երեխան խաղալի՞ք է, ի՞նչ է։

— Զուրախացաք, հայրիկ,— տխուր ասաց Վահանը,— ափսոս, որ չուրախացաք։

Նրանք դեռ չէին գնացել մինիստրություն, նրանք այստեղից էին գնալու։ Սոնա Միքայելյանը խնդրել էր, որ մինիստրն ընդունի նրանց, նրանք այստեղից են գնալու և վստահ են, որ կհամոզեն. . .

— Չորս ամիս է տանջում են ինձ օվիր-ում,— հոր ձայնը դողաց,— ինչի՞ համար. . .

— Ի՞նչ անեին, հենց առաջին օրը ասեին բարի ճանապարհ, գային-կապեի՞ն ձեր ճամպրուկները։

— Հանգիստ, Սմբատ,— մեղմ ասաց Արմենը,— հորս չնեղացնեք. . .

— Հորդ նեղացրին, երբ պապիդ քշեցին երկրից։

— Ո՞ր երկրից։

— Երկրից, տղա ջան, մեր երկրից։ Երկիրը քանի՞սն է լինում․․․

— Իսկ Հայաստանը ո՞ւմ երկիրն է։

— Սա ամբողջ Հայաստանը չէ։ Պատմություն պիտի իմանաս։

— Մյուս մասը, երկրի մյուս մասը երևի Ավստրալիան է, Հայաստանի կեսը Ավստրալիա՞ն է, Ֆրանսիա՞ն, Բեյրո՞ւթը։

— Արմենին իր երկրից եք տանում։

— Դուք չեք հասկանա, դուք ջահել եք։ Քույրս այնտեղ է՝ միակ հարազատս, ուրիշը չունեմ․․․

— Մենք էլ Արմենի հարազատներն ենք։ Չէ՞, Արմեն․․․

— Հարազատ եք, գիտեմ,— հայրը մեղմացավ, երևի հասկացավ, որ այս ջահելները օվիր չեն, դժվար է սրանց հետ կռվել, դժգոհել, թեկուզ՝ արդար դժգոհել,— էլի կմնաք հարազատ, Արմենը կգա Հայաստան, ի՞նչ կա որ, մի օր էլ դուք կգաք Ավստրալիա․․․

— Արմենը մեզ այնտեղ ավելի շատ կկարոտի, քան այստեղ իր հորաքրոջը։

— Հորաքրոջդ տեսե՞լ ես, Արմեն։

— Մի անգամ, Հայաստան էր եկել։

— Էլի կգա։

— Տղաներ, աղջիկներ,— Համբարձում Գարասեֆերյանը մոռացել էր բոլոր թթու, կծու, կոպիտ այն բառերը, որ երեք-չորս ամիս կրկնում էր զանազան պաշտոնյաների մոտ,— Ազնիվ, մի բան էլ դու ասա:

Արմենի մայրը փշրված մնացել էր դռների մեջ: Ձեռքերը կրծքին խաչած՝ նա մոլորվել էր այս ժխորից և ոչինչ չկարողացավ ասել, պարզապես լաց եղավ:

— Մայրիկ,— մորը գրկեց Արմենը,— մենք դեռ ոչինչ չենք որոշել, բայց գիտես, որ ես. . . կմեռնեմ առանց Հայաստանի. . .

— Կվարժվես, կընտելանաս, որդիս,— սիրտ առավ հայրը,— հիմա ինչ է Հայաստան գնալ-գալը: Այնտեղ էլ հայրենասեր հայեր են պետք. . .

— Ուրեմն, Հայաստանը ձեզ համար հյուրանո՞ց է եղել,— Վահանը կարծես ինքն իր հետ էր խոսում, որտեղի՞ց էին ծնվում այդ նախադասությունները,— Հայաստանն իջևանատո՞ւն է, հարկադիր վայրէջքի օդանավակայա՞ն. . .

— Փոքր տղա ես, ինձ դա՞ս ես տալիս,— Համբարձում Գարասեֆերյանը հանկարծ դուրս եկավ իր ափերից, ամիսներ-ամիսներ նրա ներսում կուտակված դառնությունը ժայթքեց դուրս, նա արդեն հաշիվ չէր տալիս, թե ինչ է ասում,— ինձ դա՞ս ես տալիս, ինձ՝ մշեցու զավակիս հայությո՞ւն ես սովորեցնում: Կշտացանք, ջանըմ, այս հայրենիքն էլ ձեզ, հայությունն էլ. . .

— Հայրենիքի՞ց կշտացաք. . .

Ո՞վ հարցրեց: Համբարձում Գարասեֆերյանը մեքենաբար ետ մղեց զնդակը:

— Հա, ջանըմ, կշտացանք:

Ո՞վ հանկարծ սկսեց լաց լինել, հեկեկոցը պայթեց միանգամից, ասես պատնեշը ետ տարան ջրվեժի առջևից, և հեղեղը ազատություն ստացավ: Արմենն էր: Նա գլուխն առել էր ափերի մեջ և լաց էր լինում՝ դառը, անողորմ արցունքներով: Տղաները, աղջիկները օդակեցին նրան, հայրը կարկամեց տեղում, Նարինեն գոռաց՝ «վալիդոլ, շուտ» (երևի այս օրերին էլի պատահել էր, միայն նա գիտեր): Մայրը փշրված փլվեց իջանցքի աթոռին, սիրտ չանելով մոտիկ գալ: Իսկ Արմենը ոչ մի հորդոր չէր լսում,

նրա շուրջն ասես ոչ ոք չկար, նա ասես մենակ էր անապատում և լաց էր լինում, հեկեկում էր, գոռում իր անուժ, անպաշտպան կատաղությունից։

— Հայրիկ,— մրմնջում էր նա,— հայրիկ, հայրենիքին ձեռք չտաս, հայրիկ, ես քեզ խնդրում եմ․․․

— Չենք տա, մենք Արմենին ձեզ չենք տա,— արցունքը սրբելով ասաց Լուսիկը։

— Ախր դուք ո՞վ եք, որ չեք տա, ո՞վ եք,— համբարձում Գարասեֆերյանը խեղճացած էր, Արմենի լացից սարսափ պատեց նրա սիրտը,— ախր դուք ո՞վ եք, չեմ հասկանում․․․

— Երկիրն ենք,— սառը, մի քիչ փշրված ասաց Վահանը,— երկիրն ենք կամ երկրի․․․ մի մասը։

— Հայրիկ, ձեռք չտաս Հայաստանին,— դեռ արցունքի միջից մրմնջում էր Արմենը։

Դա տղամարդու լաց էր։

Պետք է սովորել հին հունարեն

Անտոնյանն, այնուամենայնիվ, որոշեց խորհուրդ տալ, բայց ոչ միանգամից Վանունուն, այլ Դանիելյանի միջոցով։ Նա չէր հասկանում, թե ինչպես է եղել, որ բոլոր խենթ ու խելառները հավաքվել են 10-ի «բ» դասարանում։ «Իմ դասարանում,— սիրում էր նա կրկնել,— ոչ հանճար կա, ոչ անճար։ Երեխաներ են, էլի, իրենց համար սովորում են»։ Թող մի գիրք էլ պակաս կարդան, մտածում էր նա, հիմա բոլորի միտքը տնտեսագետն է, ինժեները, իրավաբանը, դարն է փոխվել, դարը։ Որ թողնես հարցեր տան, ծրագիրքան պիտի ծալես ու նստես-լսես նրանց։ Հարցը ո՞րն է, եկել են սովորելու, թե՞ հարց տալու։ Ամեն բան պիտի անել, որ դեպքը մեծ աղմուկ չհանի։ Ախր, Վանունին էլ նույնն էր ասում, հիմա ինչո՞ւ է երկու ոտքը դրել մի կոշիկի մեջ՝ չէ, հրամանս չեմ փոխի, պիտի Արմեն Գարասեֆերյանին հեռացնենք։ Ախր որ հեռացնելու լինես, դպրոցում մարդ չի մնա։ Ասում են Արմենենց ընտանիքն էլ դիմել է

արտասահման վերադառնալու: Կգնան, հիմա էլ Ավստրալիայում կհոլովվի Խորենացու դպրոցի անունը: Թող մնա, երկու ամիս է, էլի, թող սովորի ու գնում է գնա:

— Գնամ է գնա՞,— Դանիելյանը սառը նայեց Անտոնյանին,— գնում է գնա՞, ասում ես, իսկ դասերից ժամանակ հայրենասիրության ես քարոզում, մայրենի լեզու, ֆլան-ֆստան:

— Ի՞նչ կա ձեռներիս, ի՞նչ անենք:

— Եթե մինչև հիմա այդ խելոք հարցերդ տայինք, կարող է պատասխան էլ ճարվեր:

— Ճիշտ ես ասում, համաձայն եմ: Բայց ի՞նչ պիտի անեինք:

— Ինչո՞ւ են գնում: Կարելի՞ էր մի անգամ հարցնել տղային:

— Ափսոս չէ՜ իմ դասարանը, ոչ հանճար կա, ոչ անճար:

— Կա,— ասաց Դանիելյանը,— վերջինից կա:

Անտոնյանը ծիծաղեց, թեպետ Դանիելյանի թթու ակնարկը (երևի իրեն նկատի ուներ) հասկացավ: Նա չէր կարող հակաճառել Դանիելյանին, նա առհասարակ չէր սիրում որևէ մեկին հակաճառել:

— Մարտին,— ասաց նա,— էս հոտած զրույցին վերջ տանք: Թարմ միս ունեմ: Տուն գնանք, խորոված ուտենք, նարդի կխաղանք, ուզում ես՝ տղայիս հետ շախմատ կխաղաս:

— Մեր դպրոցում քաոս է, քաոս:

— «Քաոս» էլ արդեն ոչ ոք չի կարդամ: Ինչ որ դասագրքում գրված է, անգիր են անում, ասում: Հետո էլ՝ կինոն են տեսել: Այսինքն, դու ասացիր, չէ՞, ով պիտի հիմա «Պատերազմ և խաղաղության» կարդա, քսան հատ ֆիլմ են նկարել:

— Այդպիսի խելոք բա՞ն եմ ասել,— անկեղծ զարմացավ Դանիելյանը, հետո ծիծաղեց,— ասած կլինեմ։ Իսկ դու կարդացե՞լ ես։

— Երկրորդ հատորը, որտեղ Նապոլեոնի մասին է։

— Անտոնյան, պատկերացնո՞ւմ ես, Մասիսը հանկարծ մեզ տային։ Ի՞նչ պիտի գրեին քո բանաստեղծները։ Արագածը մերն է, մի տող գրո՞ւմ են։

— Իսահակյանն օրինակ։

— Ե՞րբ է գրել։

— Վաղ շրջանում։ «Ալագյազի մանիները» չե՞ս կարդացել։

— Ասում ես թարմ մի՞ս կա տանը։

— Բաստուրմա եմ դրել։ Երեկվանից։ Վանունուն էլ համոզիր, գնանք։

— Վանունին ինքը հիմա բաստուրմա դրվածի պես է։ Կրակն էլ վառել են մինիստրությունում, մնաց՝ խորովեն։

— Կոչում կտա՞ն։ Չեն տա, չէ։ Թե՞ կտան։

— Չգիտեմ։ Ուզո՞ւմ ես, որ տան։

— Հարյուր տոկոսով արժանի է, բայց չեն տա։ Այս դեպքը չլիներ, կտային։

Նրանք արդեն քայլում էին դպրոցի բակով, որը լիքն էր երեխաների ժխորով։ Գարնանային գնզան օր էր՝ լցված արևով, հույսերով, թարմությամբ։ Անտոնյանը փորձեց փիլիսոփայել․ «Նայում ես այս երեխաներին ու մտածում․ որտեղի՞ց են հետո ծնվում ստահակները, պաշտոնամոլները, անստորագիր նամակ գրողները, որտեղի՞ց»։

— Նրանց մեջ հենց հիմա բոլոր ասածներդ կան, Անտոնյան։

— Ընկեր Մամյան, զանգահարեք շրջկոմի առաջին քարտուղարին։

— Ո՞ւմ, ընկեր Վանունի։

— Ասացի՝ առաջին քարտուղարին։

— Ազգանունն ինչպես է, ինչո՞ւ զանգահարեմ։

— Ի՞նձ եք հարցնում։

Վանունին ընդգծված պաշտոնական էր։ Հիմա էլ շրջկոմը․ երևի զնացել է, բողոքել կամ նամակ է գրել։ Կամ դուցե Քանքանյա՞նն է քչփորում։ Չէ, եթե այդպես լիներ, այդքան հարգալից զանգ հազիվ թե տային․ «Խնդրեք, որ զանգահարի․ ե՞րբ, երբ որ կարող է»։ Եթե իրենք են կանչում, բառերն էլ են ուրիշ, տոնն էլ․ «Վանունի՞, տասնմեկին լինես ընկեր Տիգրանյանի մոտ»։ Այդ ժամին գուցե բժշկի ես գնալու, գուցե մանկավարժության խորհուրդ ունես, կամ դաս, ո՞ւմ է հետաքրքիր։ Այս անգամ ուրիշ էր․ «Երբ որ կարող է, իհարկե, հաճելի կլիներ, այսօր»։ Եվ հենց ինքը՝ Տիգրանյանն էր խոսում։ Չէ, բողոքել է, ավել-պակաս բաներ ասել երևի։ Գուցե լսի՞ Դանիելյանի խորհուրդը․ ավելի լավ է մի ամիս առաջ, քան՝ մի տարի հետո։

— Դե զանգահարիր, ի՞նչ ես մոլորվել։ Տիգրանյան է ազգանունը, իբր թե չգիտես։

— Ես շրջկոմում գործ չունեմ։

«Խաղում է․ բոլորը դերասան են դառել, իսկ թատրոններում դերասան չկա»։

— Այ տղա, հո չե՞ս գժվել։

Վանունին իր ձեռքով հավաքեց համարը, խոսեց քարտուղարուհու հետ․

— Ընկեր Տիգրանյա՞ն։ Վանունին է, Խորենացու դպրոցից։ Ընկեր Մամյանը հիմա ինձ մոտ է, խոսափողը տալիս եմ իրեն։

Մամյանը խոսափողը վերցրեց՝ ինչպես շիկացած հարթուկը կվերցներ։

— Լսում եմ։ Ձե՞զ մոտ։ Ուզում եք զրուցե՞լ։ Ինչ հարցի մասին։

Գժվել է՝ մտածեց Վանունին, կամ այս աշխարհից չէ, այ տղա, առաջին քարտուղարին ո՞վ է հարցնում, թե ինչի մասին պիտի խոսեն։ Կամ՝ լավ դերասան է։ Շատ լավ։

— Հիմա դաս ունեմ, կարող եմ գալ մեկ ժամից հետո։ Հարմա՞ր է. . .

Մամյանը դրեց խոսափողը.

— Ինչի՞ է կանչում։

— Գնա, կիմանաս,— հետո խորամանկ կկոցեց աչքերը,— իմանաս, ինձ էլ կասես։ Դասը չէր փախչի, հիմա պիտի գնայիր։

— Մամյա՞ն։ Խորենացու անվան դպրոցի՞ց,— քարտուղարուհին աչքի տակով նայեց սեղանի ապակուն դրած թուղթը,— այո, այո, մի փոքր սպասեք։

Նստեց բազկաթոռին։

— Ծխել կարելի՞ է։

— Ում որ է ընկեր Տիգրանյանը ինքը կկանչի,— քարտուղարուհին երևի չլսեց հարցը, քարտուղարուհիներին առհասարակ թվում է, որ բոլոր սպասողները միայն մի հարց պիտի տան, ե՞րբ կընդունի։

Մամյանը սիգարետը մատներով տրորեց գրպանում, երբ ծխել չէր կարելի, այդպես էր անում։

Վահանը պատմեց Արմենենց տուն գնալու մասին։ Ամբո՞ղջ դասարանով, չէր սպասում։ Աշոտ Քանքանյանը կա՞ր։ «Առանց նրա է, որ դառնում ենք ամբողջ։ Ուզում էր գալ, չտարանք։ Երևի գալիս էր, որ մի նոր ստորության անի. ի՞նչ ասացինք, ինչպե՞ս ասացինք»։ Նորերը դաժան են, մտածեց ասացիչը, իսկ բարությունը պիտի բռունցքներ չունենա, պիտի անպաշտպան լինի։ Տոլստոյական քարո՞զ։ Բայց ինչո՞ւ է

գրել Աշոտը, ի՞նչ կշահեր, եթե ընկերներին պատժեին, չէ՞ որ ամենքն ուզում էին մոռանալ կատարվածը, ամեն բան կարծես հարթվում էր։ Ուրիշ, եթե Աշոտին մեղադրեին, կմտածեր՝ պաշտպանվում է։ Հենց այնպես նստել և գրել անստորագիր նամակ։ Հարկավոր է խոսել Աշոտի հետ, բանալի գտնել, ներս մտնել, տեսնել ի՞նչ կա նրա խորքում, գուցե վիրավորված է դասարանից առհասարակ, գուցե Մարիին սա՞ էլ է սիրում, իսկ Մարին, պարզ է, արհամարհում է։ Ինչո՞ւ են սրա մականունը ճշմարտախոս դրել, հասկանալի է՝ ոչ լավ իմաստով։ Գուցե պարզապես բնավորություն է՝ ասում է երեսներին ամեն ինչ (ո՞վ է հիմա դա սիրում) և դա դուր չի գալիս։ Այդ դեպքում՝ թող ասեր Վանունու մոտ կամ գոնե նամակի տակ դներ ստորագրությունը։ Արդեն երրորդ օրն է Սոնան չի երևում, Դանիելյանը ման է գալիս կենտրոնացած և դավադիր, Անտոնյանը պատրաստվում է իր դասարանին տանել Մատենադարան։ Խմբով կարելի՞ է Մատենադարան գնալ։ «Լավ միջոցառում եմ մտածել,— ասաց երեկ,— տանեմ, թող տեսնեն մեր ձեռագրերը, հասկանան, թե ինչ ժողովրդի զավակ են»։ Մատենադարան գնալը միջոցառո՞ւմ է։ «Ես խնդրել եմ, որ իրենք գնան— ով՝ երբ ուզում է։ Շաբաթ օրը գրելու են։ Դասերից դուրս։ Դու գիտես, որ ծրագրում չկա»։

— Ընկեր Տիգրանյանը ձեզ է սպասում, ընկեր Պապյան։

— Մամյան։— Ու գնաց դեպի դուռը, մտքում դեռ խոսելով Անտոնյանի հետ, մի շերտ ունեցող մարդ է, գուցե իրե՞ն է թվում։ Գուցե ինքը դեռ միայն մի շերտն է տեսել։

Տիգրանյանը իր տեղից վեր կացավ և ձեռքը մեկնեց, քառասունհինգին մոտ մարդ էր՝ սպիտակող քունքերով։ Հոգնած էր երևում, մտազբաղ։

— Ես խնդրեցի, որ գաք, որովհետև ինձ հաղորդեցին ձեր զրույցը մեր շրջկոմում։

Պարզ է․ Քանքանյանն իր գործն արել է։

— Դուք, իհարկե, կուսակցության անդամ չեք․․․

— Այո, բայց․․․

— Սուրճ կխմեիք․․․

Այ քեզ անցում:

— Կարելի՞ է ծխել:

— . . . Եվ սուրճ: Ճի՞շտ հասկացա:

Քարտուղարը երկու երկարատև զանգ տվեց: Երևի նշանակում էր՝ երկու բաժակ սուրճ: Իր նախկին դպրոցում դիրեկտորը յոթ հոգու կանչում էր զանգով՝ ուսմասվարներին, ավագ ջոկատավարին, քարտուղարուհուն, տնտեսվարին, կուսբյուրոյի քարտուղարին, արհկոմի նախագահին: Ամեն մեկն իր զանգերի թիվը գիտեր: Զա՛նգ՝ ոտքի էր կանգնում քարտաղարուհին, երկրորդ, զանգ՝ սա նստում էր, նստած տեղում սկսում էր շարժվել առաջին ուսմասվարը, երրորդ. . . երկրորդ ուսմասվարը. . . Եվ այսպես շարունակ: Ամենադժվարը տնտեսվարինն էր՝ յոթ զանգ, և ամենաանհասկանալին, որովհետև նա հազվադեպ էր ուսուցչանոցում լինում: Ինչո՞ւ հանկարծ հիշեց զանգերը:

— Պատմությանը, իհարկե հիմնական գծերով ես ծանոթ եմ: Ցավալի դեպք է:— Եվ հանկարծ:— Դուք ո՞ր դպրոցում եք աշխատել մինչև. . . Մերանգուլյանի մո՞տ. . . երե՞ք տարի, այդքան դիմացա՞ք:

Ուրեմն, Մերանգուլյանին լավ է ճանաչում: Դա մխիթարական է:

— Ուրեմն, այդ հերոսի ընտանիքն ուզում է արտասահման գնալ: Այդպես: Իսկ հերոսուհին արդեն երեկոյան դպրոցում է:

— Արմենն ինձ թվում է լավ տղա է, աղջկան չեմ տեսել: Երկու օր առաջ ամբողջ դասարանը գնացել է նրանց տուն: Իրենք՝ աշակերտներն են որոշել ու գնացել: Դատավարության պես բան են արել, պատմում էին, որ ծնողները բառ չեն գտել ասելու, մոլորվել են:

— Ամբողջ դասարանո՞վ, ասում եք:

— Բացի. . . բացի Աշոտ Քանքանյանից:

— Ա, մեր Խաչիկի որդին։

— Գիտեք, այդ բանն, իհարկե, չպիտի անեին, կարելի էր ուրիշ կերպ, բայց․․․ ուզո՞ւմ եք անկեղծ լինեմ, գրատախտակին գրածը սրտովս էր՝ «Նա մատնեց իր ընկերներին․ այդպես է սկսվում նաև դավաճանությունը Հայրենիքին»։

— Մի քիչ պաթետիկ չէ՞։

— Ուզո՞ւմ եք, ձեզ մի շարադրություն ցույց տամ, մի քանի տող, կասեք պաթետիկ է, բայց․․․ Ես հավատում եմ։ Շատ չե՞նք առօրյա, մանրմունր դարձել, զգուշանում ենք նվիրական բաներից, հանկարծ չասե՞ն կեղծում է․․․ Կարդա՞մ։

— Այս, այո, խնդրեմ։

Մամյանը բացեց Լուսիկ Սարուխանյանի տետրը․ «Ինչո՞ւ մեծերը պատերազմի մասին խոսելիս, մեզ մի տեսակ նախատինքով են նայում․ այսինքն, ձրիակերներ, գիտե՞ք, թե ինչեր ենք մենք արել ձեզ համար։ Մեզնից, այդ «ձրիակերներից» ոչ մեկը մեղավոր չէ, որ մեծերը տեսել են պատերազմը, իսկ մենք՝ ոչ։ Իսկ եթե հանկարծ նորից պաաերազմ լինի․․․ ես համոզված եմ, որ մեր տղաների երկար մազերը, եթե տեղը գա, ամուր օղակ կդառնան թշնամուն խեղդելու համար, իսկ աղջիկները, իրենց շալվարները պատռելով, կկապեն տղաների վերքերը։ Եվ հետո, չե՞ք գտնում, որ մինիով ավելի հեշտ կլինի սողեսող գնալ կամ վազել․․․»։

— Մինի-յուբկայի բավական ինքնատիպ մեկնաբանություն է,— ծիծաղեց Տիգրանյանը, հետո մռայլվեց,— մեր զավակներին անգամ երբեմն չենք հասկանում։ Ասես նրանք հին հունարեն են խոսում, մենք՝ գրաբար։

— Պիտի սովորել հին հունարեն։ Ելք չկա, որովհետև ոչ թե ուրիշ ելք չկա, այլ դա է ճշմարիտ ճանապարհը։ Ջահելների հետ տարվող աշխատանքն ինձ հաճախ թվում է բալետ․․․ սառույցի վրա։ Մենք պարում ենք սառույցի վրա, իսկ սառույցից ներքև նրանց կյանքն է, իրենց հոգսերով, հիմարություններով, երազներով, սխալներով։

— Մենք նրանց չափում ենք միայն մեր ապրածով, մեր ջահելության մոդելով։

Մամյանին զրույցը սկսեց դուր գալ։

— Իսկ այդ Լինչի դատաստա՞նը․․․

Ձեռքը, որ մեկնել էր սուրճը վերցնելու, թեթևակի դողաց։ Սկսվում էր հիմնականը։ Ոչ, երևի այդ է ճանապարհը՝ կթողնի իր վերջին դպրոցը, կզբաղվի Ապոլիների թարգմանությամբ։

— ․․․Ուրեմն նրանք վստահ չեն եղել, հասկանո՞ւմ եք, վստահ չեն եղել, որ ստորությունը կպատժվի, որ մենք՝ մեծերս, կպատժենք։ Դրա համար իրենք են դատել։ Սա է ցավը։ Արել են իրենց ձեռքով, և ստացվել է․․․ Լինչի դատաստան։

Սուրճը խմեց միանգամից, շրթունքները վառվեցին։ Բայց սրտից մի քար ընկավ։

— Թվում է նրանց մասին ամեն ինչ գիտենք, որովհետև մեզ գիտենք։ Իսկ մեզ գիտե՞նք։ Տասնյոթ տարեկան պատանի և անստորագիր նամակ։ Ասեիր ամենքի ներկայությամբ կամ այն ժամանակ, երբ ուզում էին այդ բանն անել, բռնեիր ընկերներիդ ձեռքը․․․

Տիգրանյանը նրա մտքերն էր կրկնում բառ առ բառ։ Մամյանը ժպտաց։

Ահա Աշոտ Քանքանյանի նամակը․․․ Սա՞ ինչու է թղթապանակի մեջ։ Ցույց տա՞, թե՞ կարիք չկա։ Ի՞նչ իմանաս։

— Այդ նամակը․․․ կուզենայի՞ք տեսնել։

— Հետաքրքիր է։ Մեր դարակները լիքն են նման բաներով, բայց տասնյոթ տարեկանի գրած․․․ չեմ հանդիպել։

Մամյանը մեկնեց թուղթը։

Տիգրանյանը ակնոցը դրեց, սկսեց կարդալ։ Հետո հանկարծ ակնոցը հանեց, տրորեց ճակատը։ Նորից դրեց ակնոցը, մռայլվեց, Մամյանի աչքի առաջ կարծես

ավելացան կնճիռները․ «Չի կարող պատահել»,— ինքն իրեն ասաց, բայց ստացվեց, որ ասաց Մամյանին։

— Ի՞նչը։

— Ոչինչ։ Կարելի՞ է այս նամակը մեկ օրով նվիրեք ինձ։ Վաղը մենք նորից կհանդիպենք։

Նորից ուշադիր նայեց նամակը, նայեց ծրարը։ Հետո բավական կտրուկ ու չոր ասաց․

— Դուք ետ կվերցնեք ձեր դիմումը։ Ես խոսել եմ ում հետ հարկն է։ Մինչև ձեր գալն եմ խոսել։ Մարտին Դանիելյանն իմ հին ուսուցիչն է, սարսափում էինք նրանից՝ չոր, կծու մարդ էր, բայց ես հավատում եմ նրան։

Ահա, վերջապես, գաղտնիքը պարզվեց։ Դանիելյանն է, ուրեմն, խոսել քարտուղարի հետ և ոչ թե․․․ Դրա համար այս օրերին լուռ էր, անթափանց։

— Մինչև դուք կհասնեիք շրջկոմ, ես խոսեցի Վանունու հետ։ Ես, պարզապես, ուզեցի ձեզ հետ զրուցել։ Կշարունակենք վաղը, եթե կարելի է։

Հայր և որդի

Այն, ինչ հաջորդ օրը Մամյանն իմացավ Տիգրանյանից, աներևակայելի էր։ Մի գիշերում Տիգրանյանը կարծես ծերացել էր։ Նա ուսուցչին սպասում էր իր փոքր սենյակում, հրավիրեց նստել բազկաթոռին։

— Այն, ինչ պիտի ասեմ,— սկսեց նա անմիջապես,— գուցեև իրավունք չունենի ասելու, բայց չեմ ուզում նաև կիսվել ուրիշ մեկի հետ։

Տիգրանյանը, անսպասելի, նյարդային վեր կացավ աթոռից, սկսեց ետուառաջ անել սենյակում։ Լռությունը երկարեց։

— Վերջին մեկ տարում,— շարունակեց Տիգրանյանը,– մի քանի անստորագիր նամակներ են գնացել քաղկոմ, Կենտկոմ՝ շրջկոմի գործունեության, նրա զանազան աշխատողների մասին։ Ամեն անգամ ստուգվել են և հերքվել, բայց պղտոր առուն շարունակվում է․ մեկ ամիս առաջ ստացել են վերջինը։ Առայժմ վերջինը։ Նամակները նույն ձեռագրով են, ինչ-ինչ մանրուքներից կարելի է կռահել, որ գրողն, այնուամենայնիվ, անտեղյակ մարդ չէ։ Տաք, ամենօրյա լարում պահանջող աշխատանք և, իհարկե, հնարավոր է և՛ սխալ, և՛ վրիպում։ Բայց նայած թե ինչ հայացքով ես նայում այդ ամենին՝ զազրախոսի՞, թե՞ նույն գործով մտահոգ մարդու։ Անցյալ տարի մեր բաժնի վարիչներից մեկը ծանր սխալ էր թույլ տվել, մենք հայտնաբերեցինք, բայց ես խնդրեցի զբաղվել ուշադիր, լսել նրա բոլոր պատճառաբանությունները, խորամուխ լինել հարցի ծալքերի մեջ։ Եվ ահա, մինչ մենք զբաղվում էինք այս մարդու ճակատագրով, նամակ՝ նույն ձեռագրով՝ շրջկոմի ապարատում հովանավորում են հանցագործին։ Փաստերը սխալ չէին, որովհետև մեր փաստերն էին, բայց ո՞վ է գրել և չէ՞ որ մենք արդեն պատրաստվում էինք բյուրո մտցնելու։ Մի խոսքով,— Տիգրանյանը դառը ժպտաց,— պատրաստվեցեք լսել շատ ահավոր մի բան, այդ բոլոր նամակները գրված են ձեր աշակերտի ձեռքով։

— Ինչպե՞ս թե,— չհասկացավ Մամյանը,— մեր աշակերտը ի՞նչ․․․,— և ապշած ոտքի կանգնեց,— չի կարող պատահել։

— Այո, պատահել է․ հայր Քանքանյանը թելադրել է, որդին՝ գրել։ Ողբերգություն չէ՞։ Եվ այսօր, հենց քիչ առաջ, նա սովորականի պես ներս է մտնում, հարցնում է առողջությունս, հարցնում է, թե երբ եմ գնալու արձակուրդ, ստամոքսս հիվանդ է, բարեկամաբար խորհուրդ է տալիս, թե, ախր, այդքան չի կարելի աշխատել․․․

— Ով գիտի շողոքորթել, հենց նա է, որ գիտի նաև զրպարտել,– ընդմիջեց Մամյանը,— հին ճշմարտություն է։

— ․․․ Որ մենք երբեմն մոռանում ենք,— հառաչեց Տիգրանյանը։

— Ի դեպ, այդ տղան իր շարադրության մեջ գրել էր, որ երազում է դառնալ շրջկոմի առաջին քարտուղար։— Արդեն դռների մոտ ասաց Մամյանը, մտածելով, որ դա կզվարճացնի Տիգրանյանին։

— Հենց այդպես էլ գրե՞լ էր:

— Հենց այդպես:

Երկրաշարժ

— Երևում է ուժեղ մարդ ես, Մամյան,— ասաց Վանունին,— հասար նպատակիդ, քիչ առաջ զանգեցին, այդ տղային երևի հարկավոր է վերականգնել: Հո ինձ չբամբասեցի՞ր մինիստրի մոտ:

— Մինիստրի մոտ գնացել է դասարանը: Նա ինձ չընդունեց:

— Լավ, լավ, մի կոտրատվիր, հասկացանք: Ուրեմն սովորել եք, հա՞, իրար հետ: Ինչո՞ւ էիր թաքցնում: Դա դպրոցի համար էլ լավ է: Դիմումդ պատռել-գցել եմ: Աշխատիր, ի՞նչ է պատահել, ի՞նչ է, ի՞նձ հետ չես ուզում աշխատել: Եկող տարի հեշտ կլինի: Քո խելառներն ավարտումգնում են: Իններորդցիները ավելի խելոք են: Երկու տասներորդն էլ երևի քեզ տանք, Անտոնյանը գլուխ չի հանում: Եվ մի իններորդը: Լավ չէ՞:

Ո՞վ է ասել, որ Ռուբենի հետ սովորել են: Մամյանը ոչ մի գնով չէր ուզենա, որ դա իմացվեր: Լավ է, իհարկե, որ Ռուբենը ընդունել-լսել է երեխաներին: Պատկերացրեց Ռուբենին երեխաների հետ խոսելիս, երևի պատմել է մեր դպրոցական օրերից, իր չարություններից, ի՞նքն է ասել, սր սովորել ենք միասին, ուրիշ ո՞վ... Երեխաներին անպայման հյուրասիրած կլինի, հարցրած կլինի՝ սիրահարվո՞ւմ եք... Ռուբեն, Ռուբեն... Արքայական ժեստ է արել, նա սիրում էր այդպիսի բաներ, տեսեք, ինքը մի հատիկ խոսքով կարող է ուղղել սխալը, եթե նույնիսկ սխալ չի, կասի, որ թեպետ սխալ չի, բայց ինքը գտնում է, որ ավելի ճիշտ է այսպես ու այնպես անել: Ռուբենի նկատմամբ կուտակված դառնությունը փոքրինչ մեղմացավ: Երևի երեխաները դուրս են եկել՝ նրան սիրահարված...

— Ընկեր Վանունի, կարիք չկա, որ դպրոցում իմանան... Ես խնդրում եմ, մանավանդ, որ ընդամենը մի տարի ենք միասին սովորել, հետո ես գնացի ուրիշ դպրոց, աշակերտ ժամանակ էլ ինձ դպրոցից դպրոց էին քշում: Նա հիմա մեր ղեկավարն է, խնդրում եմ...

— Հասկանում, եմ, հասկանում եմ, Վահան։ Եվ զովում եմ, որ համեստ ես։ Սաֆարյանը լավ մարդ է, իսկական մանկավարժ է։ Դե, ինչ պիտի անես, մարդն զբաղված է, մերը մի դպրոց է, գլուխ չենք հանում, հազար ութ հարյուր դպրոց, հազար ութ հարյուր հոգս, քառասուն հազար ուսուցիչ։ Բայց հանդիպիր նրա հետ, գնա-արի, ինչի՞ ես կորցնում ընկերությունդ։

Դիմումը կտամ քննություններից հետո, մտածեց Մամյանը, և սեպտեմբերից կմնամ տանը։ Այդպես ավելի լավ կլինի, ինքը մարտիկ չէ, կռվող չէ, այլ մի տխուր, անօգնական հեքիաթասաց։ Դրանց ժամանակն անցել է։

Մի շաբաթ կլինի, որ չի այցելել մորը։ Գերեզման բառը մոր կողքին չդրեց, մորը տեսավ իր հին բազկաթոռին նստած, ակնոցն աչքերին։ Ուրեմն Արմենը վաղը-մյուս օրը կգա դասի․․․ Օ՜, հայրենիք, դառն ու անուշ,— վերջապես հասկացավ այդ տղային և ինչ լավ էր, որ այն ժամանակ չընդգծեց այդ տողը։ Սանոյանի պես չգրեց կարմիր թանաքով՝ թեմայի հետ կապ չունի։ Ինչպե՞ս ճանաչել բոլորին, ինչպե՞ս կարդալ նրանց թաքուն մտքերը։ Աշոտ Քանքանյանի շուրջը կարծես լրիվ դատարկություն է գոյացել, վակուում՝ կասեր Դանիելյանը, ոչ ոք չի նկատում նրան, թեպետ ոչ ոք նաև չի նեղացնում․․․ Գուցե հարկավոր է խոսել այդ տղայի հետ, գուցե դեռ ուշ չէ, մի ամիս հետո կավարտի, կգնա, իր հետ ահավոր այդ գաղտնիքը, կխորանա չարության մեջ, քանիքանի մարդու կյանք կթունավորի։ Մի օր էլ, ի՞նչ գիտես, կդառնա մինիստր կամ շրջկոմի առաջին քարտուղար։ Կենդանի փայտոջիլն ավելի վտանգավոր է, քան մեռած Նապոլեոնը,— հիշեց որտեղից որտեղ։ Գուցե նրա մեջ ինչոր առողջ բջիջ կա, գուցե նա հորը համարել է ճշմարտության զինվոր, նահատակ, գուցե նա մեղավո՞ր է զգացել իրեն, որ տղաները խաբեցին բոլորին։ Սկսեք մտաբերել, որ նա խելոք աչքեր ունի, լավ ձեռագիր։ Մամյանը զարմանալի ձևով է ընկալում մարդկանց արատները։ Տեսնելը՝ տեսնում էր, գուցե ուրիշներից ավելի լավ, բայց նույն մարդու մեջ անմիջապես փորձում էր որոնել բարի, նաև ազնիվ գծեր։ Եվ գտնում էր։ Ի՞նչ կա որ, ուրիշներն էլ միայն սև գծեր են տեսնում և ջնջում մնացածը, հարաբերությունը, ի վերջո, նրանց օգտին է՝ հարյուրն ընդդեմ տասի, հինգի, ընդդեմ․․․ մեկի։ Մամյանը չէր վախենում պարտությունից, մանավանդ որ՝ սովորել էր այդ պարտություններին, հիասթափություններին։ Բայց ավելի լավ չէ՞, որ տասից ինը քեզ խաբեն, բայց չկասկածես բոլոր տասին, մեկը, չէ՞ որ մեկը, այնուամենայնիվ, ճշմարիտ է, իսկ դու կարող էիր նրան էլ կասկածել, ուրեմն, նրան էլ կորցնել։ Վանունու հետ ունեցած վերջին զրույցը նոր հարցականներ ծնեց, ավելի

խճճեց Մամյանի վիճակը, կասկած չկա․ նա կսկսի խնդրել, որ Մամյանը բարեխոսի իր համար, օգնի, որ վաստակավորի կոչումն արագացնեն, որ դպրոցի թերությունները չնկատեն։ Ինչպես բացատրի իր և Ռուբենի իրական հարաբերությունը։ Կհավատա՞։ Չէ, գնալ է պետք այս դպրոցից։ Սուր մի ծակոց զգաց ներսում․ արդեն քանի անգամ այսպես հաստատ որոշում է առհասարակ թողնել դպրոցը և հետո համոզվում, որ չի կարող ապրել առանց դպրոցի, առանց այս խենթ, անհասկանալի ու սանձարձակ պատանիների։ Մարին սառը և կռվարար ընդունեց իրեն, զրույցը համարյա չստացվեց, ասաց, որ կարևոր նյութեր ունի տպելու․․․ Երեկ գիշեր Սոնային գրեց երրորդ նամակը, որ, իհարկե, դարձյալ կմնա իր թղթերի մեջ։ Սոնայի հետ տարօրինակ բաներ են կատարվում․․․

Մինիստրության պատմաբանը այս անգամ խոսում էր հարազատի պես․ «Լսիր, Սահակ, չես երևում, անպայման գո՞րծ պիտի ունենաս, որ գաս մեր կողմերը։ Էն օրն էլ մինիստրն էր հարցնում»։ «Ո՞ւմ, ի՞նձ էր հարցնում»։ «Քեզ։ Առողջությունդ ո՞նց է, աղջիկդ ո՞ր դասարան է փոխադրվում»։ «Աղջիկս՝ իններորդ»։ «Օրիորդ է դառնում, էլի, ծերացանք․․․»։ «Ես արդեն երեք թոռ ունեմ»։ «Իմ աղջիկն ավարտում է դպրոցը, լսիր, պատկերացնո՞ւմ ես, սիրահարված է։ Մի ամիս առաջ իրենց դպրոցում էի, ինչոր երեկո էր, իրենք բանավեճ են ասում, աղջիկս ինձ հարց է տալիս։ Աղջիկս, պատկերացնում ես, ինձ հարց է տալիս»։ «Ի՞նչ հարցրեց»։ «Կշշմես, հարցնում է, թե հնարավո՞ր է, որ աղջիկն առաջինը սեր խոստովանի տղային․․․»։ «Սիրահարվել է»։ «Տանը հարցնում եմ, այ ախչի, էդ ի՞նչ հարց էր, որ դու տվիր։ Ասում է՝ ես քեզ իբրև մանկավարժի հարցրի և ոչ թե իբրև հոր։ Տանը ես քեզ այդպիսի հարց չեմ տա։ Հասկացա՞ր․․․»։ «Վերականգնեցինք, բայց այդ տղան վայ թե էլի թռչի Ավստրալիա»։ «Լավ չի չինի, ասենք, մեզ ի՞նչ կա»։ «Իսկ Մամյանն ասում է՝ մենք բոլորս պատասխանատու ենք նրա գնալու համար»։ «Մամյա՞նը, հայ գրականության ուսուցի՞չը։ Լսիր, երեկ մինիստրը գովում էր նրան։ Կարգի՞ն ուսուցիչ է»։ «Որ գովում էր, ուրեմն լավ ուսուցիչ է, դու ինձնից լավ գիտես»։ «Չէ, բան չեմ ասում։ Լսիր, ասում եմ, քանի մինիստրի տրամադրությունը լավ է, տանեմ բնութագիրդ ստորագրի, հը՞․․․»։ «Չգիտեմ, կարող եմ էն աշխարհը գնալ նաև առանց վաստակավորի կոչման, թեպետ․․․ Իսկ Մամյանը լավ ուսուցիչ է, առիթ որ լինի, իմ կարծիքն էլ հասցրու մինիստրին»։

Սոնա Միքայելյանի մեջ, իրոք, տարօրինակ երկրաշարժ էր սկսվել։ Նա հանկարծ սկսել էր հասկանալ, որ դպրոցը տարիների ընթացքում ներծծվել է իր մեջ, դառել է իր ողջ կյանքը, իր կենցաղը, կախարդական մի շրջան, որից չի կարողանում

դուրս գալ։ Դասեր, փորձեր, երեկոներ, ելույթներ՝ զանազան խորհրդակցություններում, ժողովներում։ Եթե անգամ ամենասիրելի էակը՝ մայրդ, սիրածդ տղամարդը, զավակդ անգամ՝ դառնում է քո ողջ կյանքը, դա սարսափելի է, և դու մի օր անպայման կկորցնես նրանց։ Ամեն օր դպրոց մտնելը նրա համար դարձել էր խոհանոց մտնելու պես մի բան։ Այնինչ դպրոց մտնելը տաճար մտնել է։ Ամեն օր։ Տաճարո՞ւմ... Ամեն օր այնտեղ ապրել հինգ-վեց ժամ և չկորցնե՞լ տաճարի զգացողությունը։ Նա հասկացավ, որ դպրոցը իր համար համարյա խոհանոց է դարձել, կրկնվող առօրյա, նույն դասերը, նույն երեկույթները, նույն ժողովները՝ մտքերի, զգացումների, արարքների մի իսկական հարահոս։ Բայց չէ՞ որ նրանք մարդ են ձևավորում, բնավորություններ, ապագա։ Հարահոսը կարող է մեքենա հավաքել՝ մաս առ մաս, պտուտակ առ պտուտակ, իսկ մարդը... Նա ցավով հասկացավ, որ վարժվել է այդ հարահոսին, դարձել է նրա մի օղակը, և դրա համար է զրգռվում, երբ որևէ դեպք, որևէ բնավորություն հակասում է սովոր ընթացքին, խառնում հաշիվները։ Սա հասկացավ նաև, որ ինքը համարյա զրկվել է անձնական կյանքից և դրանով աղքատացել է իբրև... ուսուցիչ։ Մամյանը տխրում է ու զարմանում, հրճվում է ու տառապում, նա ամեն օր դպրոց է մտնում՝ կարծես առաջին անգամ... Մամյանը, ախ, այդ Մամյանը. «Ես նրանց կստիպեմ սիրել Տերյանին,— ասաց մի օր,— ոչ թե յուրացնել «Տերյան» թեման, այլ սիրել, այո, այո»։ Ես նրանց կստիպեմ՝ դա առաջին պինդ նախադասությունն էր, որ Սոնան լսեց նրանից, թեպետ անմիջապես էլ մեղմացավ. «Նրանք կսիրեն, նրանք չեն կարող չսիրել Տերյան...»։

Սոնան սկսեց զանգահարել իր հին ընկերուհիներին, համարյա ամեն երեկո թատրոն կամ համերգ էր գնում, սկսեց կարդալ, իր համար կարդալ, ոչ թե ելույթի կամ երեկոյի։ Տարրալուծվում եմ, մտածեց նա մի օր, բայց առանց տխրության, նրա էության բոլոր մոլեկուլներն արթնացել էին, ուշադրություն էին պահանջում։ Եվ նա տրվեց տարերքին, աշխատեց մոռանալ դպրոցը՝ իր ժխորով, իր հոգսերով։ Մայրն ուրախացել էր, «Վերջապես, վերջապես հիշեցիր, որ կին ես»։ Կի՞ն, չէ, մայրիկ, ում պիտի հետաքրքրի երեսունվեց տարեկան չամուսնացած աղջիկը։ Եթե ամուսնացած-բաժանված լիներ, գուցե... Խուսափում էր Մամյանից, բայց շարունակում էր, իր մեջ՝ ամեն օր շարունակում էր զրուցել, վիճել, կռվել նրա հետ։ Տասներորդ «բ» դասարանը հիմա ընդգծված հարգանքով է իրեն բարևում, լավ է, որ Ռուբեն Սաֆարյանը չմերժեց, ընդունեց երեխաներին, և Արմենն էլ դպրոց կվերադառնա։

Նա իրեն պարտավոր համարեց այդ անելու, որովհետև, եթե ինքը պատահաբար չբացեր դասարանի դուռը, երևի այդ դեպքը այդպես էլ լուռ, աննկատ

անցներ: Խաղ էր, հիմար, երեխայական խաղ, նրանք ամենքը զառանցում են ժամանակակից երևալու ցավով, թեպետ այդ դեպքը նաև շատ ուրիշ մութ անկյուններ լուսավորեց․ Մարիի կյանքը, Արմենի արտասահման գնալը, Աշոտ Քանքանյանի էությունը:

— Սոնա՞,— Մամյանն էր,— հույս անեմ, չես շտապում, միասին գնանք, այսօր իմ ծննդյան օրն է, կուզենայի երկուսով լինեինք:

Մամյանը ամեն ինչ ասաց իրար հետևից, նույն նախադասության մեջ և շփոթված նայեց Սոնային:

— Գնանք, Վահան:

Սոնան պատասխանեց նույնպես միանգամից, բնազդական վախը հուշեց, որ եթե երկարացնի, երևի հազար ու մի պատճառ արթնանա և սառը կասի․ «Ներես, Վահան, չեմ կարող»: Նա հանկարծ ինքն իրեն խոստավանեց, չէր ուզում, բայց խոստովանեց, որ այս մարդը շատ մտերիմ է դարձել իրեն և այդ ճշմարտության դեմ ինքն անուժ է արդեն: Եվ, որ զարմանալի է, ինքն ուզում է անուժ լինել: Գուցե այստեղի՞ց է սկսվում կինը, ինչ-որ մեկի առաջ անուժ լինելու պահանջից:

— Ի՞նչ հաճույք՝ շամպայն խմել քիմիական մի կնոջ հետ:

— Իմ ամենասիրած առարկան դպրոցում քիմիան է եղել․․․

— Կոմպլիմենտ անելու անսովոր ես, Վահան, հարկավոր չէ, մանավանդ, մի անգամ ասել ես, որ քիմիայից միշտ «երկուս» ես ստացել:

— Կյանքն ինձ միշտ երկուս է դրել իմ սիրած բաներից: Ես ում և ինչ սիրել եմ, նրանք չեն սիրել ինձ:

— Ուրեմն, ես քեզ գերազանց կդնեմ, որովհետև ինձ․․․ չես սիրում:

— Քիմիայում բացառություններ չե՞ն լինում:

— Չգիտեմ, Վահան, գուցեև․․․ լինում են:

Երկու շիշ շամպայն խմեցին, Մամյանը բանաստեղծություններ կարդաց, երաժշտություն լսեցին։ Չկարողացավ ոչ նամակները տալ, ոչ որևէ բառ ասել։ Ուղեկցեց մինչև տուն, տխուր նայեց նրա հետևից, կանգնեց-սպասեց այնքան, մինչև հինգերորդ հարկում մարեց Սոնայի ոտնաձայնը։ Հետո բացվեց և փակվեց դուռը։ Մտամոլոր վերադարձավ տուն, սկսեց գրել չորրորդ նամակը։

— Իմացա՞ր,— դավադիր փսփսաց Դանիելյանը,— Խաչիկ Քանքանյանը դիմում է տվել ազատվելու, Տիգրանյանն ասել է՝ կմտածենք։ Զարմանալի է, այդպես հե՞շտ թողեց դիրքերը։

Մամյանը մեծ ճիգով կարողացավ իսկապես զարմանալ.

— Մի՞թե։

Անգամ Դանիելյանին նա չէր ասել Տիգրանյանի հայտնած ահավոր գաղտնիքը և հանկարծ ցավով մտածեց նույնիսկ Խաչիկ Քանքանյանի մասին։

Դատարկ տուն

Արմենի դպրոց վերադառնալը 10րդ «բ» դասարանում իսկական տոնի վերածվեց, բոլոր աղջիկները, իրարից հերթը խլելով, համբուրվեցին նրա հետ։

— Ես էլ եմ ուզում, որ ինձ հեռացնեն,— սրամտեց Սմբատը։

Բայց Արմենը տխուր էր։ Սրտից ծանր մի կշռաքար էր կախված, և ընկերներին նայում էր ասես հեռացող գնացքի պատուհանից։ Հարցականներ, անողոք հարցականներ, և նրանց մագիլների մեջ իրեն պատեպատ խփող տասնյոթ տարեկան մի տղա։ Ղժվար կռիվ. ո՞վ է հաղթելու։

Հեռախոսի զանգը, որ գիշերվա լռության մեջ փոքրինչ տագնապալի թվաց, նրան հանեց ինչ-որ քաղցր թմբիրից։

— Լսում եմ։

— Վահա՞ն: Չարթնացրի՞:

— Ո՞վ է: Չէ, քնած չեմ: Ո՞վ է:

— Ձայնս էլ արդեն չես տարբերում: Ռուբենն է:

— Ռուբե՞ն... Հա, չէի կարող երևակայել, թե դու կզանգահարես:

— Ես եմ: Լսիր, աշակերտներդ քեզ շատ են սիրում: Գիտես, չէ՞, որ ինձ մոտ էին եկել:

— Գիտեմ, բայց սիրելն ինձ համար նորություն է, նրանք ինձ առայժմ հետախուզում են, իրար մեջ, կարծեմ, ձեռ առնում և ամեն դասի մի խենթություն անում:

— Մի կոտրատվիր: Այ տղա, դու ի՞նչ ես անում, որ քեզ սիրում են:

— Հեքիաթներ եմ պատմում:

— Ի՞նչ, հեքիաթնե՞ր: Սա հեքիաթներով կերակրվող սերունդ չէ, սրանց կծու-թթու-սուր ուտելիք է հարկավոր:

— Ես հեքիաթներ եմ պատմում, Ռուբեն, նաև իմ ու քո կյանքի հեքիաթներից, որ դու վաղուց մոռացել ես կամ կմոռանաս: Ես նույնիսկ պատմեցի, թե ինչպես եմ սիրահարվել: Հիշում ես, չէ՞, Գայանեին: Ոչ նա ամուսնացավ, ոչ ես, ինձ թվում էր՝ նա մեր Արմենին էր սիրում, իսկ նրան... Չգիտեմ: Ահա այսպիսի հեքիաթներ եմ պատմում: Մի անգամ միայն աշակերտներից մեկը սրամտեց. «Ձեր կյանքը հեքիաթների դասագի՞րք է»,— ասաց:

— Լավ է ասել:

— Հեքիաթները դասագրքի լավագույն տեսակն են, ինձ համար, գոնե: Մի մոռանա մեր հեքիաթները, Ռուբեն:

— Ակնարկում ես, որ չընդունեցի այն օրը: Աիավոր զբաղված էի, հետո էլ անսպասելիորեն վերև կանչեցին: Ինչո՞ւ զանգ չտվիր, խնդրել էի, չէ՞․․․

— Ինձ ոչինչ, ես ինչ որ պետք էր՝ մտքիս մեջ ասացի քեզ ու գնացի, Նվարդ Պարոնյանին չես ընդունել, դրա համար քեզ կախելը քիչ է:

— Ես հանձնարարել էի, որ լսեն նրան, բայց ոչինչ չէր ասել: Չգիտե՞ս, թե ինչ հարցով էր եկել:

— Նա իր աշակերտին էր ուզեցել տեսնել, իսկ աշակերտը գործերի կառավարիչ չի ունենում, Ռուբեն:

— Լավ, լավ, ես նորից կկանչեմ:

— Կկանչեմ, հանձնարարեցի․․․ Ինչ բառեր ես սովորել: Աշակերտը հանձնարարում է, որ կանչեն, իր մոտ բերեն ո՞ւմ — իր ուսուցչին — սքանչելի է:

— Ձեզ համար հեշտ է, ազատ, ձեր գլխի տեր մարդ եք:

— Թող պաշտոնդ, դու էլ դարձիր ազատ, քո գլխի տեր մարդ: Գիտե՞ս, ինչ հիշեցի — ասում են մի բարձր պաշտոնյա, երևի ձերոնցից մեկը, գնում է իրենց գյուղ ու հենց այնպես արքայավայել զրույց է անում համագյուղացիների հետ․ «Ո՞նց ես, Օհան քեռի»,— հարցնում է: «Լավ եմ, շատ լավ եմ, դու ո՞նց ես»: «Ես, ես ոչինչ, Օհան քեռի»: «Չի լինի՝ այդ քո ոչինչը տաս ինձ, իմ շատ լավը դու վերցնես»,— ասում է Օհան քեռին:

— Ի՞նչ ես ակնարկում:

— Մի ծռմռվիր: Էն գլխից ուրիշներին հրամայելը քեզ դուր էր գալիս: Գիտե՞ս դասարանում ինչ պատմեցի:

— Ի՞նչ:

— Հիշո՞ւմ ես, որ բերեցիր «Մանոն Լեսկո»-ն, գիշերով, ռազմագիտության կաբինետում կարդացինք․․․

— Հիշում եմ: Եվ ի՞նչ, ի՞նչ ասացին:

— Ոչինչ: Լռեցին: Երևի սկսեցին մտածել: Ես նրանց չեմ հարցնում, թե ինչ են մտածում: Ես ուզում եմ, որ նրանք իրենց հեքիաթներն ունենան:

Ռուբենը բավական երկար լռեց: Վահանը կուզենար այդ պահին տեսնել նրա դեմքը, նայել աչքերին:

— Ես քեզ խնդրում եմ, Ռուբեն, ինքդ գնա մեր դպրոց, հանդիպիր Նվարդ Պարոնյանին, բոլորի ներկայությամբ ասա, որ քո ուսուցչուհին է եղել:

Ռուբենը չպատասխանեց: Գուցե դրե՞լ է խոսափողը:

— Ռուբե՞ն:

— Լսում եմ, չեմ խլացել:

— Մի խոսքով, ուրախ եմ, որ զանգահարեցիր:

— Հանդիպենք մի անգամ, թեկուզ այս քանի օրը:

— Մանուկին ասա, մեզ կհավաքի...

— Էդ հիմարն էլ դիմում տվեց-գնաց:

— Ափսոս: Լավ է արել: Բարի գիշեր, Ռուբեն:

— Բարի գիշեր: Երևա:

— Ինձ կարող ես կանչել: Իրավունք ունես: Կհանձնարարես-կկանչեն: Մի բան եմ խնդրում, մի վարժվիր քո իրավունքներին: Այսօրվա իրավունքներիդ: Գոնե քո ներսում քմծիծաղ տուր պաշտոնիդ վրա: Այսօր, երբ այդ աթոռին ես, մի համարիր, որ դու ես ամենաարժանավորը: Հետո, երբ չես լինի այդ աթոռին, դժվար կլինի... Քեզ համար դժվար կլինի:

— Բոլորը խորհուրդ տվող են։

— Քեզ տալու ուրիշ բան չունեմ, Ռուբեն։ Մանավանդ, որ խորհուրդները չեն մաշվում, որովհետև խորհուրդները լսում ենք, վերցնում ու․․․ չենք գործածում։ Իսկ մեր ուսուցչուհու մոտ՝ գնա։ Չհամարձակվես նրան կանչել։ Լսո՞ւմ ես, չհամարձակվես։

— Ասում ես պատմեցիր, թե ոնց կարդացինք «Մանոն Լեսկո»։ Չծիծաղեցի՞ն։

— Չէ, Ռուբեն, սուսուփուս վեր կացան, գնացին տուն։

Դրեց լսափողը։ Վախեցավ, որ ներսում կարծրացած դառնությունը կհալվի, հանկարծ նրանց մեջ կգոյանա քաղցր մի սուտ, որին կհավատա։ Իսկ գուցե սխա՞լ արեց, գուցե Ռուբենի աշխարհը փափկել էր այս կեսգիշերին և պատրաստ էր ինչոր ազդանշաններ ընդունելու։ Ետ մղեց այդ տեսիլքը․ նա առավոտյան կարթնանա սովորականի պես, սովորականի պես կգնա գործի և անպայման ժամանակ չի ունենա գտնելու իրենց հին ուսուցչուհուն։

Նամակը շարունակեց․ «Սիրելի Սոնա․․․»։

— Վերջապես,— տուն մտնելով ասաց Համբարձում Գարասեֆերյանը,— ամեն ինչ, փառք երկնավորին, բարեհաջող վերջացավ։— Նա թղթապանակից հանեց և հանդիսավոր սեղանին դրեց թղթերը՝ երանելի թղթերը։

Ճաշասեղանը դեռ չէին վաճառել։ Պայմանավորվել էին, գինը խոսել էին, տանելու էին իրենց մեկնելու նախորդ օրը, եթե մեկնեին․․․ Ուրեմն, մեկնում են։ Նարինեն արագ, վերցրեց, սկսեց կարդալ փաստաթղթերը, մայրը խաչակնքեց, միայն Արմենը մռայլ մնաց իր տեղում՝ հեռուստացույցի առաջ։

— Փառք երկնավորին, կարգին մարդիկ այստեղ էլ կան,— համբարձում Գարասեֆերյանը խոսում էր ինքն իրեն,– սուրճ պատրաստիր, տիկին, խմելու բան բեր․․․

— Որ հայրենիքից փախչե՞լը շնորհավորենք,— մռայլ ասաց Արմենը,— գոնե զսպիր քեզ, հայրենասեր մշեցու զավակ:

— Զսպել եմ, որդիս: Շատ եմ խեղդվել: Այսօր իմ օրն է:

— Սև օրը:

— Կարծում ես ես չե՞մ տխրում, որ պիտի Հայաստանը թողնենք, կարծում ես ինձ համար խաղուպա՞ր է:

Չորս աթոռ ևս դեռ չէին վաճառել, ով սեղանն էր վերցնելու, նա էլ կտաներ աթոռները: Կոմիտասի նկարը կտանեն իրենց հետ, կկախեն Սիդնեյի իրենց հյուրասենյակում: Կնայեն, կհառաչեն:

Ամբողջ օրը Արմենը թափառել էր Երևանում: Հրաժե՞շտ էր տալիս, թե՞ ուզում էր նորից հասկանալ, թե ինչ է թողնում: Գնաց նաև Պանթեոն, նստեց Կոմիտասի գերեզմանի մոտ: Մանկապարտեզում գտավ իր դաստիարակչուհուն․ շատ ուրախացավ տիկին Արփենիկը: Իջավ Զանգվի ձորը, մանկական երեկաթուղի․ ինքը բավական ծիծաղելի էր երեխաների ժխորի մեջ: Երկու անգամ գնացքը գնաց-վերադարձավ: Գնաց-վերադարձավ: Եթե կյանքում ամեն բան այսպես գնար՝ վերադառնար: Մտավ սուրբ Սարգիս եկեղեցին: Հարս ու փեսան կանգնել էին վարդապետի առաջ, հարսի հագին ջինս էր, փեսան ծամոն էր ծամում: Ինչո՞ւ նկատեց: Ծիծեռնակաբերդ չգնաց, դժվար թե դիմանար: Հետո նորից թափառեց, մտավ հազար ու մի փողոց, բարձրացավ Նորքի ոլորապտույտ ճանապարհով, նայեց, երկար նայեց Երևանին: Ոչ ոք չկանչեց իրեն կամ Նարինեին, չհարցրեց, ուզո՞ւմ եք թողնել Հայրենիքը: Ամեն ինչ որոշեց հայրը: Ինչո՞ւ չկանչեցին, հայրը իր ծննդավայրը չէ, որ թողնում է, ինքը ոչ միայն Հայրենիք, ծննդավայր է թողնում: Չկանչեցին, չհարցրին: Մի շաբաթ հետո դպրոցում կսկսվեն քննությունները, իսկ երեկ Մամյանը տարօրինակ շարադրության էր տվել՝ նկարագրեք ձեր հարազատի կամ մոտիկ մարդու մահը, նկարագրեք վերջալույսը, որ արևի մահն է․․․ Սմբատը գրել էր, որ քեռու թաղմանն էլ ինքը լաց չի եղել, որովհետև հասկանումմ է՝ եթե մարդ ծնվել է, ուրեմն, նաև պիտի մեռնի, մանավանդ, որ քեռին երեք տարի շարունակ անբուժելի հիվանդ էր: «Տխուր մարդ ես, Սմբատ,— ասաց Մամյանը,— ջահել, տաք սրտիդ մեջ որտեղի՞ց այդքան սառույց»: Աբովյան փողոցի վրա քիչ էր մնում ընկներ մեքենայի տակ, ինքն էր մեղավոր: Միլիցիոները բավական կոպիտ քարոզ կարդաց, հետո տուգանեց երեք

ռուբլի: Անխոս տվեց տուգանքը, ոչ մի բառով չարձագանքեց ոչ վարորդի հայհոյանքին, ոչ միլիցիոների բարկությանը: Մոլորված, վերացած շարունակեց թափառել:

— Խմենք,— ասաց հայրը,— բաժակդ վերցրու, Արմեն:

— Ես չեմ խմում: Գնացողները թող խմեն:

— Դու, ի՞նչ է . . .

— Գնացողները թող խմեն:

Մոր ձեռքից վայր ընկավ սուրճի բաժակը: Նարինեն ետ դրեց կոնյակի գավաթը, որ այն է, մոտեցնում էր շուրթերին: Հայրը գունատվեց:

— Որդիս, մենք ինչպե՞ս կարող ենք առանց քեզ . . .

— Ես ինչպե՞ս կարող եմ առանց Հայաստանի, մտածե՞լ ես:

Արմենը խոսում էր հանգիստ, համարյա կիսաձայն:

— Հայտստանը ո՞վ է խլում քեզնից: Կգաս ամեն տարի, ես խոստանում եմ:

<< երկու պակասող էջ >>

Կհանձնի ցրականության քննությունից հետո: Ամենա դժվարը Աշոտ Քանքանյանին ուղղված նամակն էր . «Սիրելի Աշոտ, ես գիտեմ, որ դու հավատում ես քո հորը: Դա այդպես էլ պիտի լինի, հավատացել ես, որ հայրդ անարդարության զոհ է, որ նա կռվում է ճշմարտության համար և, որովհետև ուղիղ ճանապարհ չկա (հայրդ է կրկնել ամեն օր), ինքը ստիպված է եղել գնալ ոլոր-մոլոր կածաններով: Ես մի ընկեր ունեմ, Մանուկը, պատմել եմ, եթե չես մոռացել, նա ասում է, որ իրեն պետք չէ ճշմարտություն՝ առհասարակ: Հիմա դժվար չէ ճիշտ բաներ ասել, օդը լիքն է ճշմարտությամբ: Ո՞վ է ասում այդ ճշմարտությունը,— Մանուկի համար կարևորը սա է: Հին հնդիկներն ավելի իմաստուն էին . «Ճշմարտությունը,— ասում էին նրանք,— լամպի լույսի է նման . նրա տակ մեկը սուրբ գիրք է կարդում, մյուսը կեղծում է ուրիշի ստորագրությունը»: Ոչ, ես ուրիշ բան չեմ ակնարկում . կատարվածի մասին գիտի

չորս մարդ և, ինձ թվում է, հինգերորդը երբեք չի իմանա: Ես արդեն մոռացել եմ, ինձ թվում է՝ նա էլ, որի պաշտոնը դու «երազում էիր»: Չեք մոռանա դու և հայրդ: Կուզենայի, որ հատկապես դու չմոռանայիր: Իսկ այս նամակը կարող ես կարդալ և պատռել անմիջապես: Ես գիտեմ, որ կյանքում ահավոր բաներ կան, բայց այդ ամենի դեմ կարելի է կռվել միայն մաքուր ձեռքերով: Քեզ ցանկանում եմ մի քանի անքուն, անողոք գիշեր, որպեսզի մենակության մեջ ինքդ քննես քո կյա նքը: Տասնյոթ տարի․ երկար չէ, բայց կարճ էլ չէ: Ոչ ոք երկրորդ անգամ տասնյոթ տարեկան չի լինում: Իսկ առհասարակ, դու լավ տղա ես և ինչ էլ ուզում է անես, մեկ է՝ տասնյոթ տարեկան ես»:

Նայեց լիքը մոխրամանին, սեղմեց լուսամփոփի կոճակը:

Մութը աշխարհը խլում է մարդուց, բայց նրան վերադարձնում է ինքն իրեն: Այս նամակները ինչո՞ւ գրվեցին․ մի քանիսը երևի կծիծաղեն, կզարմանան: Ո՞վ գիտի:

Հիշեց, որ Մարիին նամակ չի գրել: Նորից վառեց լույսը, իսկ սիգարետ այլևս չկար: Փակեց աչքերը, որ աշխարհը նորից մթնի: Եվ հանկարծ տեսավ մորը, որ եկավ-նստեց իր կողքին, սկսեց շոյել նրա ճերմակող մազերը․ «Քնիր, Վահան, հանգստացիր, մեղք ես»:

Խարույկ

Երկուշաբթի օրը առաջին քննությանն էր, իսկ շաբաթ օրը ամբողջ դասարանը եկել էր օդանավակայան: Թռիչքին քառասուն րոպե էր մնացել: Ահա վագոնիկի վրա գնացին, ինքնաթիռին հասան Արմենենց փայտե մեծ ճամպրուկները, Համբարձում Գարասեֆերյանը մաքսատանն ինչ-որ անվերջանալի թղթեր է ստորագրում, Նարինեն զբաղված է ընկերուհիներով: Տղաները փորձում են կատակել:

— Հենց հասար, կենգուրու կուղարկես,է որ հետներս տանենք քննության, թղթերը կդնենք պարկի մեջ, կհանենք՝ կարտագրենք:

— Սինգապուրից հեռագիր կտաս:

— Ջինսս, ջինսս, չմոռանաս, Արմեն:

— Մեզ չմոռանաս:

Վերջին րոպեներին վրա հասավ Մարին: Նա մեծացած թվաց․ երեկոյան դպրոցում կարելի էր ներկել մազերը, բարձրակրունկ հագնել, մանիկյուր անել: Նա յասաման էր բերել:

— Ե՞րբ եք հասնելու, Արմեն:

— Երևանից Մոսկվա՝ երեք ժամ:— Վահանը սկսեց հաշվել:— Մոսկվայից Բոմբեյ՝ հինգ ժամ, Բոմբեից Սինգապուր՝ վեց ժամ: Սինգապուրից Սիդնեյ՝ էլի վեց ժամ: Մոտավորապես, քսան ժամ: Եթե եղանակ լինի․․․

— Երանի եղանակ չլիներ,— հառաչեց Լուսիկը:

Արմենը չէր խոսում, դիմագծերը սրված էին, հայացքը անընդհատ հեռավոր մի կետի: Ձեռքին մի թեթև ճամպրուկ կար, չհանձնեց մյուս իրերի հետ: «Մի քանի գիրք է և իմ ժապավենները»,— ասաց:

Մոտեցան հայրը, մայրը, Նարինեն:

— Դե, Արմեն, հրաժեշտ տուր ընկերներիդ,— հայրը կոտրված նայեց դասարանին,— լավ ընկերներ ունես:

Բոլորը մեկմեկ համբուրեցին Արմենին, հետո Արմենը կորավ նրանց ձեռքերի մեջ: Լուսիկը թաքուն սրբում էր աչքերը, Վահանը սիգարետ վառեց: Ամենքը, գերագույն լարումով, աշխատում էին զուսպ և հանգիստ երևալ, այդպես էին պայմանավորվել: Գնում է, ուրեմն, պիտի գնա: Արմենի մայրը գունատ էր, հիվանդության նշանները դեռ երևում էին․ նրա մեջ հաշտված մի տխրություն կար, նա կարծես իրենց ճամպրուկներից մեկն էր․ կտանեն, ուր ուզում են:

— Գնանք, Արմեն:

— Գնա, Արմեն,— ասաց Վահանը,— գրիր, անպայման կհանդիպենք: 10րդ «բ»-ի անունը Սիդնեյում գետնովը չտաս:

— Գնա, Արմեն։

— Գնա։

Չորս մարդ անջատվեցին խմբից, և երկուսը շտապով, երկուսը՝ դանդաղ քայլեցին պեպի ինքնաթիռը։ Աղջիկներն արդեն կարող էին լաց լինել, տղաները՝ ծխել։

Ահա չորսը հասան ինքնաթիռին, հերթապահը ստուգեց տոմսերը, հետո նրանք բարձրացան աստիճաններով։ Արմենը ինքնաթիռ մտնելուց առաջ ետ շրջվեց։ Ձեռքո՞վ արեց, ինչոր բա՞ն ասաց։ Երևի։ Հետո նրանց կուլ տվեց ինքնաթիռը։

— Շոգ է։

— Շոգը երկուշաբթի կլինի։

— Գոնե թեման իմանայինք։

— Արտագրել, մեկ է, չի լինի։ Մամյանը կհասկանա։

— Նա ինքնուրույն մտքեր է որոնելու, իսկ ո՞վ իր ինքնուրույն մտքերը կտա, որ արտագրես։

— Արմենը լավ շարադրություններ ուներ, պիտի վերցնեինք։

— Այստեղից գնանք մի տեղ, խմենք։ Ո՞վ ինչքա՞ն ունի։

Ինքնաթիռի դուռը փակվեց։

Տրապն են անջատում։

Քիչ հետո ինքնաթիռն օդ կբարձրանա, մի հինգ–տասը րոպե կմնա Հայաստանի երկնքում և կտանի, ո՞ւր կտանի Արմենին։ Նորից կտեսնվե՞ն։ Վախենում էին հարցերից, բայց հարցերը աղմկում էին նրանց մեջ, հարցերը ելք ու պատասխան էին ուզում։

— Տրապը նորից մոտեցավ ինքնաթիռին,— հանկարծ նկատեց Մարին,— տեսեք, դուռը բացվեց, մեկը դուրս է գալիս։

— Արմենն է,— ճչաց Լուսիկը։

Հետո ճչացին մյուսները։

Արմենը կանգնած էր աստիճանների վրա, իր փոքրիկ ճամպրուկը ձեռքին, և տրապը դանդաղ մոտենում էր։ Ինքնաթիռի դուռը նորից փակվեց, շարժիչները սկսեցին աշխատել։ Ի՞նչ կատարվեց։ Մի՞թե Արմենը․․․ Եվ հանկարծ ողջ դասարանը գրոհեց թռիչքի հրապարակ։

— Ո՞ւր, ո՞ւր,— ճչաց հերթապահը։

Ուշ էր։

Նրանք վազում էին դեպի Արմենը։

Արմենը իջավ աստիճաններից, վազեց դեպի ընկերները։

Հանդիպեցին կարծես տասը տարվա բաժանումից հետո։ Աղջիկները ծիծաղում էին արցունքների միջից, տղաները չգիտեին ինչ անել։ Ամենքն ուզում էին դիպչել, ձեռք տալ Արմենին, օդանավակայանի հերթապահը մոլորված կանգնել էր նրանց կողքին։

— Չի կարելի, տղաներ, չի կարելի, աղջիկներ։

— Կարելի է, մորաքույր,— գոռաց Լուսիկը,— կարելի է, ամեն ինչ կարելի է։

— Հարցեր չտաք,— ասաց Արմենը։— Գնանք, շուտ գնանք։

— Ես գիտեի, որ դու չես գնալու,— ասաց Վահանը։

— Ես չգիտեի։— Արմենը անհնարին հարազատությամբ նայեց բոլորին,– հարցեր չտաք, լա՞վ․․․

Քննությունից հետո Մամյանը բաժանեց իր նամակները:

— Կկարդաք: Ոչ հիմա: Իսկ երեկոյան գնալու ենք Զանգվի ձոր: Համաձա՞յն եք: Անպայման կգաս, Աշոտ:

— Չգիտեմ,— ասաց Աշոտը,— պիտի պարապեմ:

— Կգաս:

. . . Նրանք նստեցին բարձր քարաժայռին, և Մամյանն ասաց, որ նույն այս ժայռի վրա երեսուն տարի առաջ իրենք հավաքվել էին տղաներով և այրել իրենց սիրած աղջիկների անունները: «Մենք վախենում էինք, որ կարող ենք երկուսով մի աղջկա սիրել և կկորցնենք մեր ընկերությունը: Երեխայություն էր, իհարկե, այդպես մենք կորցրինք մեր աղջիկներին: Հետո եղավ, որ իրար էլ կորցրինք, բայց երևի մի մեծ բան գտանք»:

— Դարձաք տաճարի քարեր,— մտախոհ ասաց Վահանը:

— Գուցե:— Մամյանը մի պահ անցյալ պատկերների հետ էր՝ մի՞թե երեսուն տարին անցավ. . . Հետո սթափվեց:— Դե, տվեք ձեր թղթերը:

Տվեցին: Քննությունից հետո Մամյանն ասաց, որ ամեն մեկը մի թղթի վրա դրի, թե ինչ դառնություն ունի իր ընկերներից, ուսուցիչներից: Գրի անկեղծ, չխնայի ոչ ուրիշի, ոչ իրեն:

Այդ թղթերն էին:

Մամյանը հավաքեց: Չկարդաց ոչինչ:

— Լուցկի ունե՞ս, Վահան:

— Կա:

Վերցրեց, վառեց լուցկին և բոցը մոտեցրեց թղթերին: Խարույկը տևեց մի քանի վայրկյան:

— Կարողացեք մոռանալ, եթե դառնացրել եք իրար: Համարեք, որ թղթերի հետ այրվեց-վերջացավ, ինչ բաժանել է ձեզ իրարից: Եվ հիշեք այս օրը:

Աշակերտները նայեցին իրար, նայեցին իրենց տասը տարիների վերջին ուսուցչին: Վերջին ուսուցչին: Իսկ ներքևում հոսում էր գետը՝ շատախոս ու իմաստուն:

— Մեծացանք,— հառաչեց Վահանը:

— Լուռ մեծանանք,— ասաց Արմենը,— լուռ, խնդրում եմ:

— Ընկեր Մամյան, մենք բոլորով, ազնիվ խոսք, բոլորով որոշել ենք մնալ նույն դասարանում,— ասաց Լուսիկը:

Վահան Մամյանը զարմացավ.

— Ինչո՞ւ: